



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

PIERRE J. MEJLAK
Dak li l-lejl iħallik tġhid

Novelli

Maqlub mill-Ingliż għall-Armen minn Astghik Atabekyan

PIERRE J. MEJLAK
Having Said Goodnight

Stories

Translation from English into Armenian by Astghik Atabekyan

Vogi-Nairi, Yerevan

Պիեռ Զ. ՄԵՅԼԱԿ

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ ՄԱՂԹԵԼՈՎ

Պատմվածքներ

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Երևան 2024

ՀՏԴ 821.411.216-32 Մեյլակ
ԳՄԴ 84(4Մ)-44
Մ 519

«Գեղարմ» հանդեսի մատենաշար

Պիեռ Ջ. ՄեՅԼԱԿ

Մ 519 **Բարի գիշեր մաղթելով.** պատմվածքներ/ Պիեռ Ջ. Մեյլակ:
Թարգմ.՝ Աստղիկ Աթաբեկյան:– Երևան, «Ոգի-Նաիրի» հրատ., 2024,
152 էջ:

Մայթացի ճանաչված գրող Պ. Մեյլակի վերջին ժողովածուն է, որ արժանացել է Եվրամիության գրական մրցանակին և թարգմանվել 12 լեզուներով: Գրքի հերոսները կյանքի եզրագծին՝ անցյալի ու ապագայի, հանգստի ու տվայտանքի, իրականության ու երևակայության, կենտրոնի ու ծայրամասի միջև գտնվող մարդիկ են: Նրանք անընդհատ տեղաշարժվում են տեղից տեղ՝ փնտրելով իրենց կյանքի իմաստը, որ ապրել են՝ չգիտակցելով այն ամբողջությամբ:

Միջերկրականի ուղղակի սրտից հայտնվել է մի նոր ու գրավիչ հեղինակ, որ սուր դիտողականությամբ՝ հրաշալի արտահայտում է մարդկանց տրամադրությունները և ուրվագծում իր յուրատիպ երկրի առանձին ներքին պատկերներ:

Translation was funded by the National Book Council's
Malta Book Fund 2023



NATIONAL
BOOK
COUNCIL

Թարգմանությունը ֆինանսավորել է
Մայթայի Գրքի ազգային խորհուրդը՝
Գրքի հիմնադրամի միջոցով /2023/

ՀՏԴ 821.411.216-32 Մեյլակ
ԳՄԴ 84(4Մ)-44

ISBN 978-9939-969-87-9

- © Pierre J. Mejlak
- © Antoine Cassar /for English translation/
- © Clare Vassallo /for English translation/
- © «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2024

The book was first published in Malta by Merlin Publishers Ltd.

Մայրիկիս համար

ՆԱԽԱԲԱՆ

Թաղման արարողությունից հետո հրավիրեց մի քանի ընկերների: Ընկերակցության տրամադրություն չունեի, չէ, բայց մտածեց, որ եթե ի՛նքը մեռած լինեի, նա հավանաբար հյուրեր կկանչեր: Սիրում էր արտասահմանյան ավանդույթները: Գուցե հենց այդ պատճառով էլ ամուսնությունից հետո պարբերաբար հրավիրում էր ընկերներին: Ոչ թե երեկոյան պատվիրած պիցցա ուտելու և հեռուստացույց դիտելու, այլ մոխիտո պատրաստելու և իր սիրելի մեղեդիների տակ պարելու: Հենց այդպես էր ուզում անցկացնել տարիները քառասունից հետո. պարելով:

Նրանց ընկերները ցրվել էին տևով մեկ՝ խոհանոցից հյուրասենյակ, ընդհուպ մինչև բիլիարդի սենյակ, ու կինը մտածում էր, թե ամուսինը այդ պահին հավանաբար հետևում է նրանց: Ուրախացել է՝ տեսնելով, որ ընկերները հավաքվել են իր՝ հանկարծ այրիացած կնոջ շուրջը: Բայց քանի որ ուտելիք ու խմիչք կար, կամ գուցե որովհետև նրանց համար այդ տունը ուրախությամբ ու ծիծաղով լի գիշերների խորհրդանիշ էր, մարդիկ շատ արագ մոռացան, թե ինչու են հավաքվել, և զրույցը շեղեցին՝ խոսելով ամերիկուհու մասին, որը քիչ առաջ լույս աշխարհ էր բերել ութնյակի: Կամ բրիգադի հրամանատարի, որն անձրևի տակ սայթաքել-ընկել էր գործը ստուգելիս: Տեսնելով, թե ինչպես է անցնում երեկոն, սիրտն ավելի լցվեց, ու նա վազեց ննջասենյակ, որը հիմա միայն իրենն է: Սկզբում ծնկի իջավ մահճակալի մոտ ու հեկեկաց, բայց աստիճանաբար ցած սահեց ու պառկեց սպիտակ գորգի վրա՝ սաղմի պես կծկված: Հենց այդ դիրքից էլ, աչքերը հատակի մակարդակին, փոքր ու փայլփլուն մի բան նկատեց մահճակալի տակ՝ հեռու անկյունում: Ձեռքը մեկնեց, որ հասնի: Ականջօղ էր, նրբաճաշակ. այդպիսի զարդ ոչ կրել էր, ոչ գնել: Ու որովհետև շատ փոշոտ էր, հանկարծ սկսեց մտածել, որ աղախինը, ամենայն հավանականությամբ, իրեն նեղություն չի տվել մաքրել այդ խորքը:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

Ավելի ուշ, երբ հյու-հնազանդ սեղմեց հյուրերի ձեռքերը, երբ նրանք վերջապես հասկացան ու հեռացան, ականջօղն ամուր սեղմեց ծախ ձեռքում՝ մեջքով մի կերպ հենվելով կողափայտին: Հայացքով ուշադիր գնևում էր բոլոր կանանց ականջները, որոնք հրաժեշտ տալիս համբուրում էին նրան: Ու յուրաքանչյուր ականջ դառնում էր պատմություն, ու այնպե՛ս էր ուզում, որ մեկնումեկը պատմի այն առաջիկա երկարուծիզ գիշերներին, մահճակալի վրա, որը մտադիր չէ բացահայտել և ոչ մի գաղտնիք:

ԱՐԴՈՒԿԻ ԱՏՊԱՆՆ

II-mejda tal-moghhdija

Ժամանակն էր ազատվելու դրանից: Եթե թողներ փողոցում, գուցե մի անցորդ մոտենար ու վերցներ: Տունդարձի ճանապարհին երեկոները երբեմն նկատում էր անկյունում թողած կահույքի կտորներ, որոնք առավոտյան անհետացած էին լինում: Վրան գցեց թեթև վերարկուն, իջավ ու դուրս եկավ շենքից, որ արդուկի սեղանը հենի պատին: Բայց հենց ոտքը մայթին դրեց, աչքն ընկավ ներքևի հարևանին, որը զգուշորեն կայանում էր իր Fiat Panda-ն: Հարևանը ձեռքով արեց: Գրո՛ղը տանի: Հիմա ի՞նչ անի: Եթե հետ գնա, նա կմտածի, թե խելագար է: Ախր ո՞վ է կիրակի երեկոյան ժամը իննիս դուրս գալիս տնից՝ արդուկի սեղանը թևի տակ, որ հետո նորից ներս տանի: Հիմա, երբ հարևանը նկատել էր, պարզ է, չէր կարող ուղղակի հենել պատին ու հեռանալ: Ուստի արագ որոշեց հասնել փողոցի ծայրն ու թողնել այնտեղ: Ի պատասխան ձեռքով արեց հարևանին, որը դեռ փորձում էր կայանել մեքենան, ու շտապ հեռացավ, ասես թևի տակ ոչ թե արդուկի սեղան, այլ գիրք էր տանում:

Ճանապարհի վերջին հասնելով՝ թեքվեց անկյունում, մի քանի մետր քայլեց Դե լա Սորս փողոցն ի վար ու սեղանը հենեց մի անդուռ ու անպատուհան շինության: Ուր որ է պիտի շրջվեր ու վերադառնար տուն, երբ նկատեց, որ ճանապարհի երկայնքով առնվազն տասը բնակարանի պատուհաններում լույս է վառվում, և, ամենայն հավանականությամբ, մեկնումեկը վարագույրի հետևից կտեսնի իրեն: Իսկ եթե մեկն իր քջջային հեռախոսով լուսանկար կամ տեսանյութ անի ու ցույց տա ոստիկանությա՛նը: Ծրագիր հորինեց. կպագի, իբր կոշկաքուղերն է կապում: Այդպես էլ արեց ու միայն այդ ժամանակ գլխի ըկավ, որ կոշկաքուղեր չկան. դուրս էր եկել գիշերազգեստի տաբատով ու հողաթափերով: Ուղղվեց, վերցրեց արդուկի

սեղանն ու շարունակեց ճանապարհով ներքև քայլել՝ դեպի լճակը, որտեղ վերամշակման համար ապակե շշերի մեծ աղբարկղ կար: Երբ կնոջ խելքը դեռ գլխին էր, մի քանի շաբաթը մեկ ուտքով հասնում էին այդտեղ և մեկերկու տոպրակ դատարկում: Կարող էր շատ հասկալիս արդուկի սեղանն էլ այնտեղ թողնել:

Բայց աղբարկղից ոչ հեռու՝ շարքերով սլանում էին մեքենաները. իսկ եթե մեկը պատահաբար ուստիկանական մեքենա՞ լիներ: Ի՞նչ կլիներ այդ դեպքում: Փամփլիկ բաճկոնով մի բարձրահասակ սևամորթ տղամարդ անցավ կողքով՝ գլխով անելով ու ժպտալով: Բարեկամական, սիրալիք ժպիտ չէր, ավելի շուտ՝ քմծիծաղ, որ կհայտնվի դեմքիդ մի ծերուկ խելապակասի տեսնելիս, որը չի էլ հասկացել, թե ինչպես է արդուկի սեղանը թևի տակ դուրս եկել տնից: Այնպե՛ս կուզեր շրջվել ու սեղանը ջարդել տղամարդու գլխին, հետո երկուսին էլ թողնել հենց այդտեղ՝ աղբարկղի կողքին: Փոխարենն ավելի ամուր սեղմեց կրծքին ու շարունակեց քայլել դեպի լճակը:

- Շուտով տեղ կհասնենք,- քթի տակ մոթմոթաց սեղանին:

Չէր հիշում, թե վերջին անգամ երբ էր այդ ճանապարհին զբոսնել կնոջ հետ, ու, չգիտես ինչու, որքան մոտենում էր լճին, այնքան ավելի մոտ էր զգում արդուկի սեղանը: Մի ժամ առաջ, երբ սեղանն ընկել էր վրան, արդուկն էլ այրել ձեռքը, տեսնել անգամ չէր ուզում: Անդամատված ու համը՝ նայում էր նրան, ինչպես կինն էր նայում: Կինը հիմա չկար: Ուստի արդար կլինի, որ արդուկի սեղանն էլ չլինի: Մինչդեռ կարծես վախեցած կառչել էր նրանից, նա էլ սկսեց խղճալ: Ոչ միայն կոտրված էր (մի ուտքը տեղից դուրս էր ընկել), այլև շուտով ընդմիջտ հեռանալու էր կյանքից: Նույն զգացողությունն ուներ, ինչպես մարդը, որ վերջին անգամ, ծանրացած սրտով, անասնաբույժի մոտ քնեցնելու է տանում շանը, որը երկար տարիներ իր կողքին էր եղել:

Ստաճե՞ց մազուցի լճակը եզերող ցածր ցանկապատի վրայով ու ամբողջ ուժով սեղանը նետի ջուրը: Եթե սուզվի, գերազանց: Եթե ոչ, այլևս երբեք չի գա այդ կողմ, որ ստիպված չլինի նորից տեսնել այն: Քայլեց ցանկապատի երկայնքով՝ փնտրելով ամենացածր տեղը. հիշում էր, թե ինչպես էին կիրակի առավոտները կնոջ հետ զբոսնում այնտեղ՝ թերթ, հաց ու ծա-

ղիկներ գնելուց հետո: Խավարի մեջ ինչ-որ բան կրծող մի շուն սկսեց կատաղի հաչել՝ վախեցնելով նրան: Սարսափահար կտրուկ թեքվեց, ինչպես փամփուռտից խույս տվող դերասան, ու սեղանը դիպավ ուղիղ թիկունքում կայանած Peugeot-ի դռանը: Մեքենայի ազդանշանային համակարգն անմիջապես միացավ ու սկսեց արձագանքել լճով մեկ: Բարձր աղմուկից շփոթված՝ քարացավ: Տարօրինակ խուճապով համակված՝ նրան թվաց, թե հենց նոր բանկ է կողոպտել ու հիմա պիտի արագ թաքստոց գտնի, քանի դեռ չեն բռնել: Մի լղարիկ երիտասարդ, որը դանդաղ վազում էր լճի շուրջը, բախվեց նրան, զայրացած կայեց ու ոչ երկիմաստ հայհոյեց: Ծերունին ներողություն փնթփնթաց, ու հիմա արդուկի սեղանը ոչ թե մի թևի տակ էր, այլ երկու թևերին, ինչպես Հիսուսը Սգավոր Աստվածամոր գրկում: Նա կտրեց անցավ փողոցն ու հետ քայլեց դեպի տուն՝ հուսալով, որ մի մութ անկյուն կգտնի ու կթողնի սեղանը զբոսանքի երկրորդ փուլում:

Ինչպես սովորաբար պատահում էր նրա քաղաքում, անձրևը սկսվեց առանց զգուշացման, և մինչև կթեքվեր անկյունում ու խույս կտար թիկունքում հնչող ազդանշանի ազդեսիվ աղմուկից, արդեն հորը անձրև էր տեսնում: Թրջված գլխից մեղմ ու սառը դող անցավ ամբողջ մարմնով: Զգաց՝ ինչ-որ զարշահոտություն կրկնակոխ հետևում է իրեն: Նայեց հետ. ոչ ոք չկար: Առջևում նույնպես: Անշարժ կանգնեց, որ հասկանա՝ հոտը կդադարի, թե ոչ: Ու երբ համոզվեց, որ դեռ հետապնդում է, կայեց ներքև ու տեսավ. հողաթափերը ոչ միայն ամբողջովին թաց էին, այլև ներբանները՝ շան կղանքի մեջ: Հաստատ շան կատաղի հաչոցից հետո էր մտել մեջը, մեքենայի ականջ ծակող ազդանշանից ու զայրացած վագորդից փախչելիս: Հավանաբար հենց այդ նույն շան կեղտն էր:

Փորձեց մաքրել մայթեգրին, բայց ամեն անգամ հողաթափն ընկնում էր ոտքից ու գլխիվայր շրջվում: Մի քանի մետր բարձրացավ փողոցով, որ մայթի երկու պոկված սալաքարի արանքում բացված անցքի ջրում լվանա, և կռանալով մի կիսաքանդ տուն նկատեց հանդիպակաց մայթին: Հավանաբար այդտեղ պատրաստվում էին նոր շենք կառուցել: Վերևի հարկի՝ կանաչ սալիկներով լուգարանը երևում էր փողոցից, ու մտածեց, թե քանի՞ մարդ է լվացվել այնտեղ, ու ի՞նչ տարօրինակ է, որ այդքան տարի թաքև-

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

ված սենյակը հիմա այսքան անճոռնի է ներկայանում բոլորին: Նորից մտածեց կնոջ մասին: Գուցե հենց հիմա նրան օգնում են լոգանք ընդունել, ճիշտ ինչպես ինքը մի ժամանակ... կամ գուցե թողնում են, որ ինքնուրույն լողանա՝ առանց հասկանալու, որ չի կարող մենակ գլուխ հանել: Հետաքրքիր է, ջուրը բավականաչափ տաքացնո՞ւմ են, թե լվանում են սառը ջրով ու վերջ: Գուցե նրանց ուզածն էլ հենց դա է. թողնեն, որ դանդաղ մարի: Անկասկած, ուրիշ թոշակառուներ էլ կան, որոնք հույս ունեն մի օր հայտնվել այդ տանը: Ոչ մի ռեստորան չի ուզում, որ մարդիկ գան ժամը վեցին ու նստեն մինչև կեսգիշեր: Ու եթե կինը մեռնի, մի՞թե ինքը մնացած ամբողջ կյանքի ընթացքում չի կքի մեղքի ծանր բեռի տակ, որ երկար ճանապարհի ավարտին կնոջը թողել է մոլորված ու միայնակ:

Պետք էր տանը պահել նրան: Երբ բժիշկն այցի էր եկել, պետք չէր պատմել, որ ուզում է գնալ իր պապիկի տուն, պետք չէր ասել, որ նրան գտել է գիշերվա կեսին դռան կողպեքը բացելիս: Գուցե չափազանց վախեցած էր: Գուցե, երբ կինն իրեն հրեց դեպի արդուկի սեղանը, զգաց, որ համբերության բաժակը լցվել է, թույլատրելիի սահմանը՝ մեկընդմիջտ հատվել, ու հետդարձի ճանապարհ չի լինի: «Այո՛, այդպես էլ կա», - մտածեց: Իրեն ոչ ոք երբեք չէր հրել: Ու ցանկացավ ցույց տալ կնոջը, որ չի հանդուրժի: Մինչդեռ հիմա, աչքերը հառած կիսաքանդ տան կանաչ զուլավոր սալիկներին, հասկացավ, որ պիտի կողքին պահեր նրան: Ի վերջո, ինքն էլ բազմաթիվ զձեր էր հատել, իսկ կինը երբեք մի խոսք չէր ասել: Պիտի պահեր նրան: Համենայն դեպս, այն հազվադեպ պահերին, երբ միտքը պայծառանար, նա պիտի լիներ տանը, իր իրերի կողքին, տղամարդու կողքին, որին սիրում էր, ու որը սիրում էր նրան, հիշեց տոստի վրա հալչող կարագի ու կաթով թեյի հոտը: Չպիտի մնար անհոգի, անգույն սենյակում, ուր հիմա այցի էր գալիս նրան՝ հուսալով, որ կինը կճանաչի իրեն:

Վերջին անգամ, երբ գնաց տեսնելու, կնոջը թվաց, թե փոստատարն է: Ասաց, որ արդեն մի ամիս սպասում է նրան: Բայց երբ տղամարդը նստեց մահճակալի եզրին ու հարցրեց, թե ինչպես է, կինը սկսեց քթի տակ փնթփնթալ ու ցրված նայեց պատուհանից, ինչ-որ տեղ՝ տանիքներից վեր, ծխնելույզների արանքում դժգույն, ինչպես գլխիվայր շրջված ծաղկաման-

ներ: Եվ տուն դառնալիս մտածում էր, թե ինչքան դժվար կլիներ, եթե կնոջը տեսներ պարզ գիտակցությամբ, իսկ աչքերն աղերսելով հարցնեին, թե որն է եղել իր սխալը:

Կայծակի երկու ալիք գունատեցին երկինքը, անծրևն ուժեղացավ: Ոտքերը քստքստացնելով շտապեց դեպի պայծառ լամպով լուսավորված պատը, փորձեց պատսպարվել՝ արդուկի սեղանը գլխին պահած, ինչպես կարճահասակ, զառամյալ Սամսոնը, որը ձեռքերով հենվել է տաճարի տանիքին: Բայց սեղանի պոկված ոտքը, որ ոչ մի կերպ տեղը չէր ընկնում, մետաղական կողմով խփեց քթին, որն ինչպես միշտ անմիջապես սկսեց արյունահոսել: Արդուկի սեղանը հենեց գլխին, այրված, դեռ տաք ձեռքը խցկեց գրպանը՝ թաշկինակ փնտրելով, և միայն այդ ժամանակ հասկացավ, որ թաշկինակ չկա: Վերարկուի թևքը սեղմեց քթին ու փորձեց բարձրացնել գլուխը, ինչպես փոքր ժամանակ մայրն էր սովորեցրել, որ դադարեցնի արյունը: Հիշեց մոր խոսքերը. «Ամեն ինչ անցնում է, որդիս: Ամեն ինչ»: Հիմա աչքերը լոգարանի սալիկներին հառած՝ հաստատ գիտեր. կինը հենց այդ պահին արթուն է ու պատուհանից նայում է ջրհեղեղին: Սիրում էր այդպես նայել աշնանային առաջին անծրևոտ գիշերներին: Ինչպես աղջիկն է սպասում, թե հայրը երբ աշխատանքից տուն կվերադառնա: Հիմա ո՞ւմ մասին էր մտածում: Գուցե պապիկի, որը, ինչպես նրան թվում էր, սպասում էր իր տունդարձին: Կամ գուցե ամուսնու, որին կորցրել էր, կամ որն ինչ-որ կերպ, ինչ-որ տեղ կորել էր:

Մինչ անծրևը թմբկահարում ու երկու կողմից վարագուրում էր արդուկի սեղանը, տղամարդը փակեց աչքերն ու երևակայեց, որ այս ամենն ընդամենը երազ է: Հիմա կբացի աչքերն ու կհայտնվի տանը, անկողնում, կնոջ կողքին, կզգա «Վոլտարեն» գելի հոտը, իսկ հետո վեր կկենան, կմիացնեն թեյնիկը, որ թեյ խմեն, կմիացնեն տոստերը, ռադիոն, որ լսեն, թե ինչ էր կատարվել աշխարհում, մինչ քնած էին ամբողջ գիշեր:

Իսկ ինչպե՞ս էին տեսնում նրան մարդիկ իրենց մեքենաներից. մի զառամյալ ծերունի, երեք ամսվա մորուքով, դեմքն ամբողջովին արյան մեջ, հողաթափերով ու գիշերազգեստի տաբատով, որը ոչ ոք չի հագնում դրսում: Արդուկի սեղանը գլխավերևում, կուրացնող անծրևի տակ: Սով-

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

րական անօթևան մարդ՝ արյունաթաթախ վերարկուով, որը հավանաբար գողացել է ինչ-որ բարի մուտքից: Այս կողմերում հազվադեպ էին անօթևաններ լինում, և մարդիկ ամենևին չէին ցանկանում խրախուսել այդ կոր միտումները: Բայց չէին կարող պարզապես նրան թողնել այնտեղ, անձրևի տակ արյունահոսելու: Ուստի կանգնեցրին մեքենան ճանապարհի մեջտեղում. հետևում ևս երկու մեքենա էր սպասում:

Երկուսն էին, ինչ էլ բարձրահասակ են: Առաջին միտքն էր, որ ծագեց գլխում, երբ տեսավ, թե ինչպես են գալիս իր կողմը. կամ ինքն էր հանկարծ կուչ եկել, կամ բոլոր մարդիկ ավելի բարձրահասակ էին դարձել: Այնպես հանդուգն էին թփթփացնում ոտքերը, ինչպես կանեին միայն երկու բորբոքված ոստիկան, հորդ անձրևի տակ քայլելով դեպի ձերուկին, որի տեսքն ամենևին տոնական չէր՝ գարշահոտ, արդուկի սեղանը գլխին:

Փաստաթղթեր՝: Իհարկե, մոտս են. չէ՛, ձեռքիս չեն, տանն են: Շատ հեռու չէ, տասը բուպեի ճանապարհ: Եկե՛ք իմ հետևից, լա՛վ: Ձեզ համար սուրճ կպատրաստեմ: Խելագար չեմ, վստահեցնում եմ: Այդ դեպքում ինչ եմ անում այստե՛ղ, արդուկի սեղանը ձեռքի՞ս: Դե, սպասում եմ, տեսեմ՝ ում տամ: Գուցե մեկնումեկը սեղան չունի, թող օգտագործի: Մեկի համար աղբ է, մյուսի համար՝ գանձ, չէ՞: Մի ոտքը պետք է ձգել տեղում, այդքան բան: Արդուկում էի, երբ հանկարծ դուրս թռավ: Նայե՛ք ձեռքիս, այրվել է: Չէ, խնդրում եմ... ո՞ր եք տանում: Չէ, հիվանդանոցի կարիք չունեմ: Մի քիչ արյուն է եկել, վերջ: Միշտ էլ գալիս է, հետո՛ դադարում: Ամեն ինչ անցնում է: Ամեն ինչ:

Երբ նրան հրելով տեղավորեցին մեքենայի հետևում, այն անմիջապես լցվեց շան կեղտի գարշահոտով, իսկ շունը երևի հիմա քնած էր ինչ-որ տեղ, տանիքի տակ, լիքը ստամոքսով: Մեքենան քշեցին մոտակա հիվանդանոց: Վերարկուի թևքը դեռ սեղմած էր վնասված քթին, ձեռքի ափն այրվածքից ցավում էր, իսկ գլուխը հետ էր գցել, ինչպես երեխան, որը կայում է իրեն ձեռքով անող ձևողների, երբ նրան տանում են մի տեղ, ուր առանց նրանց հաստատ չէր գնա. կայում էր անձրևին, որ դեռ անգթորեն թափվում ու թափվում էր: Իսկ արդուկի սեղանը, պատին հենված, փոքրանում էր հեռվում:

ԱՅՅԻ ԳԱՆՅԻ ՆՐԱՆ, ՀԱՅՐԻ՛Վ

Mort naraha, pa

Կռացա, ծեռքով ծածկեցի աչքերս, ասես պաշտպանում էի արևից, ու շշնջացի.

- Այցի գևացի նրան, հայրի՛կ: Այցի գևացի:

* * *

Երբ վերջին անգամ այցելեցի, տեսքը լավ չէր: Կրտսեր քույրս, որ քիչ առաջ գևաց, անընդհատ ասում էր՝ վիճակը կարծես վատանում է: Ուստի զգալով, որ պետք է մի քիչ բարձրացնել տրամադրությունը, հարցրի նրա կյանքի կանանց մասին: Հենց այդպես սկսեցինք խոսել Իսպանիայում ապրող մի կնոջ մասին:

Հաճույքով էր խոսում կանանց մասին: Թվում էր՝ մոռանում է ցավը, աչքերը փայլում էին ու անսպասելիորեն կենտրոնանում. այն օրվանից, ինչ հիվանդացել էր ու տեղափոխվել հիվանդանոց, կանայք, որոնց սիրել էր ամբողջ կյանքում, վերածվել էին ֆոտոալբոմի, որը երբեք չէր հոգևում թերթելուց: Ու յուրաքանչյուր լուսանկարի տակ ևս հիսուն լուսանկար էր թաքնված: Ոչ մի մանրուք չէր սպրդում հիշողությունից: Երբեմն մտածում էի, թե ամեն ինչ հորինում է, բայց մեկ-երկու ամիս հետո կրկնում էր պատմությունը ճիշտ նույն մանրամասներով, նույն ինքնավստահությամբ, դեմքի նույն արտահայտությամբ ու ժպիտով, ու կասկածներս հողս էին ցնդում:

- Փա՛հք Աստծո, որ նրանք կան իմ կյանքում,- ասում էր, երբ մենակ էինք լինում:- Ուրիշ էլ ինչպե՞ս էի սպանելու այս անվերջանալի գիշերները,- ապա մտածկոտ շարունակում էր,- երբեմն հարցնում եմ ինձ՝ ինչի՞ մասին են մտածում ուրիշ ծեր տղամարդիկ, որոնք ինձ նման մենակ են, ու որոնց ծանոթ չի եղել ուրիշ կնոջ սիրելու թրթիռը:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

Իսկ երբ ուժերը հերիքում էին քննարկում ծավալելու, ասում էի, որ գուցե նրանք մտածում են այն երկրների մասին, որտեղ եղել են, հին ընկերների մասին, արկածների, որ պատահել են, լսած պատմությունների մասին, արած գործի, պահած շների, արևի տակ լողալով անցկացրած օրերի, միասին ապրած գեղեցիկ ակնթարթների մասին: Ունա ընդհատում էր ձեռքի շարժումով, որն այնքան հատուկ է այդ տարիքի մարդկանց.

- Չէ, չէ, որդիս: Դա ուրիշ է: Ա՛խ, ի՞նչ գործ ասես, որ չեմ արել կյանքում: Ի՞նչ եմ հիշում: Ոչինչ: Ոչ էլ երկրները, որտեղ եղել եմ, ոչ էլ զբոսանքներս...

- Ո՛նց կուրախանար, եթե տեսներ քեզ,- ասաց, երբ վերադարձանք իսպանուհուն: - Լսի՛ր, խոստանո՞ւմ ես, որ մինչև իմ մահը այցի կգնաս նրան,- ու առանց պատասխանի ժամանակ տալով՝ շարունակեց.- Գնա, պատմի՛ր ամեն ինչ ու նրանից լուր բեր ինձ:

Եւ անհողողող էր, ու երբ հասկացավ, որ լուրջ չեմ վերաբերվում իր մտքին, սկսեց աղերսել, որ գնամ:

- Գնա, խոսի՛ր նրա հետ, որդիս, քանի դեռ ողջ եմ:

Հիշեցի, թե ժամանակին ինչպես էի խնդրում մայրիկիս փոխանցել հաղորդագրությունները, որոնք ինքս չէի համարձակվում տանել: Հետո սկսեց հրահանգել, թե ինչպես հասնեմ նրա տուն նույնպիսի վճռական, արտահայտիչ տոնայնությամբ, որի օգնությանը դիմում էր երիտասարդ տարիներին՝ պատմելով, թե ինչպես հասնեմ տատիկ-պապիկիս տուն, կամ էլ նպարավաճառի խանութ՝ կաթ գնելու:

- Հիմա լսի՛ր: Երբ հասնես Ալիկանտե օդանավակայան, մեքենա՛ վարձիր,- ասում է արկված շուրթերի արանքից. թևքի մեջ թաքնված ձեռքը դողում է, ժպիտը ծուռ է, գրեթե առեղծվածային: - Դուրս արի օդանավակայանից ու նշանների օգնությամբ հասիր Մուրսիա:

Հետո նայում է ինձ ու հասկանում, որ չեմ գրում:

- Գրի՛ առ, գրո՛ղը քեզ տանի:

Ուստի վերնազգեստի գրպանից գրիչ եմ հանում ու սկսում գրել ձեռքիս տակ ընկած թղթի կտորի վրա. նրա համար հիվանդանոցի ճանապարհին գնած թխվածքաբլիթների ու ջրի կտորնն է:

- Քշի՛ր այդ ուղղությամբ, մինչև մայրուղին բաժանվի երկու մասի, ու հանդիպակաց կողմում կտեսնես խոշոր նոր ցուցանակներ՝ «Ավերիա» և «Գրանադա»: Միացրո՛ւ թարթիչները, զգուշացի՛ր քո հետևից եկող մեքենաներից ու անցի՛ր հանդիպակաց կողմը: Եվ զգույշ քշիր:

Ես ժպտում եմ, բայց նա չի նկատում. արդեն փակել է աչքերը՝ կորչելով իր իսպանական սիրուն ընդառաջ գնալու տեսիլքի մեջ:

- Շարունակի՛ր ուղիղ գնալ, մինչև որ առջևում կտեսնես «Մասարոն» ցուցանակը:

Ես նկատում եմ նրա ձեռքը. բոլոր մատներն ուղղված են ինձ:

- Հետևի՛ր նշանին: Արդեն պիտի որ տեսնես շենքեր, բնակարաններ՝ վարձակալության և վաճառքի համար: Ծովը մոտակայքում է, բայց դու դեռ չես տեսնում: Լսո՛ւմ ես:

- Այո:

- Մի քանի կիլոմետրը մեկ կտեսնես էլի նշաններ, ու կգա մի պահ, երբ կնկատես Պուերտո դե Մասարոնը: Քշի՛ր նավահանգստի ուղղությամբ այնքան, մինչև տեսնես առաջին սլաքները, որոնք ցույց են տալիս Ազիլաս տանող ճանապարհը:

Նա բացում է աչքերը, ու ես տեսնում եմ, որ փայլում են, շատ ավելի պարզ, քան առաջ:

- Ամեն ինչ գրի՞ ես առնում:

- Այո, շարունակի՛ր:

- Եթե հասնես այդտեղ ու չտեսնես տասնյակ կիլոմետրերով ձգվող լուսնային ջերմոցները, ուրեմն ինչ-որ տեղ սխալ շրջադարձ ես արել: Եթե տեսնես, ուրեմն ամեն ինչ կարգին է: Ուղիղ իջիր ճանապարհով, մինչև հասնես խաչմերուկի, ու աջ կողմում կտեսնես մի փոքր նշան, որի վրա գրված է «Պուևտաս դե Կալսեգրե»: Քշի՛ր նեղ ճանապարհով ներքև, ոտքդ քաշիր արգելակից ու թող, որ անիվներն ուղղակի պտտվեն: Բացի՛ր պատուհանները, որ ծովից փչող զեփյուռը թարմացնի դեմքդ. ինչպիսի՛ գեղեցկություն:

- Հա՛յր, վերջ տուր պոեզիային: Կենտրոնացի՛ր նշանների վրա:

Նա կկոցում է աչքերը, ժպտում ու վերադառնում հրահանգներին:

- Դանդաղեցրո՛ւ ընթացքը: Զգույշ եղիր. փողոցով երեխաներ են

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

անցնում: Այդտեղից պիտի որ տեսնես ճանապարհի վերջում մի վիլլա, որն առանձնանում է մյուսներից: Թշի՛ր այդ կողմ: Կայանի՛ր մեքենան: Իջի՛ր: Բարձրացի՛ր մայթ. այնտեղ երևի կատու կտեսնես, որը զբաղված է ինչ-որ ձկան կմախք լիզելով... ու զանգը տո՛ւր:

Հայրս ինձ ուղարկում է մի կնոջ մոտ, որի հետ գաղտնի հանդիպել է տասը տարի: Ու ես դա չեմ անում՝ նրան հաճոյանալու համար: Անում եմ, որովհետև ուզում եմ ծանոթանալ կնոջ հետ, որն այնքան՝ երջանկություն է պարզել նրան: Գնում եմ առանց խոսքի շնորհակալություն հայտնելու: Ուզում եմ հանդիպել կնոջը, որն ամեն անգամ լցնում էր նրան այնպիսի ուրախությամբ, որ մի քանի ամիս բավականացնում էր: Հետո, երբ ուրախության բոլոր նշույլներն անհետանում էին, դարձյալ մեկնում էր Իսպանիա՝ գործի պատրվակով: Մենք էլ սպասում էինք, թե երբ կվերադառնա՝ իր հետ բերելով թմբուկ, հոլ, ծնձղաներ, մի տոպրակ բազմագույն հուլունքներ և խորապես հագեցած մարդու ուրախ ժպիտ:

Մի խոսքով՝ քշում եմ իմ վարձած Ford Ka-ն՝ հիվանդանոցի ճաշարանի կտրոնը դեկին ամրացրած, ժպիտը դեմքիս: Հիանում եմ հորս հիշողությամբ. նույնիսկ եթե մեքենան վարելը վստահե՛ր ռոբոտին, ամենայն հավանականությամբ առանց պատահարների կհասնե՛ի վիլլա:

Հիմա վիլլայի ճանապարհին եմ, բացել եմ մեքենայի պատուհանն ու տխմարի պես ծիծաղում եմ, որովհետև ծովից փչող զեփյուռը թարմացնում է դեմքս: Ու զգում եմ ոտաբոբիկ երեխաների ոգևորությունը, որոնք լողափին վազում են զնդակի հետևից, ու նրանց մայրերի փնթփնթոցը նպարտելենի խանութում, բարից վերադարձող նրանց հայրերի զվարթ աղմուկը փողոցի ճայրից: Ու մտածում եմ. եթե ընդհատած չլինե՛ի նրան, երբ պատմում էր ուղևորության այս հատվածի մասին, հաստատ կավելացներ նաև այս մանրամասները:

Հետո զանգն եմ տալիս, ու հանկարծ ինձ համակում են հարյուրավոր կասկածներ: Գուցե կինը մահացել է կամ տեղափոխվել: Գուցե ապրում է ուրիշ տղամարդու հետ ու լրիվ մոռացել է հորս կամ ուզում է մոռանալ: Գուցե տանը հիմա ոչ ոք չի ապրում, կամ գնել է ինչ-որ մեկը, որ ոչինչ չգիտի

հորս իսպանական սիրային արկածների մասին: Հնարավոր է նաև, որ նա բացի դուռը, բայց ներս չհրավիրի: Կամ էլ որդին բացի. այդ դեպքում ի՞նչ եմ անելու:

Դուռը բացվեց. իմ առաջ կանգնած էր հորս իսպանուհին: Կասկած չուներ, որ հենց նա է: Հայրս նկարագրել էր կնոջ աչքերը: Ի՞նչ ճշգրիտ էր պատմել: Կանաչ: Դեղինի երանգով: Գեղեցիկ:

Իսկ դե՛մքը: Նրբագեղ ծերացող կին:

- Երբ մոտենա դռանը, ասա՛, որ իմ որդին ես, ու որ շատ ես լսել իր մասին: Ասա՛, որ մեռնում եմ, բայց նա դեռ իմ սրտում է, ինձնից անբաժան: Ու այդ ժամանակ ներս կհրավիրի ու հազարավոր հարցեր կտա: Որովհետև այդպիսին է. յուրաքանչյուր խոսքին հարց ունի: Հետո քեզ համար մի քիչ «45» կլցնի:

- Ճանաչում եմ քեզ,- ասաց կինը տան շեմին,- Հորդ աչքերն են: Շատ չես փոխվել. հայրդ ցույց է տվել լուսանկարներդ: Մի՛ մնա շեմին: Ներս արի: Տո՛ն մտիր,- հետո դարձավ սպիտակ կատվին, որը նայում էր ինձ տիրուհու ոտքերի արանքից:- Կորի՛ր աչքից: Tenemos visita¹:

Այսուայնկողմ թափված կաթսաներով ու թավաներով լի խոհանոցում ճաշելուց հետո հիշատակեցի «45»-ի մասին, ու հանկարծ նրա աչքերը լցվեցին արցունքով: Խնդրեց, որ պտուտակածն սանդուղքով իր հետևից իջնեմ գոլ նկուղ. այնտեղ էին շարքով դասավորված շշերը, յուրաքանչյուրի վրա՝ ձեռագիր պիտակ, վրան գրված՝ «45»: Վերջին անգամ նրա հեռանալուց հետո հատ-հատ բոլոր շշերը պահում էր:

- Համոզված էի, որ մի օր կվերադառնա: Առաջին անգամ չէր, որ ասում էր՝ վերջին անգամ ես տեսնում ինձ: Այնքան՝ էր ասել: Բայց երբեք չէի հավատում, որովհետև, դե, հա՛, երբեմն ամիսներ էին անցնում, բայց միևնույն է, միշտ վերադառնում էր: Այն օրվանից, երբ վերջին անգամ տեսա նրան, միշտ իջնում եմ այգի, ծիրան հավաքում: Հազիս նույն ձեռնոցներն են, որոնք նա էր սիրում, երբ իր ձեռքով ծիրան էր հավաքում:

Ծեսի էր վերաձվել: Ներս էր գալիս ծիրանով լի արկղի տակ կքած ու

1 Հյուր ունենք (իսպ.):

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

դատարկում խոհանոցի ահռելի սեղանին: Հետո նույն դասակով, որ ժամանակին նա՛ էր օգտագործել, կիսում ծիրանները մեկ առ մեկ ու նետում մեծ կաթսայի մեջ: Թողնում էր, որ մի րոպե բլթբլթան եռացող ջրի մեջ, որ եթե հանկարծ պատահաբար մեկում փոքրիկ սև որդ լիներ թաքնված, խաշվեր ու անհետանար:

- Ինչպես նա էր անում,- ասում է կիսաժպիտով, առանց գայրույթի նշույլի:- Ո՛չ մի նամակ: Ո՛չ մի հեռախոսազանգ: Ոչինչ: Այդպիսին էր հայրդ: Կամ կուրացնող լույս, կամ խավար գիշեր:

Հետո մեծ շերտիով հանում էր տաք թաց ծիրաններն ու նետում հիկզիտրանոց կոնյակի մեջ: Այդպես թողնում էր մեկուկես ամիս, թրմվելու: Քառասունհինգ օր: Ոչ ավելի, ոչ պակաս:

- Ինչպես նա էր անում:

Քառասունհինգ օր հույս էր փայփայում, որ երբ գա ժամանակը, ու ինքը մաղով անցկացնի կոնյակն ու քամի ծիրանները, նա արդեն այնտեղ կլինի, իր կողքին, իր խոհանոցում, ու կզարմանա, որ կինը շարունակում է պատրաստել իր խմիչքը: Հետո քամած կոնյակը լցնում էր ապակե շշերի մեջ: Յուրաքանչյուրի վրա դեղին պիտակ էր փակցնում ու սև գրիչով գրում «45», ինչպես նա էր անում. ուղիղ այդքան օր էր պետք, որ խմիչքը պատրաստ լինի:

- Որովհետև խմիչքը մեզ նման է,- հաճախ ասում էր նա, հավանաբար, նույն տոնայնությամբ, ինչպես մի ժամանակ ինձ հրահանգներ էր տալիս, թե ոնց ինքնուրույն դպրոց հասնեմ: Ու այդ ժամանակ, ինչպես նա էր անում, դեղին կպչուն թղթի ներքևի անկյունում գրում էր ամսաթիվը:

- Քեզ դո՞ւր է գալիս:

- Շա՛տ:

- Ոչ ոք չի գնում իմ տնից առանց համտեսելու: Ու ամեն անգամ, երբ գավաթ ենք բարձրացնում, մտածում եմ նրա մասին: Գիտե՞ս, ամիսներ եմ անցկացրել այսպես,- ասում է հիմա՝ «45»-ի գավաթն աջ ձեռքում, աջքերը գամած ծիրանենիկներին:- Նայում եմ այգուն ու մտածում նրա մասին. տեսնես ի՞նչ է անում հենց հիմա, մոռացե՞լ է ինձ կամ ի՞նչ է հիշում: Մի՞թե

հիասթափվեց, երբ եկել էր վերջին անգամ: Գուցե ինչ-որ բան եմ ասել, որ պետք չէր ասել, կամ ինձ սխալ է հասկացել: Տեսնես մտածո՞ւմ է մի օր վերադառնալու մասին: Հույսե՞ր է փայփայում, որ ինչ-որ կերպ, ինչ-որ տեղ նորից կհանդիպենք: Ու արդյոք մի օր կլսե՞մ զանգի ձայնը, ինչպես դու տվեցիր, կբացեմ դռնս ու կտեսնե՞մ նրան տան շեմին:

Լռում է: Նայում է ինձ: Հասկանալով, որ ասելիք չունեմ, շարունակում է.

- Երկար ժամանակ պետք եղավ՝ հաշտվելու այն փաստի հետ, որ այլևս երբեք չեմ տեսնելու հորդ: Երկար, շատ երկար ժամանակ: Ես շարունակում էի արկղ առ արկղ հավաքել այգու ծիրանները՝ հուսալով, որ կլցնեմ ևս մի շիշ, ու ևս այստեղ կլինի, կողքիս կանգնած:

Զգում եմ, որ պետք է խոսել, բայց չեմ գտնում լռությունը խախտելուն արժանի մի բան:

- Սկզբում, երբ հասկացա, որ չի վերադառնալու, փորձեցի բարկանալ: Մտածում էի՝ գուցե գայրույթով լցնեմ սրտիս դատարկությունը: Բայց անհնար էր գայրանալ այդպիսի մարդու վրա:

Ներելու բան չկար: Հայրդ երբեք չէր ստում: Ամեն բան պարզ էր մեր առաջին հանդիպումից, որը եղավ ևավահանգստում: Ես ընդունեցի պայմանը, որ կհանդիպենք, միայն երբ իրեն հարմար լինի: Մտածում էի՝ գուցե նրան հանդիպեմ ու վայելեմ՝ առանց սիրտս նրան հանձնելու: Բայց երբ հասկացա, որ ևս իմ սիրտն էր, իմ սիրտն էլ ևս՝ էր, արդեն շատ ուշ էր:

Այդ պահին ներս մտավ կատուն ու թռավ նրա գիրկը:

- Հայրդ շատ բան էր սովորեցնում: Ու շատ էր ծիծաղեցնում: Ու սիրում էր ինձ: Վստահ եմ:

Գավաթս դատարկվել է: Նորից լցնում է: Հետո նայում է ինձ:

- Երկա՞ր ես մնալու:

Նրա հետ անցկացրած երրորդ օրվա լուսադեմին հայրս մահացավ: Թույրս վաղ առավոտյան զանգեց ու հայտնեց լուրը: Ոչ ոք չէր սպասում, որ այդքան արագ կհեռանա կյանքից: Ալիկանտե վերադառնալիս լաց եղա: Ու ևս էլ՝ ինձ հետ:

- Այցի գևացի ևրան, հայրի՛կ: Այցի գևացի,- շշնջում եմ ես ու ձեռքերով փակում աչքերս՝ դեմքս հակած դագաղի սառը, փայլուն կարմրափայտին:

- Դեռ սիրո՞ւմ է ինձ,- հարցնում է:

- Գժվում է քեզ համար, հայրի՛կ: Մինչև հիմա գժվում է: Գուշակիր, թե քանի շիշ «45» ունի: Մի ամբողջ մառան, հայրի՛կ: Մի ամբողջ լիքը մառան:

Հիմա ևա ժպտում է իր յուրահատուկ ժպիտով:

- Մի բան ունեմ քեզ համար, հայրի՛կ: Քեզ համար:

- Մի շիշ «45»:

-Չէ, չէ, «45» չէ: Ուրիշ բան: Մի րոպե սպասիր ու կտեսնես. ևա այստեղ է, բազմության մեջ:

Ագոստոս

I.-awlun

- Ինձ թվում է՝ ինչ-որ մեկը ծխնելույզի մեջ է:

Վերևում ձեղնահարկում, բաց համակարգչի առջև նստած տղամարդը չպատասխանեց, բայց քթի տակ ժպտաց:

Կինը տարօրինակ անգլերենով նման արտահայտություններ անելու տաղանդ ուներ. հիշեց, թե հատկապես ինչն էր անմիջապես գրավել նրա մեջ, բացի գեղեցկությունից: Նրա խոսքերը ստիպում էին ժպտալ, ընդ որում՝ ջանք չէր գործադրում, ինչպես հիմա: Տղամարդը հաճախ մտքերով վերադառնում էր համատեղ կյանքի առաջին շաբաթներին ու վերհիշում արտահայտություններից մի քանիսը: Նրանք երկար ժամանակ միասին ճամփորդում էին, ու ինքն արտահայտությունները գրի էր առնում օրագրում, որ հետո նորից կարդա, հեռվից մտովի վերականգնի այդ ակնթարթները: Բայց հետո տուն դառնալիս, ինքնաթիռի մեջ այնքան հաճախ էր վերընթերցում, որ այլևս օրագիրը բացելու կարիք չէր լինում:

«Դոմինոսի» մասին զրույցը դրանցից էր, որ համառոտ գրի էր առել: «Արի՛, արի՛: Տե՛ս», - ասաց կինը, հուզված, ինչպես հենց նոր Մարսի վրա ամվակ հայտնաբերած տիեզերագնաց: Տղամարդը մոտեցավ ու նրա ձեռքում թխվածքաբլիթների տուփ տեսավ: «Ահա, տե՛ս, կոչվում են «Օրեո»»: Բայց իմ հայրենիքում «Դոմինոս» ենք ասում»: Վստահ էր, ուրիշ ոչ ոք չէր ծիծաղի, բայց այնպես ասաց, աչքերը լայն բացած, Թաիլանդի 7-Eleven խանութում, որ մինչև ականջները ժպտաց: Ահա թե ինչպիսի ազդեցություն ուներ կինը նրա վրա:

Նրանք հանդիպեցին, ինչպես հանդիպում են զբոսաշրջիկները ճանապարհորդելիս: Պատահաբար հայտնվելով նույն հանգստավայրում՝ մի առավոտ լողափին նավակներին սպասելիս. գնում էին՝ օդափո-

դով սուզվելու: Ամեն ինչ արեցին, որ նույն կավակում լինեն, թեպետ երբեք չխոստովանեցին իրար: Նույնը՝ նաև ջրի տակ: Միայն ապշելու խայտաբղետ պերկեսներ ու ծաղրածու ձկներ չէ, որ փնտրում էին քարերի արանքում: Լողում էին իրար հետևից, և երբ երրորդ անգամ էլ նրանց ոտնաթաթերը քսվեցին իրար, ջրասուզակի խողովակները շուրթերի արանքում՝ ժպիտներ փոխանակեցին ու որոշեցին, որ ժամանակն է դուրս գալու ջրի երես ու ծանոթանալու: Չգիտես ինչու, աղջիկը ծիծաղեց: Ասաց, որ անուկը Կադրի է, բայց բոլորն իրեն Բեթի են անվանում: Տղայի անունը Փիթեր էր, ու բոլորը նրան Փիթեր էին անվանում:

- Ինչքան շատ սիրուն ձկներ կան: Ու մենք միշտ նկատում ենք նույն ձկնիկներին:

Միասին ճաշեցին Սանգո ծովածոցի լողափին, ու հավի բրիկներ վայելելուց հետո աղջիկը քնեց Փիթերի սրբիչի վրա: Արթնացրեց Բեթին՝ մատով թեթև դիպչելով քթիկի ծայրին: Այդ գիշեր Փիթերը քնեց աղջկա խրճիթում, ու երբ երկու օր անց պիտի հեռանային հանգստավայրից, միասին հեռացան:

Սքանչելի պատմություն էր Փիթերի համար: Միշտ երագել էր հանդիպել մեկին, որը ոգևորության անսպասելի չափաքանակ կներարկեր իր կյանք՝ կանխատեսելի առօրյան խախտելով ծիծաղով: Թախլանդից մեկնեցին Կամբոջա՝ Անգկոր վանքը տեսնելու: Հետո աղջիկը մեկնեց Վիետնամ, որտեղ նրան սպասում էր թռիչքը հայրենի Հանոյ, իսկ տղան վերադարձավ Բանգկոկ, որ հասնի թռիչքին: Բայց հրաժեշտից առաջ բացեցին iPhone-ի օրացույցները, որ տեսնեն, թե երբ կարող են նորից հանդիպել: Ամոթ էր չտեսնելու տալ կայծը, որ այնքան արագ բռնկվել էր նրանց միջև:

Մի տարի հետո Փիթերն ապրում էր աղջկա բնակարան-ստուդիայում՝ քաղաքի արվարձաններում, փոքր շենքի ձեղնահարկում: Որոշել էին ապրել այնտեղ, մինչև տղան աշխատանք կգտներ, հետո ավելի մեծ, կենտրոնին ավելի մոտ տուն կփնտրեին: Բարեբախտաբար, ստուդիայի վերևում փոքրիկ ձեղնահարկ կար, որը Փիթերը շուտով անձնական տարածքը դարձրեց: Տեղավորեց բոլոր իրերն ու ամբողջ օրն անցկացնում էր փոքր սեղանի առաջ՝ աչքի անցկացնելով թափուր աշխատատեղերի ցուցակներ:

րը, ինքնակենսագրություն ուղարկելով ու դանդաղ սովորելով Քեթիի լեզուն:

Արդեն վեց ամիս ապրում էին միասին, և այդ ընթացքում Փիթերն ուշադիր հետևում էր իրենց հարաբերությունների զարգացմանը: Կամ զարգացման բացակայությանը, ինչպես երբեմն մտածում էր: Թվում էր՝ հարաբերություններն ինչպես սկսվել էին, երբ սիլի-բիլի էին անում ծովում, այդպես էլ դոփում էին տեղում, ի տարբերություն իր այլ հարաբերությունների՝ ապագայի մասին քննարկումներով, թյուրիմացություններով ու դրանց հաջորդած վեճերով, մի բան զիջելով, մի տեղ նահանջելով: Մյուս կողմից, առաջընթացի բացակայությունն ինքնին այնքան էլ վատ չէր: Ի վերջո, որքան էլ նախկին հարաբերություններում շատ զարգացումներ էին եղել, ոչ մեկը հեռուն չէր գնացել: Ինքն ու Քեթին կարծես խճանկարի երկու կտոր լինեին. հավաքում էիր, ու վերջ, պատկերն ամբողջանում էր: Ու խաղաղվում: Բայց մի՞թե նորմալ էր, որ աշխարհի տարբեր ծայրերից երկու մարդ համաձայն էին գրեթե բոլոր հարցերում: «Գուցե պատճառն այն է, որ Քեթին չի պնդում իր տեսակետը»,- երբեմն մտածում էր Փիթերը: Երբեմն էլ քննարկման կեսից փոխում էր կարծիքն ինչ-որ բանի վերաբերյալ, իսկ որոշ ժամանակ հետո նկատում, որ Քեթին էլ փոխեց միտքը: Բայց իսկապե՞ս պարտադիր է, որ զույգերը վիճեն ու կռվեն, որպեսզի հարաբերությունները զարգանան: Փոփոխության բացակայությունն ինքնին յուրօրինակ զարգացում չէ՞ր նրանց դեպքում: Սեքսն առաջվա պես փառահեղ էր, ինչպես առաջին գիշերը, մոճակների ցանցի տակ, Կոհ Թայոյի «Փալմ Լիվզ» հանգստավայրում: Ծիծաղն էլ կար, ու Փիթերը երբեք չէր դադարում վայելել իրենց ընդհանուր առտնին կյանքը: Ընտելացել էր շաբաթ առավոտներն արթնանալ ու հայտնաբերել, որ խոհանոցում սպասում են թերխաշ ձուն ու զինվորիկ-հացերը՝ պատրաստ սուզվելու: Մի՞թե այսպիսի զարգացում չեն փափագում բազմաթի՛վ մարդիկ:

Քեթին ընդունարանի աշխատող էր ատամնաբուժական կլինիկայում: Տուն էր գալիս գնումներից հետո: Ճաշ էին եփում: Ուտում էին: Սեկ-երկու ֆիլմ դիտում: Երբեմն զբոսնում էին ընկերների հետ: Շաբաթվա վերջին շոգում էին քաղաքում, իսկ արձակուրդներին գնացք էին նստում: Մի ան-

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

զամ էլ Քեթիին տարավ քաղաքից դուրս, որտեղ ամառն իր տարերքի մեջ էր: Այնտեղ աղջիկը ևս երկու ևմուշով համալրեց Փիթերի հավաքածուն: Լողում էին Սան Ֆիլեպ ծովածոցում, ավանդական խայտաբղետ գույներով զարդարված ձկնորսական սավակներում, որոնք ճոճվում են ջրի մեջ: Մեկը կոչվում էր Sant'Anna: Աղջիկը հարցրեց, թե դա ինչ է նշանակում:

- Սուրբ Աննան կոյս Մարիամի մայրն էր,- պատասխանեց Փիթերը:

- Մի՛ խաբիր: Վերջ տուր- պատասխանեց աղջիկը՝ հերթական անգամ ջրի տակ սուզվելուց առաջ, դեմքին նկարելով նույն ժպիտը, ինչ այն օրը, Թաիլանդում, 7-Eleven խանութում: Կամ երբ բացատրում էր խաղի կանոնները, որ փոքր ժամանակ խաղում էր եղբայրների հետ:

- Քանի՞ անգամ «այո, այո, այո, այո, այո» կարող ես ասել մի րոպեում:

Կամ երբ ընտրություններին Փիթերն ինքնաթիռով թռավ հայրենիք ու օդանավակայանում գտավ իր վերադարձին սպասող Քեթիին: Փիթերն ասաց, որ կուսակցությունը, որին աջակցում էր, պարտվել է:

- Հիմա ընդդիմություն ենք:

Քեթին աչքով արեց ու մի ակնթարթ փակեց աչքերը, ասես փորձում էր հանելուկ լուծել, հետո, ինչպես միշտ, անմեղ հարցրեց.

- Ինչ դիմություն՞ն:

Փիթերը հասկացավ, որ Քեթիի կողքին ամենը, ինչ ժամանակին չափազանց կարևոր էր համարել, հիմա երկրորդական էր: Նրա հետ ամեն ինչ փոխվել էր: Հանկարծ հասկացավ, որ կարևորը ներկա պահն է, ու թե ինչպես ես այն ապրում: Կարևորը ծիծաղն է, ու թե ինչպես ես ծիծաղում: Ինչպես ես արթնանում շաբաթ առավոտյան ու թերխաշ ծու վայելելում:

Ժամանակ առ ժամանակ մտածում էր, որ գուցե Քեթին ուղղակի այդպիսին է, տարբերվում է մյուս աղջիկներից, որոնց հանդիպել է: Նա «լողափին անցկացրած օր է», ինչպես կասեին բրիտանացիները: Երբեք Փիթերին խանդելու առիթ չէր տալիս, ոչ էլ դրսևորում այնպիսի հատկանիշներ, որոնք Փիթերը չէր կարող հանդուրժել: Եվ ոչ էլ նոթոտ էր, ամենևին: Միշտ ժպտում էր: Մինչև այն գիշեր, երբ Փիթերը նստած էր ձեղնահարկում, հավակարգչի առաջ, ու Քեթին ներքևից կանչեց.

- Ինձ թվում է՝ ինչ-որ մեկը ծխնելույզի մեջ է:

Արդեն ուզում էր այս նախադասությունն էլ ավելացնել Քեթիի անուշիկ իմիջիպայլոց արտաբերած արտահայտությունների իր հավաքածուին, բայց հիմա, երբ կենտրոնացավ նրա խոսքի վրա, հասկացավ, որ աղմուկ լսեց: Իջավ խոհանոց՝ ստուգելու: Քստքստոց էր լսվում ծխնելոյզից՝ կաթսայի վերևից, որը նաև սնուցում էր տաքացուցիչները: Կարծես մկնիկ էր շոջանով աշխույժ վազվզում: Մի քանի րոպեում, մինչ երկուսով ականջ էին դնում քստքստոցին, աստիճանաբար պարզ դարձավ, որ աղմկողը խուճապային վիճակում է: Նա կախվեց խոհանոցի պատուհանից, որը բացվում էր ձեղնահարկի վրա, ու նայեց իրենցից մի քանի մետր վերև՝ ծխնելոյզի գլխին: Երկու ագռավ թռել էին այնտեղ, ինչպես երկու վիճող ձերուկի, վշտահար, գլուխներն օրորելով: Անհավանական է, չէ՞: Քստքստոցն ավելի խելահեղ էր. դժվար թե մուկ լիներ, ինչպես մտածել էր առաջին պահին: Մուկն անշարժ կեստեր, մինչև ագռավները կռջռեին, հետո դանդաղ դուրս կգար ու կզնար իր գործերով: Ագռավը կարո՞ղ էր ծխնելոյզով իջնել ու ծուղակն ընկնել:

- Թռչո՛ւն է: Թռչո՛ւն,- ասաց Քեթին՝ հուզված, համարյա վախեցած, երբ նայեց դուրս, ծխնելոյզն ի վեր, ու հանգեց նույն եզրակացության:- Ի՞նչ անենք:

Փիթերն անջատեց հեռուստացույցը, որ կենտրոնական: Հետո աթոռ բերեց, բարձրացավ աթոռին ու սկսեց շոշափել տաք ծխնելոյզը. խողովակը (ամենայն հավանականությամբ գազի խողովակաշար էր) պատված էր ինչ-որ բանով. նրա կարծիքով արդյունաբերական փայլաթիթեղ էր:

- Գուցե բացենք ու դո՞ւրս թողնենք նրան,- հարցրեց Քեթին:

Հա, դա՛ էր պակաս, բացենք: Մի քանի շաբաթ առաջ հազիվ կորոզեց լոգարանի դռան բռնակը, հիմա էլ պիտի կաթսան բացի, որի մեջտեղում լամպ է վառվում: Հիսո՛ւն Քրիստոս, մտածեց, բո՛ցը: Թռչունը հաստատ խելքը թոցրել է տաքությունից: Անջատեց տաքացուցիչը, և իսկապես, քիչ հետո թռչունը հանդարտվեց, իսկ ձայնը դադարեց:

- Ինձ թվում է՝ թռավ,- ասաց Քեթին՝ ականջը կաթսային:

«Հաստա՛տ», - մտածեց Փիթերը՝ տանջվելով այն մտքից, որ մի հնար գտնի ու ազատվի խոհանոցի ծխնելոյզի մեջ հայտնված ագռավից:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

- Տանտիրոջ հեռախոսահամարն ունե՞ս:

- Ունեմ:

Փորձեց զանգել, բայց վարձակալման գործակալության հեռախոսահամարն էր, իսկ գրասենյակը, բնականաբար, արդեն փակվել էր: Ռարձյալ վառեց կրակը, որ համոզվի՝ քստքստոցն ու տաքությունը իսկապե՞ս կապ ունեն իրար հետ: Անշուշտ, այդպես էլ կար:

- Ղեռ այլտեղ է:

Փիթերը մտածեց, որ եթե դանակով զգուշորեն կտրի խողովակն ու մատներով լայնացնի անցքը, գուցե կարողանա ազատել թռչնակին ու պատուհանից զցել փողոց: Հետո կփակեն անցքը հաստ կպչուն ժապավենով ու կպատեն ամենակոշտ փայլաթիթեղով, որ հնարավոր է գտնել: Այդպես կփրկի թռչնակին ու տպավորություն կթողնի ընկերուհու վրա՝ միաժամանակ ցուցադրելով ահռելի մարդասիրություն և Սաքզայվերի ոճի հնարամտություն: Բայց երբ Քեթին տեսավ, դանակը ձեռքին մոտենալիս, փակեց նրա ճանապարհը:

- Չէ, նույնիսկ չմտածես այդ մասին: Թանկ բաներ են: Իմը չէ: Եթե փչացնես, ե՛ս ստիպված կլինեմ վճարել:

Փիթերին ավելի շատ վշտացրեց ոչ թե այն, որ Քեթին հավանություն չտվեց իր ծրագրին, այլ նրա նախադասության մեջ նկատած ես-ը: Այդ մի բառը կարծես հիշեցրեց, թե ինչ վիճակում է ինքը. վիճակ, որից տղամարդը պետք է որ անհարմար զգա: Բնակարանը Քեթիին էր: Նա՛ էր վճարում վարձը: Ինչպես նաև բոլոր հաշիվները, որոնք երբեք ցույց չէր տալիս Փիթերին: Ի՞նչ իրավունք ուներ դանակով բացելու ծիսնելույզը: Բացի այդ, Փիթերը վստահ էր, որ եթե փորձի, անշուշտ, վերջնականապես կփչացնի, ու գաղափար չունի, թե ինչպես նորոգել: Հետո, ամենայն հավանականությամբ, չեն կարողանա միացնել ջեռուցումը, իսկ եթե անգամ կարողանան, վնասված խողովակից, անկասկած, ծուխը կլցվի բնակարան: Եվ ո՞վ գիտի, թե որքան ժամանակ կանցնի, մինչև մեկնումեկը գա ու նորոգի: Այդ ընթացքում կսառչեն: Կամ, համենայն դեպս, Փիթերը կսառչի, որովհետև ամբողջ օրը տանն է:

Հանկարծ նրան համակեց խուճապի զգացումը, որ շատ վաղուց չէր

ունեցել: Մտքով անցավ, որ այս առաջին ընտանեկան մարտահրավերից հետո Քեթին պարզ կլիներ, թե իրականում ինչպիսին է արկածների սիրահարը, որին հանդիպել էր Թաիլանդում. տղան կարողանում էր հմտորեն օդ նետել ու բռնել ռոմի շները, ասես ավազով լի տոպրակներ լինեին: Այս միջադեպը հօդս կցնդեցնի ճառագայթող խարիզման, որ նկատել էր նրա մեջ, երբ մի կղզուց մյուսն էին սլանում, ու դրանից նշույլ անգամ չի մնա:

- Դե, այդ դեպքում,- ասաց Փիթերը,- մենք առանձնապես բան չենք կարող անել,- ևա շեշտը միտումնավոր դրեց մենք-ի վրա, բայց վստահ էր, որ այն կվրիպի Քեթիի ուշադրությունից, ևույնիսկ եթե հրապարակի կենտրոնում բեմին լինի: Գուցե դա ի վերջո Քեթիի գաղտնիքն էր: Նա ի ծնե անկարևոր երևույթները չնկատելու ձիրք ուներ:

Ծխնելույզը բացելու գաղափարին ի պատասխան նրա մերժումն առաջին ոչ-ն էր նրանց հարաբերություններում, և ինչպես մյուս բոլոր առաջին ոչ-երի դեպքում, որոնք հիշում էր, ստամոքսը տարօրինակ ոլորվեց: Ուրեմն, մտածեց, իրականում մենք կարող ենք և վիճել: Այս ամիսներն ընդամենը մեղրամիս էին, այլ ոչ թե նշան, թե իրադարձություններն ինչպես կծավալվեն: Իսկապե՞ս խաբել էր իրեն՝ մտածելով, որ Քեթիի հետ կյանքը միայն սեքսի ու ժպիտների, պղպջակներով լի լոգարանների ու ամեն շաբաթ առավոտ թերխաշ ձվի մասին է լինելու:

- Արի որոշ ժամանակ հանգիստ թողնենք,- ասաց Փիթերը Քեթին՝ ուրիշ հարմար ասելիք չգտնելով ու ոլորվող ստամոքսով վերադարձավ ձեռնահարկ:

Երրորդ անգամ վերընթերցեց դիմումը, որն ուզում էր ուղարկել քաղաքում գրասենյակ բացող մի սոր ընկերության, և այս անգամ զգաց, որ ինչ-որ բան պակասում է: Կարևոր բան էր, բայց չգիտեր, թե կոնկրետ ինչ: Տեռուցումն անջատված էր, ուստի շուտով սկսեց մրսել:

- Ինձ թվում է՝ գնացել է,- քիչ անց ներքևից ասաց Քեթին:

- Կա՛րդի,- կրկնեց Փիթերը՝ հասկանալով, որ տվեց նրա անձնագրային անունը,- թռչունն այդպես չի հեռանում: Առաքիչ չէ, որ գա ու գնա: Այդ թռչունը չի գնա, մինչև չստիպենք:

Նկատեց, որ ձայնը փոքր-ինչ կոպիտ հնչեց: Երբեք կոպիտ չէր խոսել

Քեթիի հետ, և այն ժամանակ, երբ ևս բացեց Ikea-ից իր համար գևած փոքրիկ զգեստապահարանի պտուտակների տուպակը: Միլիոնավոր պտուտակները թափվեցին հատակին ու գործվեցին տարբեր ուղղություններով, ասես փախչում էին մեջտեղի կամիկածե պտուտակից:

- Լավ, լավ,- արծագանքեց Քեթին, ու երկու բառով հասկացրեց, որ նկատել է, որ ևս սկսում է զայրանալու, և որ կռվելու ցանկություն չունի: Եվ որ պատրաստվում է վերադառնալու բազմոց-մահճակալին՝ իր սիրելի «ժամադրություն միլիոնատիրոջ հետ» հաղորդումը դիտելու, որտեղ պատահական կանայք ժամադրվում են միլիոնատերերի հետ, և յուրաքանչյուրը հույս է փայփայում, որ շուտի վերջում հենց իրեն կընտրեն: Մրցակա՞ր: Եվս մի ժամադրություն. հավանաբար Բահամյան կղզիներում մերձըղավազանային կյանքի կամ դեպի մոլորակի ամենագեղեցիկ ու դիտարժան վայրերը կատարած ակումբային դասի երկար ուղևորությունների սկիզբ:

Անցավ մի ժամ: Տաքացավ, երբ հագավ մոխրագույն ջեմպերը ու գրեթե մոռացավ ծխելույզում մնացած կենդանու մասին: Բայց երբ եկավ ցնցուղ ընդունելու սովորական ժամը՝ հեռուստատեսային հաղորդումից անմիջապես առաջ, որտեղ ախոռները վերածում են պալատների, Փիթերը հիշեց, որ ջուրը սառել է: Հիմա, երբ դարձյալ կարճաթև շապիկով էր, նրան թվաց, թե բնակարանում սառնամանիք է: Իսկ ևս ցուրտն ավելի վատ էր տանում, քան Քեթին: Քեթին սովոր էր: Բայց ախր ինչո՞ւ պիտի ստիպված սառը ցնցուղ ընդունի մի հիմար թռչնակի պատճառով, որը որոշել է գլուխը խցկել ուրիշի տուն: Ինչո՞ւ պիտի անի՞ծված թռչունը նրանց առաջին վեճի պատճառ դառնա: Քերժի հարաբերությունների փայլեցրած ապակե մակերեսը, որոնցից այնքան գոհ էին: «Անի՞ծվե՛ն դու,- քթի տակ փնթփնթալով՝ դիմեց թռչնին, երբ միացրեց կաթսան, ու քստքստոցը վերսկսվեց: Տասը ռոպեից դուրս եկավ լոգասենյակից. մագերից ջուր էր կաթում, փաթաթվել էր սպիտակ ցամքոցով:

Քստքստոցը հիմա շատ ավելի հախուռն էր և, որ ավելի վատ է, ուղեկցվում էր տագնապալի աղմուկով: Թռչնակը երեխայի պես լաց էր լինում: Բազմոց-մահճակալին նստած, գլուխն ափերի մեջ՝ Քեթին նայում էր կաթսային, ասես հետևում էր ինչ-որ մեկի կյանքի վերջին պահերին:

Տեսնելով, թե ինչպես է բռնել գլուխը, Փիթերը մտածեց, որ, հավանաբար, սաստիկ գլխացավ ունի:

- Գլուխդ ցավո՞ւմ է,- հարցրեց:
- Մի քիչ:

Մի քիչ: Ուրեմն իսկապես երբեմն գլխացավեր էր ունենում, թեպետ մի անգամ ասաց, իբր գլուխը երբեք չի ցավում, բախտը բերել է, գաղափար չունի, թե ինչ է սինուսը, ու որ երբեք չի մրսել-հիվանդացել: Թռչնակն իր կտուցով ևս մեկ պղպջակ էր պայթեցրել: Փիթերը ևս լուռ անհամաձայնություն կարողաց Բեթիի դեմքին: Գուցե ևս մտածում էր, որ Փիթերը չափից դուրս դաժան է փոքրիկ կենդանու հանդեպ, որն ընկել է իրենց ծխնետույզ: Ո՞վ գիտի: Գուցե սնունդ էր փնտրում, որ հետ տանի իր բույնը, կերակրի ճտերին, երբ սայթաքել ու ընկել էր ծխնետույզի մեջ: Հանկարծ մտածեց, որ վերածվել է դաժան մարդու, որը խղճի խայթ չի զգում իրեն նյարդայնացնող կենդանուն չարչարելիս: Այդքան ժամանակ Բեթիին չէր ներկայացել այդ կերպարով: Կտրուկ անջատեց տաքացուցիչն ու բարձրացավ ձեղնահարկ՝ հագնվելու:

Վերադառնալով առաջին հարկ՝ լվացարանի տակից հանեց գործիքների արկղը, պտուտակահան գտավ ու փորձեց բացել կաթսայի կափարիչը: Առնվազն ութ պտուտակ պիտի թուլացներ: Ու քանի որ ձեռքից ոչինչ չէր գալիս, նրան ոգևորում էր այն փաստը, որ կարողացավ առանց մեծ ջանքի քանդել բոլոր ութ պտուտակները: Մի քիչ հրելով՝ իրեն քաշեց կաթսայի կափարիչը, և այն դուրս եկավ:

Մի պահ հույս ուներ, որ կափարիչի տակ կգտնի իրեն սպասող թռչնակին, ուստի դանդաղ քաշեց, որ թռչի-գնա: Բայց պարզվեց՝ ներքին համակարգը շատ ավելի բարդ էր, քան կարող էր ենթադրել: Ծխնետույզը (պարզ խողովակաշար, ինչպես կարծել էր, ու իրավացի էր) կիսով չափ կաթսայի մեջ էր, որը նման էր երկաթե արկղի, համարյա չիրկիզվող պահարանի: Մեջտեղում լամպի ստուգիչ կար, իսկ դրա շուրջը՝ առնվազն վեց գլան, յուրաքանչյուրից կարմիր կամ կանաչ պլաստմասսայե ժապավեն էր կախած: Գաղափար չունեի, թե ինչ են նշանակում ժապավենները: Փորձեց ներքևից նայել ծխնետույզի մեջ, որ տեսնի թռչնակին, բայց, մթությունից

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

բացի, ոչինչ չտեսավ: Հիմա հատակին երևում էր երեք սև փետուր, որոնք ինչ-որ տեղից ընկել էին, երբ բացել էր կափարիչը: Դրանք էլ փոքր չէին: Կաթսայի կափարիչն արդեն հատակին էր, ու քստքստոցը վերածվել էր հատու հարվածների դղրոյունի, ինչը, անկասկած, վկայում էր տազևապի մասին:

Այլևս չէր կարող քանդել կաթսան: Ինչ հնարավոր էր անջատել, անջատել էր, և վստահ էր, որ եթե փորձի մի բան էլ քանդել, սխալ կանի: Ամեն դեպքում, ուրիշ պտուտակներ չէր տեսնում, ու պտուտակահանը ձեռքին՝ հասկանում էր, որ պտտելու բան չկա: Դմփոմփոցն արդեն անտանելի էր, ուստի հետ դրեց կափարիչն ու ձգեց ութ պտուտակները: Թեթին կստած էր մահճակալին, ու Փիթերը հասկանում էր, որ տան տղամարդն ինքն է և պարտավոր է ինքնուրույն լուծել խնդիրը:

- Վախենամ ստիպված ենք լինելու սպանել,- անհարմար զգալով ասաց նա՝ ինքն էլ չիմանալով, թե Թեթին ինչպես կընդունի, և արդյո՞ք դա միակ լուծումն է ու իր վերջնական որոշումը:

- Ուզում ես սպանե՞լ նրան,- զարմացած արձագանքեց Թեթին:- Ինչո՞ւ: Ուրիշ տարբերակ չունե՞նք:

- Էլ ի՞նչ անենք,- հարցրեց Փիթերը, ու ձայնի մեջ նորից կոպիտ երանգներ հայտնվեցին:

Չէր ուզում անվստահության որևէ նշան ցույց տալ: Կասկածներով լի տղամարդը տղամարդ չէ: Արագ միացրեց լամպը, բայց այս անգամ սլաքը 2-ից փոխեց 5-ի՝ առավելագույն ջերմաստիճան, նախատեսված փետրվարյան սաստիկ ցուրտ գիշերների համար: Հանկարծ քստքստոցն ուժեղացավ, ու քիչ հետո գոռում-գոչյունը վերսկսվեց: Թեթին այլևս չէր կարող դիմանալ, ուստի վազեց լոգարան ու իր հետևից փակեց դուռը. գրեթե երեք այդպես չէր անում:

Բոցին նայելով՝ չգիտես ինչու մտածեց համակենտրոնացման ճամբարի մասին: Հիշեց զուավոր գիշերազգեստով տղային՝ ֆիլմի վերջին տեսարանից: Թռչնակին գազով թունավորելու փոխարեն խորովել էր, որովհետև չէր կարողացել հանգցնել կրակը: Մտածեց, որ ևս մի քանի րոպեից թռչունը կմեռնի: Եթե չխորովվի, շնչահեղձ կլինի, կամ կմեռնի սրտի

նուպայից: Սարսափի այդ պայմաններում երկար չի ձգի, շուտով թևերը կկոտրվեն ծխնելույզի պատերին: Կփործի շունչ քաշել ու կհասկանա, որ դժոխքում այլևս օդ չկա: Ձայն կտա ծխնելույզի ծայրին թառած իր ընկերներին, բայց նրանք միայն կմիանան նրա լացին, ուրիշ ոչինչ: Նայեց պատուհանից, որ տեսի՝ թռչնակի ընկերները դեռ այնտե՞ղ են, բայց արդեն մթնել էր, ու նույնիսկ ծխնելույզը չէր երևում, առավել ևս՝ վրան թառած ինչ-որ բան: Թռչունները հավանաբար թռել-գնացել էին՝ հասկանալով, որ արեցին իրենցից կախված ամեն բան, և որ, ինչպես հաճախ պատահում է, դա բավարար չէր խնդիրը լուծելու համար:

Վետո գլխում ուրիշ միտք ճնվեց: Խնդիրը չի լուծվի թռչնի մահով: Բանը կհասնի նրան, որ մեռած կենդանին կմա սարքի մեջ, որը բացելու մասին գաղափար անգամ չունի: Դիակ՝ խոհանոցում: Թռչունը գարշահոտություն կտարածի, ծխնելույզի մեջ ճանճեր, գուցե նաև ուրիշ միջատներ կլցվեն, մեկ-երկու հսկայական ուտիճ, առնետի չափ, ու երբ հայտնվեն ծխնելույզի մեջ, արագ կառնեն խոհանոցի ուտելիքի հոտն ու մյուս կողմից դուրս կթռչեն: Վետո ի՞նչ կլինի: Ինքն ու Թեթին քնում էին խողովակից ընդամենը երկու մետր հեռավորության վրա: Պատկերացնելով թրթուրների գաղութներով լի խոհանոցը՝ անջատեց կաթսան, խոր շունչ քաշեց ու հայիոյեց. մոր տևից հեռանալուց հետո մոռացել էր՝ ինչպես են հայիոյում: Ստաժեց մոր մասին, հիշեց, թե նա ինչպես աղավուն նետեց արգանակի մեջ, ու տունը լցվեց անուշ բույրերով: Վետաքրքիր է, այս ազոա՞վն էլ է այդպես բուրում: Փորձեց որսալ հոտը, բայց չկարողացավ: Խողովակի մեջ քստքստոցը շարունակվեց: Վառված, թե ոչ, թռչնակը դեռ այնտեղ էր, կռիվ էր տալիս մահվան դեմ:

Որոշեց, որ իրենից ոչինչ կախված չէ: Ստիպված են սպասել մինչև վաղը: Կզանգեն վարձակալման գործակալություն, կբացատրեն պատահածը, կասեն, որ խնդիրը պետք է լուծվի շատ արագ:

- Մեռա՞վ,- հարցրեց Թեթին. աչքերն արցունքոտ էին, երբ ոտքերը քարշ տալով մտավ խոհանոց:

- Չէ, անջատեցի: Եթե մեռնի, ընդմիշտ կմա այնտեղ: Վրան հազարավոր միջատներ կհավաքվեն:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

- Միջատներ:

- Իհարկե:

- Աստված իմ:

Քեթիին թողեց խոհանոցում, կաթսան ուսումնասիրելիս, ինքը բարձրացավ ձեղնահարկ ու փորձեց մոռանալ թռչնակի մասին: Բայց երբ քիչ հետո լսեց, թե Քեթին կաթսայի կափարիչն ինչպես է դնում հատակին, սանդուղքով շտապեց ցած՝ լարված ու համարյա դողողալով, փորձելով գուշակել, թե մտքին ինչ կա:

- Ի՞նչ ես ուզում անել, Կահրի, գրո՞ղը տանի,- գոչեց առանց մտածելու: Այդպես երբեք չէր խոսել: Բայց արդեն ուշ էր: Լսեց, թե խոսքերն ինչպես արձագանքեցին բնակարանի պատերից, ու աղջկա աչքերի մեջ զարմանք կարդաց:

- Ես ուղղակի... ուղղակի փորձում եմ հասկանալ՝ ինչ կարելի է անել,- ասաց բեկված ձայնով:

- Ես արդեն փորձել եմ հասկանալ: Ու հասկացել եմ, որ ոչինչ չի կարելի անել:

- Բայց եթե մի քիչ տեղաշարժենք խողովակը, գուցե հետևից դուրս գա, իր?: Հասկանո՞ւմ ես՝ հետևում խողովակն ամրացրած չէ պատին:

- Չէ, չէ, չէ,- ասաց Փիթերը, ասես ծխելույզների գիտակ էր:- Այն բոլոր կողմերից փակ է: Համակարգի մի մասն է: Ուղղակի այդպես է երևում: Հավատա՞ր ինձ: Ստուգել եմ: Ոչինչ չի մնում անել. միայն քնել, առավոտյան արթնանալ ու զանգ տալ էդ անիծված ընկերություն:

Գրո՞ղը տանի: Անիծված: Քեթին երբեք նրան այդքան բարկացած չէր տեսել: Նա երբեք Քեթիի հետ այդպես չէր խոսել: Պատկերացնում էր, թե ինչ է մտածում: Որ նա էլ նման է բոլոր տղամարդկանց, որ ինքն իրեն խաբել է՝ մտածելով, թե Փիթերը ջենթլմեն է, որ երբեք ձայնը չի բարձրացնում ու երբեք այդպիսի բառապաշար չի օգտագործում կնոջ հետ խոսելիս: Անշուշտ, հիմա հասկանում էր. Փիթերը գաղափար չունի ինչպես արձագանքել ճգնաժամի պահին: Կերպարը, որ ստեղծել էր համատեղ ապրած ամիսների ընթացքում, մի վայրկյանում փոխ էր գալիս, հալչում, ինչպես մոմե արձանիկը՝ գազօջախում: Համարյա լսում էր Քեթիի հարցը, թե ինչու

Ե ավելի շատ բարկանում իր, քան թռչնի վրա, երբ ինքը ոչ մի սխալ բան չի արել: Պառկեց բազմոց-մահճակալին, իսկ քիչ անց նրան միացավ Լան Փիթերը: Անջատեցին լույսն ու փորձեցին քնել: Բայց չկարողացան: Փիթերը մտածում էր, որ այն ամենից հետո, ինչ ասաց ու արեց, Զեթին հիասթափված կլինի: Երկու ժամում ոչնչացրեց մի ամբողջ տարի ստեղծած հեղինակությունը: Բնավորության գծերը, որոնց շնորհիվ գրավել էր Զեթի ուշադրությունը՝ լավատեսությունը, մտքի պարզությունը, չափի ու հումորի զգացումը, առ ոչինչ էին դարձել: Իր՝ խելքը թոցրած հիմարի թեթև ծեռքով: Սկսեց մտածել, որ ճիշտ կլինի բացատրել նրան, որ չանհանգստանա: Հետո դուրս կգան, կավաղոս կխմեն, բաժակ կբարձրացնեն ագռավի համար, որը հաջորդ առավոտ ազատության մեջ կլինի: Կարելի է գևալ մետրոյի կայարանամերձ բար: Այն բաց է մինչև ուշ գիշեր: Հետո անուշ բզզալով տուն կվերադառնան, սահելով, ինչպես ճերմակ ամպերն ամառային երկնքում, ապա խաղաղ քուն կմտնեն, իսկ առավոտյան արթնանալուն պես առաջին հերթին կգանգեն գործակալություն՝ հարցնելու, թե ինչով կարող են օգնել: Դրա փոխարեն անկողնում էին, մեջք մեջքի տված: Հերթական անառողջ զույգը, որ քնում է՝ առանց իրար բարի գիշեր մաղթելու, քանի որ հարաբերությունների լավագույն պահերը վաղուց եկել-անցել են: Փիթերը համոզված էր, որ թռչնակը հրահրել էր ոչ թե մեկ, այլ մի քանի վեճերից առաջինը, և յուրաքանչյուրը նախորդից ավելի կործանարար էր լինելու, ու խաղաքարտե տևակի պես ամեն ինչ փլվելու էր, ինչպես բազմաթիվ այլ նախկին հարաբերություններ: Ի՞նչ անի, եթե դարձյալ մենակ մնա: Ո՞ր գևա: Որ ի՞նչ անի:

Փակ աչքերով, բայց արթմնի՝ լսեցին, թե խոհանոցից եկող աղմուկն ինչպես հանկարծ ուժեղացավ: Հիմա՞ ինչ եղավ: Ուրիշ թռչո՞ւն է ներս ընկել: Երկուսից ոչ մեկը ցանկություն չունեի վեր կենալու և տեսնելու, թե ինչ է կատարվում: Միևնույն է, առանձնապես ոչինչ չէին կարող անել, միայն մնալ ծածկոցի տակ ու փորձել անտեսել այն, ինչ հիմա արդեն գրեթե անհնար էր անտեսել: Աղմուկին շուտով ավելացավ ճոռոցը, հետո ինչ-որ բան կտրվեց, ու նրանք ստիպված բացեցին աչքերը, որ տեսնեն, թե ինչ է կատարվում իրենցից ընդամենը երկու մետր հեռու:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

- Ինձ թվում է՝ սրտի նուպա է,- ասաց Քեթին՝ խախտելով նրանց միջև լռությունը, երբ երկուսն էլ նստած էին անկողնում:

Փիթերը մեկնեց աջ ձեռքը, որ միացնի լույսը, ու նրանք նայեցին խոհանոցի կողմը: Խոհանոցի սեղանին՝ լվացարանի ու գազօջախի միջև, սև ագռավ էր, մեծ ու տգեղ, դևի պես:

- Հիսո՛ւ Թրիստոս, գրո՛ղը տանի,- կամացուկ ասաց Փիթերը՝ հուսալով, որ ագռավը չի լսի: Ինչպե՞ս էր դուրս պրծել խողովակից: Ուրեմն Քեթին իրավացի էր, երբ ասաց, որ թռչնին կարելի է հանել՝ առանց խողովակը կտրելու: Ասում էի, չէ՞, պետք չէ բարձրացնել կափարիչը,- գայրացած հանդիմանեց նրան:

- Հա, հիմա էլ ե՛ս եմ մեղավոր,- պատասխանեց նա, վախեցած, ինչպես և Փիթերը, հայացքը չկտրելով ագռավից, որը կարծես փշուրներ էր գտել միկրոալիքային վառարանի մոտ ու հիմա կտցահարում էր:

«Տես, է՛, հեզնում է»,- մտածեց Փիթերը, երբ երկուսով վեր կացան անկողնուց: Քեթին կուչ եկավ անկյունում, ագռավից հնարավորինս հեռու, իսկ Փիթերը վերցրեց սավանն ու դանդաղ քայլեց դեպի խոհանոցի սեղանը: Հիշեց, թե հայրն ինչ արեց մանկության տարիներին, երբ չղջիկ էր մտել տուն. ծածկոցը զցցեց վրան, հետո տարավ տանիք ու թափ տվեց, ինչպես ծեր տնային տնտեսուհին է փռելուց առաջ թափ տալիս սավանը: Բայց տանիք չկար, որ բարձրանար: Միայն ձեղնահարկի պստիկ պատուհաններն էին մի քիչ բաց, ինչն ավելի վատ էր:

Թռչնից մի մետր հեռավորության վրա էր, երբ հասկացավ, թե իրակալում ագռավն ինչ ահարկու կենդանի է: Նկատեց, որ հատակը ծածկված է փետուրներով, իսկ այն փետուրներին, որ դեռ կպած էին թռչնի մարմնին, ամենայն հավանականությամբ, արյան հետքեր էին: «Կամ էլ քրտինքի»,- մտածեց. թռչունները քրտնո՞ւմ են, թե՞ չէ: Անկյուններից բռնեց ծածկոցը, ու երբ մտածեց, որ բավականաչափ մոտեցել է, նետեց ագռավի վրա: Բայց Փիթերի ուզած տեղում վայրէջք կատարելու փոխարեն ծածկոցը դանդաղ սահեց ցած: Ագռավը թռավ ուղիղ նրա գլխի վրայով ու իջավ Քեթին ծաղկանկար բարձին: Քեթին սուր ճչալով վազեց ձեղնահարկ, երբ ձիթապտղի յուղի շիշը, որին ծածկոցը դիպել էր, ընկավ ու արագ գլորվեց դեպի սեղանի ծայրը:

- Գրողը տակի, գրո՛ղը տակի,- գոռաց նա, երբ շիշը հազար կտոր եղավ, ու յուրի լճակն աչքի առաջ սկսեց տարածվել: Նորից վերցրեց ծածկոցն ու մոտեցավ մահճակալին: Բայց ագռավը տեսավ նրան ու սկսեց բնակարանի մի ծայրից մյուսը թռչել՝ բախվելով աստիճաններին, պատուհաններին, առաստաղին ու զգեստապահարանին՝ ամեն շարժման հետ դեսուդեն անելով խոշոր սև փետուրները: Հետո որոշ ժամանակ մնաց հեռուստացույցի գլխին, որտեղ սկսեց արձակել ինչ-որ բան, որ նման էր կանաչ կղանքի: Երբ ավարտեց, ու տիղմը սկսեց հոսել Էկրանն ի վար, նորից թռավ, բայց այս անգամ լոգասենյակ: Կտրուկ դարձավ հայելուն. հավանաբար կարծելով, թե հայելու մեջ ուրիշ ագռավ կա, իջավ ու կտուցի ծայրը «մյուս ագռավի» կտուցին մոտեցնելով՝ տարածեց թևերն ու սրբեց-տարավ դարակին շարված ամեն բան՝ օձանելիքի սրվակներ, Քեթիի շպարի պարագաները, ատամի խոզանակներ: Ծածկոցը դեռ ձեռքին՝ Փիթերն ուղղվեց լոգասենյակ, ու երբ նկատեց ագռավին լոգարանում, նրա կողմը նետեց: Բայց ագռավն արագաշարժ էր ու ճիշտ ժամանակին թռավ: Դատարկ ձեռքերով՝ Փիթերը կարծես անզեն ոստիկան լինելու գիևված հարձակման ժամանակ: Ագռավը բացահայտ արհամարհանքով նայեց նրան, տարածեց գարշահոտ թևերն ու գնդակի պես սուրաց նրա կողմը: Վախից խելագարված՝ Փիթերը հագիվ խույս տվեց:

- Ինչո՞ւ չկանգնեցրիր նրան,- զարմացած հարցրեց Քեթին երրորդ աստիճանից, հետո հետ վազեց ձեղնահարկ:

- Դո՞ւ ինչու չկանգնեցրիր: Ինչո՞ւ չարեցիր,- ծաղրեց Փիթերը՝ Քեթիի ձևն անելով. աչքերը զայրույթից կարմրել էին, ձեռքերը դողում էին:

Նրան թվաց՝ նավը սուզվում է: Տուրը հասել էր նավապետի խցիկ: Կեղտոտ փոքրիկ թռչունը ոչնչացնում էր նրանց հարաբերությունները: Իսկ եթե չընկնե՞ր ծիսելույզ: Ո՞վ գիտի, քանի՞-քանի երջանիկ իրադարձություն էր վիճակված նրանց, եթե չլիներ այդ անկումը: Ինչքան էր երագում երեխաներ ունենալ Քեթիից: Թռչունը մեկ առ մեկ սպանում էր նրանց՝ դեռ չսաղմավորված: Սպանում էր փոքրիկ երեխաներին, որոնք նման էին մայրիկին՝ աչքերի տակ պեպեններով ու սուր քթիկով: Այն քթիկով, որին թեթև դիպչում էր, որ արթնացնի Սանգո ծովածոցում: Սկսեց անիծել այն

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

պահը, երբ որոշեց կաթսայում չխորովել թռչնակին, երբ այդպիսի տարբերակ կար: Ի՛նչ հիմարն է: Ուզում էր իրեն պահել իսկական միսիոնների պես, իր բարձրության վրա, բայց հիմա նորաթուփ մարդակերները ողջ ողջ խժռում էին նրան:

Ազոռավը կարծես հոգևել էր թռչելուց ու ամբողջ տնով մեկ սև փետուրները տարածելուց: Կանգ առավ անկյունում, որտեղ պատասպարվել էր Քեթին, երբ դուրս էր եկել անկողնուց, ու հիմա բոլորը կարճ դադար ունեին՝ պատահածի մասին մտածելու: Բնակարանը լցվել էր լոգարանից տարածվող օծանելիքի կոկտեյլի ու խոհանոցից փչող ձիթայուղի հոտերով, ազոռավն անշարժ էր անկյունում, հավանաբար գլուխը պտտվում էր, լարովի խաղալիքի պես մի կողմից մյուսն էր թեքում, վերուվար անում: Փիթերը վերցրեց ձեռքի տակ ընկած առաջին բանը՝ հեռակառավարման վահանակը, ու արագ նշան բռնելով՝ կատաղի նետեց ազոռավի գլխին: Համոզված էր, որ կդիպչի, բայց տարբերակ չկար: Թռչունը հեշտությամբ խույս տվեց վահանակից, որը կտոր-կտոր եղավ, հետո թռավ-նստեց ուղիղ Քեթիի գլխին: Նրա խոսքերը՝ անիծվե՛ս դու, տխմա՛ր, վերածվեցին ճիջի. թռավ վերջին աստիճաններն ու դուրս վազեց բնակարանից՝ հետևից շրխկացնելով դուռը:

Միջանցքում Քեթին հասկացավ, որ շնչահեղձ է լինում:

Գոռգոռոցն ու իրարանցումն արթնացրել էին հարևաններին, այդ թվում և Թոմասին, որն ապրում էր հարևան բնակարանում. նա համոզված էր, որ ինչ էլ կատարվում է կողքի տանը, խաղաղ չի ավարտվելու: Չախ աչքը դիտանցքին՝ Թոմասը տեսել էր, թե աղջիկն ինչպես է դուրս գալիս ու հետևից շրխկացնում դուռը: Անմիջապես բացեց իր դուռը և «Արի՛, արա՛գ արի» ասելով՝ ներս տարավ նրան ու փակեց դուռը:

Քեթին ամբողջ մարմնով դողում էր, գլուխը հենել էր նրա կրծքին: Թոմասը հանգստացրեց ու վստահեցրեց, որ ոստիկանությունն արդեն ճանապարհին է:

ԴԵԱՊԱՆԸ

L-ambaxxatrici

Թաղումը բազմամարդ չէր, բայց բավական մեծ էր, այնպես որ եթե անհավանական դեպք պատահեր, օրինակ՝ եկեղեցին ռմբակոծեին, ամբողջ երկիրը կկանգներ զանգվածային քաղաքական ճգնաժամի առաջ: Ի լրումն հանրապետության նախագահի և վարչապետի, այնտեղ էին ամբողջ նախարարական կազմը և տասնյակ պատգամավորներ: Եվ ամբողջ դիվանագիտական կորպուսը:

Դեսպանին շատ էին սիրում. դիվանագիտական սանդուղքով բարձրանալիս այդպես էլ չկորցրեց բնական սոցիալական հակումները: Ու միշտ պատրաստ էր պատմություններ պատմելու. եթե նույնիսկ պատահաբար հանդիպում էիր, ոտքի վրա մի բան էր պատմում: Բնական է, դրանց պակաս չկար. ականավոր կարիերա էր ունեցել՝ մի դեսպանատնից մյուսը տեղափոխվելով:

Դեսպանի պատմողական տաղանդի համեմատ՝ թաղման քարոզը նույնքան հրապուրիչ էր, որքան ժամացույցի թկթկոցն անքուն գիշերներին: Մի՞թե հնարավոր չէր գտնել ավելի լավ հոճետրական կարողություններով մեկին: Ես, անշուշտ, ավելի հարմար բան կգտնեի այս հրաշալի մարդու մասին խոսելու համար: Նա արժանի էր ավելիին, և մի պահ անդիմադրելի ցանկություն ունեցա բարձրանալու ամբիոն և գրավելու այն: Փոխարենը դուրս սողոսկեցի գավիթ՝ ծխելու: Մի քանի անգամ փստացրել էի, երբ ինձ միացավ Ռանդոլֆը: Հիմա նա The Times -ում է, բայց ինչպես պատահում է թաղումներին, մեր զրույցը շատ արագ վերադարձավ հանգուցյալին:

- Գնա՛ց,- երգեցիկ սասց նա, ասես քահանա լինե՛ր:- Վաղո՞ւց էիր ճանաչում:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

- Մի քանի տարի,- պատասխանեցի՝ կրակվառիչը նրան փոխանցելով:

- Ես շատ լավ էի ճանաչում,- ասաց:- Մի քանի անգամ հարցազրույց եմ վերցրել: Հետաքրքիր կին էր: Ի՛նչ ափսոս, որ այսքան երիտասարդ մահացավ: Քաղցկեղ ու վերջ: Բուժումը ոչ մի կերպ չէն գտնում:

Նա գնաց: Հետաքրքիր է: Երիտասարդ մահացավ: Քաղցկեղ: Բուժում: Կարելի էր մնալ ներսում. այնտեղ գոնե կկարողանայի փակել աչքերս ու քուն մտնել:

Յանկություն չունեի պատմելու նրան, թե ինչ պայմաններում եմ ծանոթացել դեսպանի հետ: Ռանդոլֆն ու ես միասին էինք սովորել համալսարանում, բայց երբեք մտերիմ չէինք եղել: Նույնիսկ եթե եղել էինք, դեսպանի մասին իմ պատմությունն այնքան անծնական էր, որ չարժեք պատմել թաղման արարողությանը: Այն ժամանակ զգում էի, որ աչքը չի կտրում ինձնից. ինձ հետ այդպես պատահում է թաղումների: Օրինակ, երբ տատիկը մահացավ, չէի կարողանում նայել դագաղին: Վստահ էի, որ նա անսպասելի իմացել է ամեն ինչ, որ պատահել էր իր կենդանության օրոք: Նույնիսկ եթե անծամբ ներկա չէր եղել: Ամեն անգամ, երբ ստել էի իրեն, ամեն անգամ, երբ իր դրամապանակից մի քիչ փող էի թօքրել, կամ, որ ավելի վատ է, երբեմն ձեռնաշարժությամբ էի զբաղվել իր մեծ մահճակալին: Թաղմանը զգում էի, թե հայացքով ինչպես է խեթում հասկացնելով, որ հիմա գիտի. ես ամենևին էլ այն հրեշտակը չեմ, որ ձևացնում եմ: Նույնը վերաբերում է դեսպանին: Չէ, բնականաբար չեմ պատրաստվում պատմել: Թող Ռանդոլֆը եզրակացնի, որ ինձնից լավ էր ճանաչում նրան: Հետո՞ ինչ: Թող մտածի, թե իր մի քանի հարցազրույցներով անջնջելի հետք է թողել նրա կյանքում: Տխմա՛ր:

Երբ առաջին անգամ հանդիպեցի դեսպանին, քսանյոթ տարեկան էի. անկասկած, կյանքիս լավագույն ժամանակն էր: Մի օր մի աղջկա հետ էի քնում, մյուս օրը՝ ուրիշ, փողը՝ գրպանումս, կյանքն ազատ, առանց կապանքների: Ու եթե աղջկա հետ հարաբերությունների առաջին մի քանի

ամիսները լավագույն շրջանն են, ապա, հավատա՛ր ինձ, առաջին մի քանի տարիներին հաջորդած տասնամյակն ավելի լավ է: Նույնիսկ այն ժամանակ երբեմն գիտակցում էի, որ հրաշալի օրեր եմ ապրում: Ուստի երևի պատկերացնում ես, թե հիմա, շատ տարիներ անց, որքան եմ փայփայում հիշողությունները:

Իմ պատմությունը պատահեց մարտին: Օրերն արդեն երկարում էին, բայց դեռ ցուրտ էր, ուստի ցանկություն չունեի դուրս գալու լավ ջեռուցվող դեսպանատնից, որի ամեն անկյունում բուխարիներ կային: Համարյա բոլորը գնացել էին, բայց ես չէի շտապում վերադառնալու հյուրանոցում ինձ սպասող դատարկ սենյակը: Չեմ հիշում, թե այդ երեկո ինչպես սկսեցինք խոսել սեքսի մասին: Պատճառը երևի իմ պոեզիան էր, որով այն ժամանակ կլանված էի: Մի բան հաստատ գիտեմ. գնացի նրա գրասենյակ, որ մակագրեմ գրքիս մի քանի օրինակ, և մի պահի նա հիշատակեց «Շոպեն» բանաստեղծությունը: Գրել էի Վարշավայի օդանավակայանում, մի տղամարդու և մի կնոջ մասին, որոնք հանդիպում են մուտքի մոտ, ծանոթանում հիևգժամյա ուշացման ընթացքում և ի վերջո փակվում տղամարդկանց զուգարանում: Ասաց, որ այդ բանաստեղծությունն ամենաշատն է հուզել իրեն, և որ իրեն գրավում են նոր ծանոթացած մարդկանց սեքսի պատմությունները:

Երբ դռան մոտ դիմավորեց, թվաց, թե ծաղրում է, բայց երբ մի քանի խոսք ասաց «Շոպենի» մասին, աչքերը կարծես լայնացան, և սկսվեց մեր երկար խոսակցությունը: Կարծես երկու մտերիմ ընկերներ լինեինք, որոնց միջև գաղտնիքներ չկան, ու միևնույն ժամանակ՝ զույգ, որն առաջին անգամ էր միասին ճաշում ու խոսելու շատ բան ուներ: Իր մտերմիկ հարաբերությունների մասին դյուրիչ պատմություններով լի մի ժամն աննկատ անցավ: Հետո հիշատակեց արքայազնի մասին:

- Ահա թե ինչու քնեցի արքայազն Չարլզի հետ,- ասաց,- ոչ թե որ անսահման բարետես էր, կամ ավելի բարետես, քան տղամարդը, որի հետ շփվում էի այն ժամանակ: Բայց նա արքայազնն էր, գրո՛ղը տանի, և ընդամենը մի քանի շաբաթից ամուսնանալու էր Ղայանայի հետ: Զգացողություն չկար, թե սխալ բան եմ անում: Ու նրա հետ քնելը նման էր... չգիտեմ... պատմական նշանակություն ունեցող իրադարձության:

Կարծես զգալով, որ ուզում եմ ուրիշ հարց տալ, շտապեց, ու շուրթերին ժպիտ հայտնվեց, որը չկարողացավ թաքցնել:

- Ինչևէ, ես քեզ համարյա չեմ ճանաչում: Ինչո՞ւ եմ պատմում այս ամենը: Լա՛վ գիտես, թե ինչպես ստանաս ուզածդ, չէ՞:

Հիշեցի սլովենացի ընկերոջս. որտեղ էլ լիներ, կարողանում էր նվաճել որևէ կնոջ ուշադրություն, նույնիսկ եթե նա ամուսնու հետ էր խնջույքին: Տաղանդ ուներ կանանց ներգրավելու այնպիսի գրույցների մեջ, որոնք նրանք ուզում էին անվերջ շարունակել: Քայլող հանրագիտարան չէր, բայց շատ էր տարբերվում մարդկանցից, որոնք շատ գիտեն քիչ բաների մասին կամ ոչինչ չգիտեն: Նա քիչ գիտեր շատ բաների մասին: Միայն Աստծուն է հայտնի, թե քանի անգամ է վեճերի առիթ դարձել, քանի գույգ է երեկոն ավարտել գոռոռոցներով, տունդարձի ճանապարհին մեքենայի մեջ փորփրել հին վերքերը: Իսկ նա այդ ընթացքում արդեն նոր ցանց էր հյուսում ուրիշ կնոջ շուրջը:

Ձգում էի, որ իմ սլովենացի ընկերը շատ բան է սովորեցնում ինձ: Օրինակ, որ գայթակղության արվեստին տիրապետելու համար չի կարելի ուղղակի փորձել այն քեզ դուր եկած կանանց հետ: Au contraire ², պետք է սկսել կանանցից, որոնք այնքան էլ դուր չեն գալիս: Այդպես հայտնվում են դատավորի կարգավիճակում, սուպիչը ծեռքիդ: Կարող ես դադարեցնել խաղը, երբ ուզես. միևնույն է, թե ով կհաղթի. ոչինչ ավելի մեծ տպավորություն չի թողնում կնոջ վրա, քան տղամարդը, որին դժվար է տպավորել: Աստիճանաբար աշխատանքը պտուղ է տալիս, սկսում են ավելի շատ ջանք գործադրել՝ անցնելով կանանց, որոնք իրականում դուր են գալիս: Ու միայն երբ տիրապետում են բոլոր հմտություններին, գնում են այն կանանց հետևից, որոնք հունից հանում են:

Պետք է խոստովանեմ. այդ երեկո դեսպանատանը փայլում էր հենց ինքը՝ դեսպանը: Երբեմն մտածում եմ՝ կցանկանայի վերադառնալ ու նորից վերապրել ամեն ինչ՝ առանց որևէ բան փոխելու: Կամ գուցե մի քանի մանրուք փոխելի:

2 Հակառակը:

Եվ այսպես, դեսպանի հետ էի: Հանդիպել էինք ընդամենը հինգ ժամ առաջ: Դրանից շաբաթներ առաջ դեսպանատունն ինձ հրավիրել էր մի քանի բանաստեղծություն կարդալու իմ վերջին ժողովածուից, այն մեկից, որը թարգմանվել էր մի քանի լեզվով, և որի շուրջ դրական արձագանքները զարմացրել էին լույսիսկ ինձ: Երևում էր՝ դեսպանին լույսպես դուր էին եկել բանաստեղծությունները, այնքան, որ ինձ հրավիրեցին դեսպանատան հաջորդ գրական երեկոյին:

Մինչև տեղ հասնելը քիչ բան գիտեի նրա մասին, միայն այն, որ հաջողակ էր, երկար դիվանագիտական գործունեության ընթացքում մեծ հարգանք էր ձեռք բերել: Բայց հենց որ տեսա նրան, տպավորվեցի: Կան կանայք, որոնք տարիքի հետ որոշակի գրավչություն են ձեռք բերում, հմայք, որը չեն ունենում երիտասարդ տարիքում: Դա երևում է նրանց աչքերում. հայացքում մի քիչ տառապանք, հիասթափության նշույլներ, շատ մեծ կիրք ես կարդում: Եվ ամենակարևորը. աչքերը հուշում են հնարավոր վտանգի մասին:

Դեսպանը դեռևս գեղեցիկ կին էր: Բարձրահասակ: Սլացիկ: Ուղիղ մազեր ուներ՝ դարչնագույնի գեղեցիկ երանգով՝ տեղ-տեղ շիկամոխրագույն շերտերով: Երկար, մինչև վերջին կոճակը կոճկած պուտավոր վերարկուով էր, որը կսազեր հնգամյա երեխայի: Երկարավուն գունատ դեմքով ու քթիկով, որը համբույրի հրավեր էր: Լիքը, կլորավուն շուրթերով, որոնք բարակում էին, երբ ժպտում էր՝ ի ցույց դնելով սպիտակ ատամները, այտերը կարմրում էին, աչքերը՝ փայլում:

Ես սիրում եմ կանանց, որոնց հաջողվում է այսպիսի հրաշալի տեսք պահպանել քառասուներեք կամ հիսուն տարեկանում, ուստի մոտեցա, ու երբ իրար ձեռք սեղմեցինք, համբուրեցի նրա երկու այտերը: Ամմիջապես զգացի օժանելիքի բույրը. այն արդեն իսկ խոսում էր մաքրության, բարձր ոճի, գեղեցկության և լավ ճաշակի մասին: Կարծես թե շատ շպարված էլ չէր: Գուցե թե մի քիչ, թերևս մի քանի բարակ գիծ էր արել աչքերի շուրջը, թաց տերևների գույնի: Դժվար է խոսել այսպիսի կնոջ մասին և չնայել նրա աչքերի մեջ: Բայց դժվար է նաև անդադար նայել. իսկապես վտանգ կա, որ

կարող ես բաց թողնել խոսքի ընթացքը: Հենց ծաղրական արտահայտությամբ աչքերն էլ ապշեցրին ինձ, երբ դիմավորեց դռան շեմին: Եթե կենտրոնանալիք բացառապես աչքերի վրա, կարելի էր հեշտությամբ պատկերացնել դրանք ցանկացած տարիքի կնոջ դեմքին:

Իմ սլովենացի ընկերոջ տեսությունները վերաբերում էին նաև սաղորող աչքերին: Նա հանգել էր եզրակացության, որ, ի հեճուկս տարածված կարծիքի՝ դեսպանի աչքերի պես աչքերը միշտ չեն հուշում, որ կինը կոնկրետ այդ պահին սեքսի տրամադրություն ունի: Այդպիսի հայացքը կարող է լինել ոչ ավելի, քան ամբողջ կյանքի սովորություն, ուստի հրապույրը բնական, ամենօրյա արտաքինի մաս էր: Այդպիսի կանանց հետ պետք է զգույշ լինել, որովհետև, ինչպես ընկերս զգուշացրեց, իրականում այնքան էլ ցանկասեր չեն, ու դա կարող է խնդիր լինել քեզ համար:

Դեսպանի հարցը, թե ինչպես եմ ստանում ուզածս, հռետորական էր, ուստի չպատասխանեցի: Փոխարենը դեմքիս ժպիտ ուրվագծեցի՝ կարծես ընդունելով նրա բացահայտած տաղանդը, բայց ցույց չտալով, որ տեղյակ եմ դրա մասին:

- Գիտե՞ս,- շարունակեց նա,- այն, ինչ պատահում է ֆիլմերում, պատահում է նաև իրական կյանքում: Ո՞վ կմտածեր, որ այդ գիշերը կանցկացնեմ արքայազնի հետ: Ես... քանի՞ տարեկան էի: Պիտի որ քսանհինգ լինեի: Այն ժամանակից շատ ջրեր են հոսել:

Նոր էր ժամանել Փարիզ՝ որպես երկրորդ քարտուղար: Ամիսներ անց համոզվեց, որ իր կյանքի կոչումը դիվանագիտությունն է: Դեսպանատների աշխարհում նրան ամեն ինչ դուր էր գալիս. դիվանագիտական քաղաքավարությունը՝ ցանկացած մանրուքի պարագայում, արտասահմանում քո երկիրը ներկայացնելու զգացողություն, օգնություն ու պաշտպանություն, որ տրամադրում են կարիքի մեջ հայտնված հայրենակիցներիդ, քո ազդեցությունը հյուրընկալող երկրի և քո պետության հարաբերությունների վրա: Եվ այլև: Եվ այդպես շարունակ: Սկզբում նրան գրավում էր գլամուրային կողմը. պաշտոնական ճաշկերույթներ, խնջույթներ, ցու-

ցահանդեսներ, թատրոն, նոր ծանոթություններ, նրբաճաշակ հագուստ. ծանրաբեռնված օրակարգ՝ կլոր տարին: Եվ ամենակարևորը, արտասահմանում ապրելու, լեզուն սովորելու և երկրի մշակույթի մեջ ընկղմվելու հնարավորություն: Ճանապարհ, որի ընթացքում հանդիպում ես մարդկանց, որոնք կարող են փոխել քո կյանքը, կյանքիդ ուղին:

1981 թվականի այդ երեկոյան, քսանհինգ տարեկանում նա շատ ուրիշների հետ հայտնվեց Ելիսեյան պալատում: Այն շլացուցիչ էր. հատակի սալիկներն արտացոլում էին առաստաղից կախված բյուրեղապակյա ջահի լույսը: Դեսպաններն ու նրանց ամուսինները ներսում մասնակցում էին նախագահ Միտերանի ընդունելությանը, որը վերջերս, ընդամենը շաբաթներ առաջ էր հաղթանակ տարել: Լսվում էր ջութակների ու տավիղների երաժշտությունը, գավաթների ձևոցը, հյուրերի աղմուկը Dom Perignon-ի հերթական շիշը բացելիս: Ուժքեր մնացել էին նախասրահում, գրկված էին ամեն ինչից, ևույնիսկ մի գավաթ պաստիսից: Նրանց միակ խնդիրը դեսպաններին սպասելն էր, մինչև դուրս կգային ընդունելությունից, ուղեկցել նրանց Ելիսեյան պալատի բակում և հասցնել մինչև մեքենաները: Այդքան բան: Նա կնախընտրեր մնալ ներսում, հյուրերի հետ, բայց ամենից շատ ապշեցրեց այն, որ իր դեսպանը (որը կարող էր օգտագործել առիթը տպավորություն թողնելու համար) այնուամենայնիվ, ներս մտավ մենակ ու ստիպեց, որ նա սպասի ներքևում:

Եվ ահա կանգնած էր Հունգարիայի դեսպանատան քարտուղարի հետ, որին հանդիպել էր մոտ մեկ ամիս առաջ՝ շուկայական ներդրումների խորհրդաժողովին: Երկուսն էլ նկատեցին, որ հյուրերից շատերը ինքնավստահ ներս են մտնում, ու ոչ ոք չէր ստուգում՝ հրավիրված են: Թվում էր՝ հերիք է հասնես նախասրահից դեպի Պալատի հիմնական թև տանող դռանը, և այն ուղղակի կբացվի քո առաջ:

Կուզեք՝ երիտասարդական անմտություն կոչեք, կամ էլ մեղավորը փարիզյան թեթևասահ ամառային երեկոն էր, կամ գուցե երիտասարդները հույս ունեին, որ իրենց դռնից հետ կուղարկեն: Ինչնէ, երկուսով որոշեցին և ուսերը շտկելով ու դեմքի ամբարտավան արտահայտությամբ քայլեցին դեպի դուռը: Երբ մոտ հինգ ոտնաչափ էին հեռու նպատակից,

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

հարսանեկան տորթերի վրա դրվող փոքրիկ փեսաների պես հագնված գինվորները լայն բացեցին դռները: Նրանք ժպիտով ներս մտան:

- Բարի գալուստ Ելիսեյան պալատ,- ասաց հունգարացին՝ Ֆրանսիական առողանությամբ, չափազանց հուզված:- Բանտից փախչելու լավագույն ճանապարհը գլխավոր մուտքն է:

Բարձրացան կենտրոնական սանդուղքով, որը շրջապատված էր Ալեքսանդր Կաբանելի վաղ շրջանի կտավներով, ու երբ հասան մի հարկ վերև ու հայտնվեցին ժամանող հյուրերի խմբում, նրանց առաջ մի ուրիշ դուռ բացեցին՝ դարձյալ ճերմակ ձեռնոցներով և նույն հղկված բարեկրթությամբ: Նրանք հայտնվեցին գլխավոր սրահում՝ հատակը ծածկող գեղազարդ կարմիր գորգերով, թավշե վարագույրներով, ներկված առաստաղով, պատերին նկարներով, շուրջը վառվող մոմերով: Նվազախմբի երաժշտությունը հիմա շատ ավելի հաճելի էր, և նրանք ճանաչեցին Դեբյուսսիի ծանոթ մեղեդին, որը գրեթե բնական միաձուլվում էր գավաթների զրկագոցին և հյուրերի խոսակցություններին:

Հազիվ էին ներս մտել, երբ նկատեցին, որ Միտերանը սեղմում է բոլորի ձեռքերը՝ աջ ու ձախ և կենտրոնում: Ի՛նչ ինքնագոհ էր երևում, վայելում էր այն գիտակցումը, որ հենց ի՛նքն է Ելիսեյան պալատ վերադարձրել սոցիալիստներին: Նրա կողքին Մարգարեթ Թետչերն էր՝ ձևկներին հասնող կապույտ զգեստով, ձեռքին մի գավաթ շամպայն, որի հանդեպ առանձնապես հետաքրքրություն էր դրսևորում: Երկու «մաքսանենգների» ձեռքին հիմա նույնպես գավաթներ կային, նրանք քայլեցին առաջ ու կանգ առան փոքրիկ անկյունում՝ հանգստանալու: Հունգարացի քարտուղարն ինչ-որ բան էր շշնջում տղայի մասին, որն իրենց աչքի առաջ սիլի-բիլի էր անում շիկահերի հետ:

- Իսպանական ընդդիմության առաջնորդը՝ Ֆելիպե Գոնսալեսը: Շատերն են ակնկալում, որ հաղթանակ կտանի հաջորդ ընտրություններում,- շամպայնի դատարկ գավաթը ձեռքին՝ հայտնեց նա՝ ենթադրելով, որ քանզի աղջիկն ավելի երիտասարդ է, տեղյակ չի լինի:

Մի քանի մետր հեռու տեսան նաև վերջերս ընտրված Իտալիայի վարչապետ Տիբոլանի Սպադոլինիին: Անվարժ անզլերենով խոսում էր չորս

հյուրերի հետ, որոնք հավանաբար Չինաստանի դեսպանատնից էին:

- Ուղղակի անհավանական էր,- բացականչեց դեսպանը:- Նկատի ունեմ այն, որ ես՝ երիտասարդ երկրորդ քարտուղարս, շրջապատված էի Եվրոպայի բարձրաստիճան քաղաքական գործիչներով: Մի պահ տառա-ցիորեն բախվեցի Գասթոն Թորնիևի. այն ժամանակ Եվրոպական հանձնա-ժողովի նախագահն էր: Այնքան հստակ եմ հիշում, թե ինչպես շրջվեց ու ասաց՝ ներեցե՛ք: Պատկերացնո՞ւմ ես: Բայց անհարմար էի զգում ու հա-յացքով փնտրում էի իմ դեսպանին, որը չէր երևում: Հունգարացի ուղեկից ս զիլ էր ու կարողացավ հանդարտեցնել ինձ՝ ասելով, որ եթե մեր դեսպան-ները տեսնեն մեզ, ամենայն հավանականությամբ կկատակեն ու կխմեն Ելիսեյան պալատի անվտանգության կենսաջր:

Երկուսով մնացին սրահում պտույտներ տվող մատուցողների սկու-տեղներից շամպայի բաժակներ վերցնելով. ասես մութացկաններ լինեին, որոնք շոջում էին զբոսաշոջիկներով լի հրապարակում: Ծածուկ մոտենա-լով գլխավոր ճաշասեղանին՝ հունգարացին ձգվեց դեպի աղանդերի շքեղ տեսականին, իսկ դեսպանը հետ քաշվեց՝ փորձելով կռահել, թե բազմա-թիվ համեղություններից որն է «Փուա գրան»: Հենց այդ պահին զգաց, որ իրեն մոտեցան:

- Ձեր փոխարեն ինձ չէի զրկի ոստրեններից: Համարյա Ուիթսթեյբլի ոստրենների չափ լավն են:

Շրջվեց ու հասկացավ, որ ուղիղ իր դիմաց արքայազն Չարլզն է՝ սպիտակ կոստյումով և կարմիր թիթեռնիկ-փողկապով, մատը տնկած ճաշատեսակին՝ կիտրոնի մեջ թաթախած մեծ ոստրեներին: Ամենաքիչը հենց նրան էր սպասում ու մի վայրկյան կորցրեց խոսելու ունակությունը: Նրան նայելու ու պատասխանի սպասելու փոխարեն արքայազնը հայաց-քը կենտրոնացրեց ապակե պնակի վրա, որի մեջ պանրի հսկայական կոն էր՝ պայծառ նարնջագույն կեղևով. կեսը կերել էին:

- Ա՛խ, Boulette d'Avesnes,- ասաց զարմանք արտահայտող ձայնով:- Պետք է փորձել:

- Կփորձեմ,- վերջապես կարողացավ ասել նա. ամոթից մեռնում էր:

- Ֆրանսիական պանիրների մարմնավորում,- շարունակեց արքա-

ՊԻԵՌ Զ. ՄԵՅԼԱԿ

յազևը:- Ավելի ուժեղ և կծու, քան գրեթե բոլոր մյուս տեսակները: Գիտե՞ք՝ ֆրանսիացիներն ինչպես են անվանում Boulette d'Avesnes-ը,- հարցրեց նա՝ բարձրացնելով դանակը, որ մի կտոր էլ կտրի:

Պե, իհարկե, աղջիկը գաղափար չուներ:

- Le suppositoire du diable,- և մի կտոր գցեց բերանն ու ծիծաղից պայթեց:- Ես Չարլզն եմ, ի դեպ,- ասաց կոպ տալուց հետո:- Ուրախ եմ ծանոթության համար,- նա մեկնեց ձեռքը:

- Ելենա,- ասաց աղջիկը՝ մեկնելով ձեռքը:

- Հրաշալի անուն է: Ձեզ շատ է սագում:

- Ընտրիակալություն,- ասաց աղջիկը՝ մի քիչ շփոթված ու նաև վախեցած հարցից, որը, վստահ էր, հնչելու էր հետո:

- Եվ դուք այստեղ ներկայացնում եք....

- Իրականում, ես այստեղ չպիտի լինեի: Ընդամենը դեսպանատան երկրորդ քարտուղարն եմ, բայց տեսա, որ բոլորը ներս են մտնում, մտածեցի՝ կարելի է գոնե փորձել:

Արքայազևը փոթկաց, բայց արագ հավաքեց իրեն, ու նրանք սկսեցին խոսել աղջկա երկրի մասին, թե ինչպիսին է կյանքը Փարիզում, և արդյոք կցանկանա՞ր մնալ: Երբ շրջվեց, որ տեսնի, թե ուր կորավ հունգարացի գործընկերը, ոչ մի տեղ չգտավ նրան: Երևի պատահաբար հանդիպել էր իր դեսպանին, որը հանդիմանել ու տրոհից ներքև էր ուղարկել նրան: Նույնիսկ ժամանակ չունեցավ մտածելու, թե որտեղ կարող է լինել իր դեսպանը. Չարլզը թեթևակի դիպավ արմունկին ու կարծես մտքերը կարողավ՝ ասաց.

- Մի՛ անհանգստացեք: Եթե հանդիպեմք ձեր ղեկավարին, Ելենա, կասենք, որ ինձ հետ եք: Հիմա թույլ տվեք ձեզ ներկայացնել իմ լավ ընկերոջը՝ Հելմուտին:

Եվ նրանք քայլեցին Գերմանիայի կանցլերի կողմը, որը ձևացրեց, թե փշուրներ է թափ տալիս բաճկոնից ու ամենևին պատրաստ չէր նույնիսկ ինքն իրեն խոստովանելու, որ դա թեփ էր:

- Երևի պատկերացնում ես, թե ինչ էի գզում այդ սրահում,- ասաց:- Երազի պես մի բան էր: Նա ինձ այնքան մարդկանց հետ ծանոթացրեց:

Նույնիսկ անծամք Միտերանի: Հիշում եմ Չարլզը նրա հետ խոսում էր Միշել Պլատինիի մասին, որն այն ժամանակ դեռ երիտասարդ ու խոստումնալից ֆուտբոլիստ էր: Նրա թիմը կազմված էր ֆրանսիացի չեմպիոններից. կանաչ ջերսիներ էին հագել, վերջերս էին հաղթել: Հիշում եմ նրանց աջակիցները կանաչ դրոշներ էին ծածանում: Վստահ էին, որ այս Պլատինին կօգևի Ֆրանսիային նվաճել հաջորդ Աշխարհի գավաթը, որը, եթե չեմ սխալվում, շահել էր Իտալիան:

Ասում եմ՝ այո, իհարկե. այդ տարի իտալացիները հաղթեցին, իսկ դրանից կարճ ժամանակ անց Պլատինին տեղափոխվեց իտալական ակումբ:

Պատմությունը, որ Ելենան պատմում էր այդ երեկո, անհավանական էր... ու ցնցող: Ես իմ երկրից հեռացել էի տասնինը տարեկանում՝ ավելի հետաքրքիր կյանք փնտրելու, ու այսպիսի պատմությունները պատճառ դարձան, որ այդպես էլ ոչ մի տեղ չհաստատվեմ: Բայց պատմությունից էլ ավելի արբեցնող էր դեսպանը:

Չեմ կարող ասել՝ գինի՞ն, որ խմեցինք, թե՞ պոեզիան արբեցրեց մեզ, ինչպես խոստանում էին հրավիրատուները, բայց դեսպանն այնպես էր պատմում, ասես իր վստահորդը լինեի: Մի պահ ներքև կայեցի ու նկատեցի. կոշիկներից մեկը համարյա մաշված էր: Թաքուն կայեցի ոտքերի մերկ մատներին՝ առաջին անգամ նկատելով, որ զուգագուլպա չի հագել: Մաշկը նման էր քսանամյա աղջկա մաշկի, չկային կապույտ երակներ, որոնք ասես ինչ-որ տեղ էին տանում, ինչպես քարտեզի վրա պատկերված գետերը, մուգ բծեր, որոնք խոստանում են, որ այդտեղ շուտով մազեր կաճեն: Միայն մաքուր մաշկ. մի քանի վայրկյան ոտնաթաթերին կայելով՝ պատկերացրի նրա մերկ, ծյան պես ճերմակ կուրծքը և վարդագույն պտուկները՝ խոշոր ու գեղեցիկ:

- Անհավանական է,- մի կերպ մեկնաբանեցի՝ ինձնից վանելով մերկ գեղեցկության մասին միտքն ու դարձյալ ընկղմվելով պատմության մեջ:

- Ուզում ես հավատա, ուզում ես՝ ոչ, բայց ամենաանհավանականը դեռ առջևում է:

Նրանք միասին մնացին մինչև ընդունելության ավարտը, և շամպայ-

ՊԻԵՐ Զ. ՄԵՅԼԱԿ

Լի երրորդ կամ չորրորդ գավաթից հետո Ելենան սկսեց անկեղծ հաճույքով ծանոթանալ մարդկանց հետ, որոնց սովորաբար տեսնում էր միայն թերթերում կամ հեռուստատեսությամբ: Արքայազնը նույնպես վայելում էր նրա ընկերակցությունը: Իհարկե, ո՞վ կիրաժարվեր: Չափազանց ներկայանալի երիտասարդ կին, որն ամենուր հրաշալի է պահում իրեն: Երբ ժամացույցը խփեց տասնմեկը, և հյուրերը սկսեցին հեռանալ Ելիսեյան պալատից, Արքայազնը նայեց ձեռքի ժամացույցին ու հարցրեց.

- Գնա՞նք:

Կինը գլխով արեց:

Նրանք հրաժեշտ տվեցին հյուրերից մի քանիսին, որոնք մնացել էին, այդ թվում՝ Միտերանին, որն ասաց՝ իր համար մեծ պատիվ էր ծանոթանալ աղջկա հետ, ու դուրս եկան բակ: Դեսպանի հետ խոսելու հնարավորություն այդպես էլ չեղավ, բայց կռահում էր, որ նա շուտ էր դուրս եկել ու իրեն նախասրահում չգտնելով՝ ուղղակի հեռացել էր: Իսկ գուցե տեսե՞ր էր Արքայազն Չարլզի հետ: Ինչ էլ որ եղած լիներ, այդ պահին միևնույն էր: Անվտանգության աշխատակիցներն արագ զբաղեցրին իրենց տեղը, երբ նրանք անցան նախագահական պալատի բակով:

Հասան de Faubourg Saint-Honore փողոց, իսկ հետո պատահեց անպատկերացնելին: Աղջիկը կարծում էր, որ նա ուղղակի կհամբուրի իր ձեռքը, ինչպես վերևում հանդիպած բոլոր կանանց ձեռքերը, ապա ինքը կքայլի դեպի Champs-Elysees-Clemenceau մետրոյի կայարան: Արքայազնն ուրիշ ծրագրեր ուներ ու անակնկալի բերեց նրան:

- Նայեց ուղիղ աչքերիս մեջ ու հարցրեց՝ չե՞ի՞ ուզի մի բաժակ էլ խմել իր հյուրանոցում: Ինչպե՞ս կարող էի մերժել:

Աղջիկը թռավ արտասովոր մեքենայի մեջ, նրանք ճանապարհ ընկան. ամբողջ ընթացքում արքայազնը շատախոսում էր.

- Չգիտեմ՝ Ֆրանսուան ինչու չի ուզում ապրել Ելիսեյանում: Հոյակե՛րտ պալատ է:

Hotel de Marigny հյուրանոցը տառացիորեն մի քանի քայլի վրա էր, և շուտով ներս մտան: Արքայազնն իր գուսպ, ջենթլմենի արտաքինով թիկնապահներից մեկին հավաստիացրեց, որ աղջիկը լրագրող է, ընտանիքի

ընկեր, ու ասաց, որ ուզում եմ կարճ ժամանակ մենակ մնալ:

- Նա այնքան գրավիչ էր: Անվտանգության աշխատակիցներին ասաց, որ գիրք եմ գրում բրիտանական քաղաքականության մասին: Պատկերացնո՞ւմ ես:

Պետք է խոստովանեմ. ինչպես ֆիլմ դիտելիս, երբ պատկերացնում ես քեզ գլխավոր դերում, այդ երեկո ինձ արքայազն երևակայեցի: Այն-քան հարցեր էի պատրաստել, ուզում էի իմանալ բոլոր մանրամասները, որ բավարարեմ հետաքրքրասիրությունս, բայց հևարավորություն չսովեց: Մի անգամ ընդհատեցի, որ հարցնեմ արդյոք ճիշտ հասկացա, որ այն ժամանակ հանդիպում էր ինչ-որ մեկի հետ:

- Ա՛խ, այո՛,- պատասխանեց՝ աչքերը վրաս գամած: Լայն ժպտաց. անհարմար էր զգում:- Բայց գիտե՞ս,- ասաց,- ուղղակի ընկեր էր: Չորս-հինգ ամիս միասին էինք, բայց պատրաստվում էր մեկնել Իտալիա՝ սովորելու: Ուզում եմ ասել, ես հավատարիմ էի, սխալ չհասկանա՛ս: Բայց, անշուշտ, ինչպես մյուսները, այնպես էլ ես:

Իմ կարծիքով դեսպանը թույլ առ թույլ ավելի գրավիչ էր դառնում: Հիշեցի մերկ ոտնաթաթից կախած կոշիկն ու կայեցի ներքև, որ տեսնեմ դեռ տեղո՞ւմ է: Տեղում էր: Նորից կայեցի դեմքին, ու մի քանի վայրկյան հայացքս կանգ առավ ծեռքերի վրա: Մատները երկար ու բարակ էին, ինչպես դաշնակահարինը: Նրբագեղ, փխրուն: Կատարյալ, մատին փոքրիկ, պարզ մատանի՝ ուղիղ կենտրոնում փոքրիկ անցքով:

- Այդ գիշեր չխոսեցինք ընկերուհիներից կամ ընկերներից,- շարունակեց նա:- Ես գիտեի լեդի Դայանայի և նրանց ամուսնության մասին, բայց ակնհայտ էր, որ նա սիրահարված չէր: Ու երբ շաբաթներ անց հեռուստացույցով դիտեցի նրանց հարսանիքը, խղճացի, բայց դա արդեն ուրիշ պատմություն է: Այդ գիշեր գնացինք նրա հյուրանոցի սենյակ. հիշում եմ, ամեն ինչ արեց, որ կատարյալ հարմարավետ զգամ: Տպավորություն էր, թե հիսուներորդ անգամ ենք հանդիպում:

Ոչինչ չհարցրի, բայց աչքերս աղաչում էին, որ շարունակի պատմությունը: Նա ժպտաց. գոհ էր, որ հետաքրքրված եմ:

- Մի շիշ «Մարտինի Բիանկո» գտա ու մի գավաթ լցրեցի ինձ համար:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

Հետո ևս սառույցի երկու կտոր վերցրեց սեղանի եզրին դրված արծաթագոծ դոյլիկից ու զցեց գավաթի մեջ, իսկ Չարլզը հանեց փողկապն ու իտալական Kition պիջակը նետեց մահճակալին: Իր համար լցրեց շշից, որ Ելենան ինքնուրույն էր գտել:

- Հիմա նրանք ևս այնպես աշխատում են աշխարհում ռոմի լավագույն մասնագետների հետ,- ասաց՝ գավաթը ձեռքին:- Անցյալ տարի Մեքսիկայում էի՝ Լա Գալարգայի սպիրտի գործարանում: Էնդի Ուորհոլն էր եկել, որ հանձնի ապրանքանիշի հիմնադիր Պոն Բակարդի Մասսոյի դիմանկարը: Պետք է ասել՝ փայլուն նկար էր:

Պեսպանը բացատրեց, որ արքայազնը մշակույթի սիրահար էր. մերթ խոտում էր Բակարդիի մասին, հետո պատմում էր, թե Ուորհոլն ինչպես էր շփվում աշխարհի ամենահարուստ մարդկանց հետ և համոզում, որ մեկը մյուսի հետևից կտավներ պատվիրեն: Բոլորին՝ Շահին, Լայզա Մինելլիին, Բրիջիտ Բարդոյին: Ապա խոսեց մի նկարի մասին, որտեղ պատկերված աղջիկը շատ նման էր Ելենային:

- Ո՞ր մեկը,- դժվարությամբ հարցրի ես:

«Երիտասարդ կինը նկարում է»։ Սարի-Ղենիս Վիլլերս: Պատճառը հավանաբար երկար զգեստն էր, որ հագել էի այդ երեկո, կամ մազերս: Մենք ևստած էինք այնպես, ինչպես հիմա: Ու հանկարծ ասաց, որ գեղեցիկ եմ, ու կռացավ, որ համբուրի:

Հիմա հասկանում էի, որ իմ ու նրա ծնկները դիպչում են իրար, ու դա շարունակվեց մի քանի րոպե. ո՛չ ես, ո՛չ ևս հետ չէինք քաշվում: Մինչ պատմում էր արքայազնի հետ կրքոտ զիջերվա մասին, բույրն ուժեղացավ: Գինու ազդեցությունն էր հավանաբար, բայց զգում էի, որ մոտենում եմ: Ու հանկարծ այնպե՛ս ցանկացա համբուրել նրան: Նուրբ համբույր կլիներ, ոչ թե բռնի կամ անճոռնի: Դանդաղ կհանեի նրա շորերը, ասես վաղվա օրը սարերի հետևում էր, ու շուրթերով կշոյեի բոլոր մարմնամասերը:

Կարծես ևս էլ ևս այն էր ուզում, բայց մի ամբողջ րոպե մտածում էի սլովենացի ընկերոջս տեսությունների մասին: Իսկ եթե փորձեմ ու դառնամ զո՞հ, իսկ ևս ինձ զգուշացնում էր, որ երբեք զոհ չդառնամ: Նորից հիշեցի, որ մեկը, հիմա լավ չեմ հիշում՝ մե՞կը, թե հենց ևս՝ մի խոսքով, ինձ

ասել էին, որ ևս ամուսնացած է: Հիմա ժամանակն էր, որ է՛ս քայլ անեի, իմ թողթը խաղայի: Ընդհատեցի պարզ, ուղիղ հարցով՝ ցույց տալով նրան, որ պատրաստ եմ նոր ուղղություն վերցնելու:

- Իսկ ամուսի՞նդ:

Ոչինչ չասաց, բայց պատասխանն արձագանքեց սենյակում: Նրա շուրթերի կորագի՛ծը: Ցանկությունը մեծանում էր անքերում. ավելի մոտեցավ ու ձեռքը դրեց ազդրիս:

Ձեռքերիս մեջ առա դեմքը՝ թարմ ու գեղեցիկ, ու համբուրեցի:

Սկզբում միայն ես էի համբուրվում: Հետո ևս ձեռքերի մեջ առավ դեմքս ու համբուրեց ի պատասխան: Մենք կանգնեցինք, շուրթերը դարձյալ մոտեցան իրար, ու սկսեցինք դանդաղ մերկացնել իրար: Բուխարին վառվում էր, կողքի դրոշներն անշարժ էին: Սպիտակ երիզաթելից: Մարմինն այնպիսին էր, ինչպես պատկերացնում էի: Կուրծքը՝ մեծ ու տաք: Ազդրերը՝ հարթ, ինչպես տաք կավի հպումը՝ մարմնիս: Բո՛ւյրը:

Նրա մարմնում էի, երբ հիշեցի, որ արքայազնն էլ է այնտեղ եղել: Բայց առաջին անգամ ինձ չանհանգստացրեց այն միտքը, որ ինձևից առաջ մեկը եղել է: Հակառակը՝ փառասիրությունս շոյվեց, կարծես բարձր էի պահում բոլոր հասարակ մարդկանց պատիվը՝ ձեռնոց նետելով նրանց, ովքեր համոզված են, որ ծննդյան պատահականությունը յուրահատուկ է դարձնում իրենց: Ամեն անգամ, երբ Ելենան տևքում էր, ինձ թվում էր՝ ուզում է ասել, որ հենց տեսավ, թե դեսպանատան դիմաց ինչպես եմ իջնում տաքսուց, նույն պահին ցանկացավ ինձ:

Այդ օրվանից այլևս երբեք չկարողացա նույն ձևով նայել արքայազն Չարլզին: Նա ուրիշ աշխարհից եկած կերպար չէր, այլ մի սովորական տղա, որ քնել էր նույն կնոջ հետ, որի հետ ես էի գիշեր անցկացրել: Դեսպանի շնորհիվ հայտնվել էի բացառիկների ակումբում: Մենք, Չարլզն ու Դայանան... և ամբողջ թագավորական ընտանիքը: Սկսեցի ուրիշ հայացքով նայել ամեն ինչին: Հնարավոր է՝ ևս չէր էլ հասկացել, թե ինչ էր արել ինձ համար:

Այս ամենն ինչպե՞ս փոխանցեմ Ռանդոլֆին, որը հիմա մանկական հողի պես պտտվում էր նախագավթում: Միևույն է, չէր հավատա: Թող ուրախանա, որ հարցազրույց է վարել նրա հետ, թող փքվի, որ դեսպանը մի քանի փոքրիկ գաղտնիք է վստահել իրեն: Ա՛խ, ի՛նչ խեղճ տղա է այս Ռանդոլֆը: Ուրիշ էլ ինչո՞վ ուրախանա թշվառականը: Ինչո՞ւ պայթեցնեմ նրա երազանքի փուչիկը: Ինչո՞ւ պատմեմ, թե ինչպես այդ գիշեր ինձ տարավ իր փենթիառու, ու մենք ամբողջ գիշեր շունչ քաշելու ժամանակ չունեցանք:

- Նա պահում էր իմ հարցազրույցների պատառիկները,- պարծենում է Ռանդոլֆը՝ սիգարետը ձեռքին, ուշքի բերելով ինձ:- Մի բան պատմեմ, չես հավատա:

- Հը՛մ,- մոթմոթացի ի պատասխան՝ առանձնապես հետաքրքրություն չդրսևորելով:

- Վերջին անգամ, երբ հարցազրույց էի վարում, պարզեցի, որ խմում է: Ծանր շրջան էր ապրում: Չգիտեմ՝ տեղյակ ես թե ոչ, բայց որոշ ժամանակ ամեն օր կես շիշ վիսկի էր դատարկում: Ինչևէ, այդ օրն ինձ անհավանական պատմություն պատմեց: Լրի՛վ անհավանական:

- Ի՞նչ պատմեց:

- Չես հավատա:

Չգու՛մ եմ, որ սիրտս ավելի արագ է բաբախում: Մի՞թե նրան էլ է նույնը պատմել:

- Մոտավորապես այն ժամանակ էր, երբ նա աշխատում էր Փարիզում, դեսպանատանը: Մի օր խնջույքի էր գնացել Ելիսեյան պալատ և առանց հրավերի սողոսկել ներս:

Նրան է՛լ էր նույնը պատմել:

- Ու երբեք չես կռահի, թե վերջում ո՛ւմ հետ զրույցի բռնվեց:

Ուզում եմ ասել նրան, թե՛ դու ես պակաս, որ ինձ դաս տաս, գրո՛ղը քեզ տանի: Ռենդոլֆը հունից հանում էր ինձ:

- Հավանաբար արքայազն Չարլզի,- իմիջիայրոց ասացի՝ կեղծավոր կիսաժպիտով, կարծես ասելով՝ գիտեմ, տխմա՛ր:

- Ի՛նչ արքայազն Չարլզ, հիմա՛ր: Արաֆաթն էր: Հենց խնջույքի գիշե-

որը: Ձարմանալի պատմություն էր: Երևի չես հավատա, բայց արժե լսել, թե ինչպես էր մեջքերում Արաֆաթին, որը խոսում է Էնդի Ուորհոլի և Պլատինի մասին, ընկերս: Ընդունելությունից հետո Արաֆաթը ցանկացել էր, որ իր մոտ մնա գիշերը, ուստի թիկնապահներին ասել էր, որ լրագրող է, գիրք է գրում Միջին Արևելքի մասին ու խնդրել, որ մենակ թողնեն իրենց: Արժե, որ լսես նրա պատմությունն Արաֆաթի ու այդ գիշերվա մասին: Պատմում էր ու վիսկի լցնում՝ մեկը մյուսի հետևից դատարկելով գավաթները:

Հետո լռեց. տեսնելով, թե աչքերի արտահայտությունն ինչպես փոխվեց, զգացի, որ մարմնովս սարսուռ անցավ:

- Հաջորդ առավոտ հեռացա դեսպանատնից: Այդքան կրքոտ գիշեր չէր եղել: Բայց երբ խմբագրիս պատմեցի, ծիծաղից թուլացավ: Փաստորեն, բոլոր նրանք, ովքեր երեկոյան այդ ժամին եղել էին նրա գրասենյակում, լսել էին նույն պատմության տարբերակները, ու բոլորս անխտիր մնացել էինք մինչև առավոտ:

Բայց հիմա նախագավիթը բազմամարդ էր, ու փայլուն կարմրափայտից դազաղն արդեն ուսերի վրա դուրս էին բերում: Ես ի վերջո կարողացա անել այն, ինչ չհաջողվեց տատիկիս թաղման արարողությանը: Ուղիղ նայեցի նրան:

Նրա բույրը

Rihitu

Միայն նրա հեռանալուց հետո աղջիկը հասկացավ, որ չի զգում նրա բույրը: Ամեն ինչ կար՝ հայացքը, դեմքը, ձայնը, երկար ու բարակ մատները, որոնք այնքան՝ նման էին իր մատներին: Հեռանալուց առաջ գրկել էր իրեն. ի՛նչ շփոթված ու կարճատև գրկախառնություն էր: Կարճատև, որովհետև կարճ տևեց, շփոթված, որովհետև կիսատ էր, ավելի շատ հիշեցնում էր չարածի, քան արածի մասին: Բայց նրա բույրը, այդ պարզագույն զգացողությունը, զգացողություններից ամենագլխավորը, չկար: Ինքն էլ չէր հասկանում՝ ինչու այն հանկարծ այդքան կարևոր, գրեթե ճակատագրական դարձավ: Այդպես լինում է, երբ արթնանում ես երագի կեսից ու հասկանում, որ ինչ-որ բան պիտի հիշես, չափազանց կարևոր մի բան, բայց գաղափար չունես, թե ինչ: Ու փակում ես աչքերդ, փորձում մտքով վերադառնալ այնտեղ, որտեղ արթնանալուց առաջ էիր: Փորձում ես բռնել երագի վերարկուի փեշից, քանի դեռ դուրս չի թռել պատուհանից: Կկարողանա՞ ինքնուրույն հիշողության մեջ վերականգնել նրա բույրը: Կկարողանա՞ հենց այնպես, օդից հորինել: Իհարկե: Չորս տարեկանից փորձում էր. երևակայական ընկերներ էր հորինում մանկապարտեզում, մտացածին ընկերներ՝ դպրոցում: Պատմությունները հյուսում էր համալսարանի տաղտկալի դասախոսությունների ընթացքում, ու ոչ ոք երբեք զլխի չէր ընկնում, մինչև մի օր, գործընկերների հետ արձակուրդին, հանդիպեց նրան:

Մի՞թե իսկապես, երբ նա պառկած էր իր մահճակալին, ասել էր, որ տեսքն այնպիսին է, ասես պատրաստվում է լուսանկարվելու: Դա վերջին միտքն էր. հետո սուզվեց քնի մեջ ու երագում տեսավ մի ոտաբոբիկ երե-

խայի, որը գործի էր գցում մեքենան ու հերթով բաց թողնում անվադողերի օդը: Հետո հետապնդում էր տղային, երբ պատահաբար բախվեց ռեստորանի սեփականատիրոջը, որի մոտ մի ժամանակ աշխատել էր: Մինչև կանգ առավ, որ բարևի նրան, տեսադաշտից կորցրեց տղային, հետո մտածեց, որ նա գուցե իր ծեր դեկավարի զարմիկն է, և որ այս ամենը ոչ այլ ինչ է, եթե ոչ խորամանկություն, թունոտ վրեժ, որովհետև հեռացել էր ռեստորանից՝ առանց նախապես զգուշացնելու, կամ գրպանել էր թեյավճարները՝ առանց գումարը խոհանոցի աշխատողների հետ կիսելու, ինչն ակնկալում էին նրանից: Ու երբ տղամարդն ինչ-որ բան էր ասում նոր ճաշացանկի մասին, երազը կարծես տեղափոխվեց ուրիշ հաճախականություն, և նա ընկղմվեց մի այլ տեսարանի մեջ, որտեղ ինչ-որ մեկը տեղավորվում էր նեղ մահճակալի վրա, որը խիստ անսպասելի յուրացրել էր այդ գիշեր: Գիտեր, որ աղջիկն է, բայց չգիտես ինչու աչքերն ամուր փակել էր: Կարող էր շրջվել և նայել նրա աչքերի մեջ. աչքերը նրան հիշեցնում էին քաղցրավենիքները, որ տատիկն ուտում էր ձմռանը: Կարող էր ասել աղջկան, որ ուրախ է, որ նա վերադարձել է իր սենյակ, և որ հենց այդ հույսն էր փայփայում, երբ տեսավ մի տեսակ դժկամությամբ հեռանում է ընկերոջ հետ, որը եկել էր հետևից, ինչպես անհանգիստ մայրիկը հին սև-սպիտակ ֆիլմում. չէր ուզում, որ դուստրը քնի պատահական անձանոթի հետ: Այո, կարող էր օգտագործել այդ գիշերը, իրեն թույլ տալ ասել նրան, թե ինչքան գեղեցիկ է, ու ի՛նչ վաղուց չի հանդիպել այսքան յուրօրինակ կնոջ: Եվ հետո, կախված նրա արձագանքից, ավելացնել, թե ինչքան կուզեր ավելի մոտիկից ծանոթանալ, որ վաղը առավոտյան, երբ կյանքը տանի տարբեր ճանապարհներով, ավելի շատ մտածի նրա մասին: Վստահ էր, եթե իրեն հաջողվի այդքան հեռուն գնալ, ապա աղջիկն իրեն, ինքն էլ աղջկան թույլ կտար էլ ավելի հեռուն գնալ:

Այս մտքերն էին թափառում գլխում, երբ զգաց, թե աղջիկն ինչպես գլուխը խցկեց իր ուսից վերև՝ դատարկ խորշի մեջ, քիթը սեղմած պարանոցին, կուրծքը՝ մեջքին. ձախ թևով գրկել էր մարմինը, իսկ երկար բարակ մատները, թեթև, ասես գրեթե չկային, սահում էին ցած, դեպի պորտը: Հանկարծ հասկացավ, որ շատ վաղուց չի քնել մեկի հետ, որն այս աղջկա

պես կներթափանցեր հոգու խորքը: Ու մտածելով, որ իր ցանկացած շարժում կամ խոսք կփչացնի յուրահատուկ պահը, ձևացրեց, թե քնած է: Հետո նորից տեսավ երեխային. ծիծաղում էր խարխուլ տներով հանդիպակաց փողոցից: Դանդաղ ու զգույշ մոտենում էր, որ բռնի իր վզից, երբ հանկարծ լսեց դռան թակոցը: Դռա՞ն: Ի՞նչ դուռ: Նայեց շուրջը, բայց փողոցում դուռ չտեսավ: Նորից թակոց լսեց: Բացեց աչքերը: Մենակ էր հյուրանոցի մահճակալին, ինչ-որ մեկը թակում էր սենյակի դուռը, սենյակի, որը խիստ անսպասելի յուրացրել էր այդ գիշեր: Ամբողջ գիշեր գլխում առյուծներ էին մոնչում: Նրանք, թվում էր, սոված էին, պատրաստ պատառոտելու ցանկացած բան, որ կհայտնվեր ճանապարհին: Մոնչոցն այնքան բարձր էր, որ աղջիկն անհանգստացավ, որ կարթնացնի կողքին քնած ընկերոջը: Ընկերը նրան թույլ էր տվել իր հետ կիսել անկողինը, որ տղան, որի հետ ամբողջ երեկո գրուցել էր (և ինչի պատճառով ուշացել էր վերջին գնացքից), ի վերջո մենակ քնի իր սենյակում: Հյուրանոցում քար լռություն էր, ու նա պատկերացնում էր, որ այնտեղ բոլորը տեսնում են իրենց անձնական երազները, իսկ ինքը, աչքերը լայն բացած, ոչ մի կերպ չէր կարողանում քնել: Ամբարտաձան, շահագործող, ծայրահեղ թեթևամիտ. շարունակում էր մեկը մյուսի հետևից պիտակներ կախել տղայի վզից, որն այդ գիշեր խիստ անսպասելի յուրացրել էր իր մահճակալը: Մինչդեռ նույնիսկ երբ աղջիկը նրա վզից կախել էր բոլոր պիտակները, չէր կարողանում քնել: Երկար ժամանակ խաղաց մտքերի հետ: Համենայն դեպս (մխիթարում էր իրեն) մտքերը նրան պահում էին անկողնում ու թույլ չէին տալիս գնալ առյուծների հետևից: Այդ վերջինի հետ, սակայն, մի ուրիշ միտք էլ էր միահյուսվել: Ամբարտաձան, շահագործող, ծայրահեղ թեթևամիտ, այդ: Եվ այնուամենայնիվ, նրա շուրջը երաժշտական մթնոլորտ էր: Այն լսվում էր նրա յուրաքանչյուր խոսքում, ամեն մի ծիծաղի ու հայացքի մեջ: Եվ հանկարծ այնքան պարզ լսեց, ասես այստեղ էր, կողքին: Վեր կացավ անկողնուց, դուրս եկավ սենյակից, բոբիկ ոտքերի մատների վրա կարճ միջանցքով քայլեց դեպի դուռը, որը պիտի որ իր սենյակի դուռը լիներ: Անկողնում միացավ նրան, գլուխը խցկեց ուսի ու պարանոցի արանքը, համբուրեց կոպերն ու հարցրեց, թե ինչ կա դրանց հետևում: Ի՞նչ էր տեսնում հեռվում:

Ինչպիսի՞ գեղեցկություն: Ինչպիսի՞ այլանդակություն: Համբուրում էր նրա ականջները, նա էլ պատմում էր ամեն ինչի մասին, որ լսում էր: Ճիչեր, ծիծաղ, գոռոց ու հառաչանք: Աղջիկը համբուրում էր նրա շուրթերը, իսկ նա ամեն ինչ պատմում էր բառերի մասին: Բառերի, որոնք ասում էր, որովհետև հենց հենց դա նկատի ուներ, բառերի, որոնք ասում էր, որովհետև լավ էին հնչում: Եվ մտովի պատկերացնելով նրա շուրթերը՝ աղջիկը բարձրացրեց աջ ձեռքն ու թակեց սենյակի դուռը: Ոչինչ: Եվս մի թակոց: Լսում էր, թե ինչպես է ելնում անկողնուց, բայց չափազանց ուշ էր: Առյուծները դադարել էին մոնչալ: Հարցերը դարձյալ սկսեցին արձագանքել, այս անգամ՝ ավելի բարձր: Ի՞նչ ես անում, գրո՞ղը քեզ տանի: Նա բացեց դուռը, ու աղջիկը զգաց, որ բերանը շարժվում է, ու լսեց, թե իր ծայրն ինչպես է արտաբերում սառն ու դատարկ խոսքեր: «Քնի՛ր գորգին, որովհետև ես չեմ կարող քնել ընկերոջս սենյակում»: Ու ականջները լսեցին, թե նա ինչպես պատասխանեց իր փուչ խոսքերով. «Կներես: Ոչ մի խնդիր»: Իսկ ժամանակն անցնում էր, ինչպես միշտ, հաշվի չառնելով ոչ մեկին: Դա էր պատճառը, որ նրա հեռանալուց հետո աղջիկը հասկացավ. ամեն ինչ ունի, բացի նրա բույրից:

Երբ օղանավը բարձրացավ թռիչքուղուց, նա տեսավ քաղաքն այնպես, ինչպես միայն ամենախիզախ թռչուններին էր վիճակված տեսնել: Լույսերի այդ հիպնոսացնող ցանցը, որը եզերում էր բազմաթիվ փողոցներ՝ բազմաթիվ տներով՝ լի մարդկանցով, պատմություններով ու երազներով: Ու հիշեց անհամար արտահայտություններից մեկը, որ տղամարդը հավանաբար ասել էր իրենից առաջ Աստված գիտի թե քանի կնոջ: Այդ դատարկությունը նրան լցրեց կյանքի հանդեպ էլ ավելի մեծ սիրով, քան գիշերը լուսավորված մեծ քաղաքի տեսարանը՝ վերևից: Կյանքի գեղեցիկ անկանխատեսելիությունը, որն ամբարտավան, շահագործող և ծայրահեղ թեթևամիտ երիտասարդ տղամարդու համար (աղջիկը շատ արագ էր հասկացել նրա էությունը) ավելի բարձր էր, քան մահվան տգեղ անխուսափելիությունը: Ու մտածեց, թե նա ինչպես է քայլում փողոցներում, ճիշտ իր տեսած փողոցների պես, ծանր, ատամնավոր կիսաճուղավորները հագին, որոնք շարտել էր իր սենյակի անկյունը: Սենյակի, որը խիստ անսպասելի

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

յուրացրել էր այդ գիշեր: Ու դարձյալ հիշեց նրա դեմքի արտահայտությունը, երբ ինքը դուրս եկավ լոգարանից ու դրեց նրա գլխարկը (չափազանց մեծ էր, բայց հույս ուներ, որ թույլ կտա կրել) ու պառկեց կողքին, անկողնում խնդրելով, որ շարունակի պատմությունը, որ սկսել էր, երբ ինքը համակերպվել էր առյուծի որս լինելու մտքին:

Բարում հանդիպելուց մի քանի րոպե անց աղջիկն ասել էր, որ արդեն ընկեր ունի, որն իր համար կատարյալ է: Բայց խոսքերն ասելիս չէր գիտակցում, որ աչքերը մատնում են: Տղան մի ուրիշ պատմություն սկսեց, չորրորդը, որ պատմեց բարում այդ գիշեր: Իր՝ երկրորդը: Աղջկա մասին, որ փոքր ժամանակ երագում էր ընկեր ունենալ, ինչպես իր ընկերուհիները: Բայց չափազանց պայծառ մարդ էր, և տղաներն անհարմար էին զգում նրա կողքին: Որովհետև տղամարդկանց մեծ մասը նախընտրում է կին, որն իրենցից պակաս խելացի է, կին, որը չի թերազնահատում իրենց, ջրի երես չի հանում թույլ փաստարկները, անհետևողականությունը, անհասունությունը, որն անքան հատուկ է նրանց: Եվ այսպես՝ աղջիկը սկսեց հորինել ընկերոջը: Իդեալական ընկերոջը: Դեմք հորինեց, մարմին, անհատականություն: Ստեղծեց նրան կոպիտ ու անճոռնի, բայց նաև՝ ազնվագարմ: Հետաքրքրասեր և մեծահոգի: Ուժեղ և զգայուն: Ու մեծանում էր նրա հետ, քայլում նրա հետ, քնում նրա հետ: Դասընկերները նկատեցին նրա հեռու-հեռավոր հայացքը ու մտածեցին՝ ինչ-որ տեղ ինչ-որ մեկը կա: Աղջիկը ժպիտով հաստատեց՝ այո, ասաց, իհարկե, կա: Գրառումներ էր անում ամենի մասին, որ տեսնում էր օրվա ընթացքում, որ երեկոյան, երբ քայլեին գետի ափին, պատմեր նրան:

Ահա պառկած էր մահճակալին, հյուրանոցում. երբեք չէր մտածի, որ գիշերն այնտեղ կանցկացնի: Մի թևը գլխի տակ էր, աչքերը՝ կիսափակ, ինչպես մեկը, որը լավ չի տեսնում ու փորձում է կենտրոնանալ կամ առեղծվածային երևալ: Ահա և աղջիկը, որի պատճառով այնտեղ է, նստած է նրա առաջ, գլխարկը, որ չափազանց մեծ է գլխին, ու հույս ունի, որ մի բան կասի, ինքն էլ կխնդրի, որ գլխարկն իրեն պահի: Աչքերն աղաչում էին՝ շարունակի՛ր սկսած պատմությունը: Աղջկա մասին, որն ընկեր էր հորի-

Նել ու այսքան ժամանակ հավատացել իր ստին: Հոյս ուներ, որ ընկերը, ի սեր Աստծո, կհասկանա ակնարկն ու կմնա սենյակում: Համարյա հասել էր պատմության ավարտին: Աղջիկը մեծացավ ու սկսեց հասկանալ, որ կա իրականություն, որին ստիպված է առերեսվել: Զանգի եթե լույսիսկ տղամարդը, որին ստեղծել էր, իրականում գոյություն ուներ, դե, աշխարհը հսկայական է, ու շատ հնարավոր է, որ երբեք չգտնի նրան: Աղջիկը նայում էր ուղիղ նրա աչքերի մեջ ու առանց խոսքի ասում. «Պատմի՛ր ինձ ավարտը: Պատմի՛ր, թե ինչպես է վերջանում»: Հավանաբար արդեն հստակ պատկերացնում էր մտքում: Պատրաստվում էր պատմելու, երբ դուռը թակեցին, ու աղջկա ընկերը, հիմար մանուշակագույն գիշերազգեստը հագին, ասաց, որ շուտով կգնա քնելու, ու որ լավ կլինի, որ նա էլ գա. մինչև դուռն ինչպես հարկն է չկողպեն, անհնար է, որ քնի: Ու այնպիսի հայացքով նայեց, կարծես ասում էր՝ «Այո, այսպիսի մարդիկ էլ կան, բայց պարտադիր չէ, որ քնես նրանց հետ»:

Ու տեսելով, թե փողոցներն ինչպես են ավելի ու ավելի մեծանում, պատկերացրեց՝ ինչպես է տղան մի ուրիշ բարում մի ուրիշ վիթի քնքշորեն հրում դեպի անկյուն: Կամ գուցե ոչ: Գուցե տանն է, մարզական տաբատով, որը, ինչպես ասել էր, ճիշտ նրա գիշերազգեստի տաբատի նման էր: Աղջկան ասել էր, որ այն զցած էր սենյակի անկյունում, չհավաքած անկողնու կողքին, հեռու-հեռավոր բնակարանում: Հետո ուղեկցորդուհին հայտարարեց, որ կարող են արձակել անվտանգության գոտիները, որ շուտով ուտելիք կմատուցեն, իսկ օդանավի պատուհանից միայն խավարն էր երևում: Սառը ծովը՝ լուռ ու դաժան, Աստված գիտի, քանի հսկայական ու այլանդակ ծուկ էր թաքցնում: Փակեց աչքերն ու պատմություն հորինեց, ինչպես միշտ, որ խուսափի նրանից, ինչն այլապես անխուսափելի էր: Ու առաջին իսկ պարբերության մեջ իրեն սպասող մի բան գտավ, որով կավարտի սիրեկանին հորինած աղջկա պատմությունը:

Հիմա քայլում է նրա հետ, ձեռքը բռնած, վերջապես պարուրված նրա բույրով:

ՈՒՋՈՒՄ ԵՄ ՁԱՅՆ ՏԱԼ ՍԱՄԻՐԱՅԻՆ

Nixtieq ngħajjat lil Samirah

Չէ, մեռած չեմ: Ոչ էլ պատրաստվում եմ մեռնելու: Վստահ եմ. գիտակցությունս տեղն է, ուղեղս աշխատում է, լավ եմ: Ցավը նահանջել է, այն աստիճանի, որ հազիվ եմ զգում: Լավ եմ, ուղղակի գրուխս մի քիչ պտտվում է, ու անտանելի հոգևած եմ: Մի քիչ էլ մրսում եմ, բայց հաճելի ցուրտ է. այդպես զգում ես, երբ տեղի մեջ ես լինում, թաղվում անկողնու մեջ ու պահ մտնում ծածկոցների տակ, ազդրերդ գրկում-սեղմում կրծքիդ, շրթունքներդ՝ ձևկներիդ:

Փորձում եմ շարժել ոտքերս, բայց նույնիսկ երբ պատկերացնում եմ, թե ինչպես են սեղմվում կրծքիս, հասկանում եմ. ոչինչ տեղից չի շարժվում: Հազարերորդ անգամ փորձում եմ բացել աչքերս, բայց չեմ կարողանում: Կամ էլ աչքերս բաց են, բայց միայն խավարն եմ տեսնում: Հնարավոր է, որ կուրացած լինեմ: Ինչպե՞ս կարող էր պատահել:

Նորից վերականգնում եմ իրադարձությունների շարքը. այնքան հստակ եմ տեսնում ամեն ինչ, ընդհուպ մինչև այն պահը, երբ դեպքը պատահեց: Ուղեղս հրաշալի է աշխատում: Ստուգելու համար կյուժեմ իմ հայտնի մաթեմատիկական խնդիրը: Բաժանում և կրճատում: Չորսը վեցի... առաջին գործողությունից, մնացորդը՝ երկու: Ուրեմն մեկ ամբողջ երկու վեցերորդ, հետո՝ մեկ ամբողջ մեկ երրորդ: Ճի՞շտ է: Տեսնո՞ւմ ես, ուղեղս կարգին աշխատում է: Նույնիսկ մինչև ստուգելը համոզված էի, որովհետև ամեն ինչ հիշում եմ: Օրինակ՝ հիշում եմ իմ անունը, մայրիկիս անունը, եղբորս անունը, մեր տան հասցեն, հեռախոսահամարը, մեքենայիս պետհամարանիշը՝ VKJ-382: Եվ Սամիրայի հասցեն, նրա տան ճանապարհը: Տեսնում եմ «Երեք առյուծ» բարը, որտեղից թեքվում ես աջ ու հայտնվում նրա փողոցում: Հիշում եմ, թե Սամիրան ինչպես էր վարում իմ մեքենան,

Այի Ֆարկա Տուրեի՝ բարձրախոսներից տարածվող գոռում-գոչյունը և ուղիղ մեզ վրա սլացող ահռելի բեռնատարի կուրացնող լույսը: Մեր մեքենայի մայթ բարձրանալը, Սամիրայի ճիչը, արգելաբազրիքի ջարդվելը, ուժեղ ցնցումը և մետաղի հետ մետաղի բախման ձայնը:

Ահա և վերջ: Հետո՝ այստեղ, այս հարմարավետ սառնությունը, տարօրինակ գլխապտույտը, լեթարգիական ծանրությունը:

Ուրեմն, եթե ամեն ինչ հիշում եմ, ինչպե՞ս է ստացվում, որ ոչինչ չեմ տեսնում, չեմ լսում, ոչ մի հոտ չեմ զգում: Եվ ինչո՞ւ չեմ կարողանում խոսել: Բաց բերանիցս ձայն դուրս չի գալիս: Գոնե շնչո՞ւմ եմ: Սա կարո՞ղ է մահ լինել: Չի՞ կարող: Իսկ ո՞ւր տարան Սամիրային:

Ուզում եմ ձայն տալ Սամիրային: Հարցնել՝ վնասվե՞լ է: Հաստատ վնասվել է, թեկուզ մի քիչ: Բայց ասե՛հար է, որ մեռած լինի: Աղաչում եմ Աստծուն, որ ծանր վնասված չլինի: Աստվա՛ճ իմ, միայն թե ոչ Սամիրան, միայն թե ոչ հիմա:

Ինձ թվում է՝ քնով եմ անցնում, բայց չեմ ուզում քնել: Իսկ եթե չարթնանա՞մ: Մի ֆիլմ կար, որտեղ մեկը մյուսին աղաչում էր, որ չքնի: Ի՞նչ ֆիլմ էր, թե՞ գիրք էր: Անընդհատ ասում էր՝ չքնես, արթո՞ւն մնա: Եթե թույլ տար, որ քնի, երբեք չէր արթնանա: Բայց սպասի՛ր, որտե՞ղ եմ: Հիվանդանոցո՞ւմ: Բայց եթե հիվանդանոց լիներ, մի՞թե աղմուկ չէր լինի: Բժիշկների ու բուժքույրերի խոսակցություններն ու շարժումը, միջանցքում հիվանդասայլակների դորդյունը, ժամանող վերելակի ծնագոցը, հեռախոսի զանգը, անվասայլակի կամացուկ ձայնը կամ գոնե բացվող ու փակվող դռների աղմուկը: Բայց որտե՞ղ եմ:

Չէ, չեմ քնի, ինչ էլ որ լինի: Չեմ ուզում քնել, փորձում եմ հիշել՝ ինչ էր ասում Սամիրան դեպքից առաջ: Գուցե ինչ-որ բան էր պատմում իր ընտանիքի մասին: Հա, զարմուհի Ռաշիդայի մասին, որը նրան հրավիրել էր՝ Էրդը տոնելու: Սամիրան ուզում էր ինձ էլ տանել իր հետ, որ տեսնեմ, թե ծագումով որտեղից է: Ճիշտ է, խոսքը Ռաշիդայի մասին էր, բայց կոնկրետ ինչ էր ասում՝ չեմ հիշում: Մինչև պատմության այդ մասին հասնելը լույսերն

արդեն կուրացրել էին մեզ: Հետաքրքիր է՝ ի՞նչ էր ուզում ասել: Հենց որ տեսնեմ, կհիշեցնեմ, ու ամեն ինչ կպատմի: Որովհետև վստահ եմ, ամեն ինչ լավ է լինելու: Շուտով նրա կողքին կլինեմ, ու կսկսենք այնտեղից, որտեղ կանգ ենք առել: Կամ գուցե սպասեմ, մինչև միասին անկողնում լինենք: Երկու գդալի պես՝ նրա մեջքը կրծքիս: Իսկ ոտնաթաթերը՝ միահյուսված, ինչպես իրենց տեղն ընկնող մարտկոցներ: Այդպես եմ սիրում լսել Սամիրայի պատմությունները: Հիմա մտածում եմ մեր վերջին համատեղ գիշերվա մասին, երբ ասացի, որ կցանկանայի այցելել նրա երկիր ու հանդիպել զարմիկներին, որոնց մասին այդքան խոսում է: Ուզում եմ տեսնել, թե ինչպես են տոնում Էրդը: Վերապրել նրա անհամար պատմություններից գոնե մի քանիսը: Օրինակ՝ այն մասին, թե ինչպես էին ծաղկակար զգեստով գնում հորեղբոր բակ, իսկ ավագները ճաշ էին պատրաստում: Ուզում եմ հիշել զարմիկ-զարմուհիների անունները: Ահմադ, Ֆաթիմա, Տիհան, Ջահրա: Բոլորը միասին գնացել էին՝ տատիկ-պապիկներից գրպանի փող խնդրելու: Եվ խաղերը, որ խաղում էին հորեղբոր բակում, ձիթենիների արանքում վազվզելը, ճաշ պատրաստելը և նրանց շուրջը պտտվող բույրերը: Թե ինչպես էին հիևայով իրար հետևից նախշեր նկարում ձեռքերի ափերին:

- Ա՛խ, ի՞նչ ուրախ էիք,- լսում եմ նրա ձայնը՝ քնքուշ ու գեղանի: Ճիշտ նրա պես: Միասին ենք, իր ձեռքերով ձեռքս սեղմել է կրծքին: Մի օր իմ ափերի վրա էլ հիևայով տարբեր չափերի ծաղիկներ կնկարի:

Նրան պատմեցի մեր Չատկի, տորթերի, ուտելիքի և պապի օրինանքի մասին. թե ինչպես են բոլորը դադարում ծամել, որ բաց չթողնեն մեր լեզվով նրա մի քանի տասնյակ խոսքերից ոչ մեկը: Այն ժամանակ ծիծաղում էր. շատ էի սիրում նրա ծիծաղը: Առաջին անգամ, երբ լսեցի, սնկով պիցցան ուտելուց անմիջապես հետո էր: «Սնկով ծիծաղ». այդպես էի կոչում: Պատմեցի յոթ տարբեր եկեղեցիներ յոթ այցերի ու հոգևորականի ոտնալվայի և Ավագ ուրբաթի թափորի մասին: Հարության, արձանը բարձր պահած՝ մեծ արագությամբ վազելու ավանդույթի: Նա ուշադիր լսում է՝ հուսալով, որ հաջորդ տարվա Չատիկը կտոնենք միասին: Իսկ ավելի ուշ ամեն ինչ կպատմի իր մայրիկին:

Այս պատմությունն ինձ ստիպեց պատմել Ռիդայի՝ նրա մայրիկի մասին. պարզվեց՝ շատ ավելի գեղեցիկ էր, քան սպասում էի: Առաջին գիշերվա մասին, որ անցկացրի նրանց տանը: Եվ երկրորդի, երրորդի... և վեց ամիս հետո: Մի երեկո Սամիրան ու ես օգնեցինք, որ պաստեղ պատրաստի, իսկ երբ կարկանդակը պատրաստ էր, մինչ Սամիրան ափսեներն էր լվանում, Ռիդան ու ես երկար զրուցեցինք: Խոստովանեցի, որ մայրս այնքան էլ ուրախ չէ Սամիրայի ու իմ միության համար: Նա ասաց, որ կրոնը երբեմն բաժանում է մարդկանց, փոխանակ միավորելու: Ասաց, որ այդպես չպիտի լինի, ու մի բան էլ ասաց, որ այնքան էի ուզում հիշել, որ պատմեմ մայրիկիս, բայց հիմա չեմ մտաբերում: Հիշում եմ այդ երեկո սեղմեց ձեռքս, ասես իր հարազատն էի, ասաց, որ չհանձնվեմ, որովհետև չկա ավելի արագ փոխվող բան, քան մարդիկ և նրանց մտածելակերպը:

Լսում եմ նաև մայրիկիս ծայրը. «Ամուսնացիր ում հետ ուզում ես, միայն թե մուսուլման չլինի»: Փորձեցի բացատրել, որ դա կարևոր չէ: Եվ որ նրանից այդպիսի բան չէի սպասում: Մայրիկս միշտ հրաշալի դատողություն է ունեցել. երբեք հակառակը չեմ կարծել: Բայց Սամիրայի հարցում հուսախաբ արեց: Ինչպե՞ս կարելի էր այդ կերպ մտածել: Մի՞թե հևարավոր է, որ սխալված լինեմ: Դպրոցում այնքան էի հպարտանում նրանով. ուրիշ մայրիկների համեմատ սքանչելի էր: Նրանք սովորաբար դրսում էին թողնում կամ վռնդում էին Եհովայի վկաներին, իսկ մայրս փոքրիկ խնջույք էր կազմակերպում նրա համար: Հետո հարցրեց Սամիրայի հոր մասին: Երբ ասացի, որ Սամիրան չի ճանաչում հորը, դեմքից հասկացա, որ ստացել էր իր ուզած պատասխանը: Ուզում էի հարցնել հայրիկիս մասին, բայց զսպեցի ինձ:

Մի ուրիշ անգամ մորս ցույց տվեցի Սամիրայի նկարները: Մի քանիսը մանկական նկարներ էին, Սամիրան Էիդի ժամանակ: Մի նկարում էլ իր բոլոր զարմիկներից ավելի բարձրահասակ է: Ահա նա՝ հսկայական սև աչքերով, հագին ջելաբա է, որն ինչ-որ մեկը կարել էր հատուկ այդ առիթի համար: Այդ օրը նա ամենագեղեցիկն էր, ու բոլորը նրան անվանում էին Բարբի Ջելաբա: Բայց մայրս չնկատեց նմանությունը: Նա կարողացավ միայն մի բառ արտաբերել՝ հետաքրքիր է, ու դուրս եկավ լվացքը հավաքելու.

ՊԻԵՌ Զ. ՄԵՅԼԱԿ

այդ մի բառով հազարավոր բառեր էր ասել: Սամիրան անմիջապես ամեն բան հասկացավ, երբ ակնարկեցի, բայց երբեք մորս դեմ ոչ մի բառ չասաց: Ամեն անգամ, երբ բարկանում էի, հանգստացնում էր ինձ: Հետաքրքիր է՝ մայրս ի՞նչ կասեր, եթե իմանար, որ իր համար իմ Սուրբծննդյան ևվերը հենց Սամիրան է ընտրել՝ մի ամբողջ շաբաթ քաղաքում վերովար անելուց ու փնտրելուց հետո:

Եթե ինձ թույլ տամ, քնով կանցնեմ, բայց չեմ ուզում: Ուզում եմ արթուն մնալ, մինչև որ աղմուկ լսեմ, ցանկացած աղմուկ: Մինչև բացեմ աչքերս ու տեսնեմ, թե որտեղ եմ: Գուցե Սամիրայի կողքին եմ և գլխի չեմ ընկնում: Գուցե նա ասում է՝ մի՛ քնիր, արթո՛ւն մնա: Ոչ մի դեպքում հուսախաբ չեմ անի Սամիրային:

Երբեմն այնպե՛ս կուզեի ծնված լինել Սամիրայի երկրում: Իդեալական տարբերակով՝ նրա հարևան փողոցում: Ինչ-որ տեղ՝ բամբուկից վարագույրների մեծ խանութի և թեյարանի արանքում, որտեղ, ինչպես ասում է Սամիրան, հորեղբայրն անցկացնում է իր կյանքի մեծ մասը՝ լուծելով աշխարհի խնդիրները: Գուցե միասին խաղայինք: Մեր կյանքը շատ ավելի հեշտ կլիներ, և Էրդի տոնին կգնայինք նրանց տուն, նրա հորեղբոր բակ: Կամ նրանք կգային մեր բակ:

Ժամանակն անցնում է, բայց ծայն չկա ու չկա: Ուզում եմ լսել Սամիրայի ծայնն ու զգալ նրա ձեռքերը դեմքիս, նուրբ մատները՝ շուրթերիս վրա: Հոտոտել նրան: Հիմա, թվում է, ցավը վերադառնում է, ու ես շփոթվում եմ: Իմ շուրջը տիրող դատարկությունը ճզմում է բոլոր կողմերից: Կարծես աչքերը ժապավենով կապած տղա լինեմ, որին նետել են անկառավարելի ոհմակի մեջ: Երբ փոքր էինք, խաղում էինք այդ խաղը: Երբեք չեմ կապել խաղացողի աչքերն ու կենտրոն չեմ հրել, ու չեմ հասկանում՝ ինչպես կարող ես գլխի ջնկնել, թե ով է քեզ հետուառաջ հրում:

Հոգևած եմ: Գիտեմ, եթե հանգստանամ, դադարեմ մտածել, կքնեմ: Չեմ ուզում: Որովհետև եթե Սամիրան գա ու տեսնի, որ քնած եմ, չի ցանկանա արթնացնել: Որոշել եմ՝ հենց որ տեսնեմ Սամիրային, առաջին հեր-

թին կասեմ, որ սիրում եմ: Հետո կասեմ, որ նա ոչ մի վատ բան չի արել: Որ այս երեկո մեղքը որքան իրենն է, այնքան էլ՝ իմը: Որ իրականում բեռնատարի վարորդն էր մեղավոր, որն իր պայծառ լույսերով կուրացրեց մեզ, ու ես չպիտի թույլ տայի նրան դեպի նստել: Եվ որ մեքենան, կամ այն, ինչ դրանից մնացել է, կարևոր չէ: Կարևորը՝ երկուսս ողջ-ամողջ ենք: Նորից կասեմ, որ սիրում եմ, ու որ, ո՛չ, երբեք չեմ պատկերացնի կյանքն առանց նրա: Եվ մի օր, երբ երեխաներ ունենանք, նրանց կտանենք Սամիրայի երկիր՝ Էփոնի մասնակցելու, որպեսզի գնան հորեղբոր բակ, վազվզեն ու խաղան Ամալի, Ֆարիդի ու Հաբիբի հետ այն ուրախ խառնադմուկի մեջ, որը երբեմն, կիրակի օրերին, այնքան էր կարոտում մեքենայի խաղաղ լռության մեջ:

Բայց մենք հաստատ վնասվածք ենք ստացել, երկուսս էլ, եթե բերել են հիվանդանոց: Երևի գիտակցությունը կորցրել ենք, հետո մեզ հանել են մեքենայից ու բերել այստեղ: Ինձ մի սենյակ են տարել, Սամիրային՝ ուրիշ: Կամ գուցե կողք կողքի ենք, բայց ո՛չ ես գիտեմ, ո՛չ նա: Միայն այն միտքը, որ Սամիրան գուցե պառկած է մոտակայքում, հուզում է ինձ: Փորձում եմ ձեռքս հանել ծածկոցի տակից, մեկնել, որ դիպչեմ նրան, ու երբ մտածում եմ, որ իրականում ինչ-որ առարկայի եմ դիպչում, հասկանում եմ. ձեռքս առաջվա պես իր տեղում է, կողքիս:

Ու մտածում եմ, որ եթե հիվանդանոցում ենք, ուրեմն հաստատ տուն են գանգել: Ամենայն հավանականությամբ նույնականացման քարտս գտել են դրամապանակիս մեջ կամ էլ Սամիրայի պայուսակից են ինչ-որ բան գտել: Կամ գուցե բջջայինս են գտել, ու միայն մի գործողություն կատարել՝ սեղմել «Մայրիկ» հեռախոսահամարը: Ու եթե երկուսին էլ գանգել են, ուրեմն, հավանաբար, երկուսն էլ հիմա դրսում են, անհամբեր սպասում են, թե երբ կտեսնեն մեզ: Մայրս մի կողմում, Սամիրայի մայրը՝ մյուս: Հետաքրքիր է՝ կճանաչե՞ն իրար: Կհասկանա՞ն՝ ով ով է: Մենա՞կ կլինեն, թե՞ անհետածգելի օգնության սենյակը մարդաշատ կլինի նույնիսկ այս ժամին: Զգում եմ ուր որ է կընեն: Ա՛խ, այս ահավոր ծանրությունը, որ քաշում է ներքև:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

Այստեղ աշխատող բազմաթիվ բժիշկներից մեկն անունով է դիմում նրանց:

- Տիկին Վե՛րլա: Տիկին Ա՞զգի:

Նրանք վեր են թռչում աթոռներից, նայում իրար ու մոտենում բժշկին: Բժիշկը պատմում է պատահաճը: Խնդրում է, որ սպասեն, ու նորից գնում է ներս: Երկու կանայք, որոնց կեսգիշերին արթնացրել էր ահասարսուռ հեռախոսազանգը, հեկվում են նստարանի թիկնակին: Երկուսն էլ լաց են լինում ու նայում իրար՝ դուրս պրծած աչքերով: Մեկը, որն ավելի մոտ է դռանը, վեր է կենում ու մոտենում մյուսին, որը նստած է նախազգուշացման ազդագրի տակ: Հղիություն: Փողոցային թմրանյութերի հետևանքներ: Նա սկսում է բարձր լաց լինել: Աբայա հագածը բռնում է նրա ձեռքը: Հիմա միասին են լաց լինում: Երկուսով ջանադրաբար աղոթում են նրա համար, ում այնքան շատ են սիրում, աղոթում են, որ նրան չտանեն: Առայժմ չտանեն:

- Ո՛վ կմտածեր, որ այստեղ կհանդիպենք,- ասում է սևազգեստը՝ թաց անձեռոցիկով սրբելով քիթը:

- Ո՛վ կմտածեր,- պատասխանում է մյուսը: Աչքերն արյունակարմիր են, ձեռքերը դողում են:- Ո՛վ կպատկերացներ:

- Վաղուց էի ուզում հանդիպել ձեզ,- ասում է մեկը: Հետո, պատասխան չստանալով, շարունակում.- Շատ լավ բաներ եմ լսել ձեր մասին:

- Ես էլ՝ ձեր:

Եվ դարձյալ լռություն: Երկու սրտերը բաբախում են նույն հույսով:

- Ի՛նչ երջանիկ էին միասին:

- Են: Երջանիկ են միասին:

Երկուսով անթարթ նայում են հատակի սալիկներից արտացոլվող վառ լույսին՝ չհավատալով, թե որտեղ են:

- Նա շատ է սիրում ձեզ, գիտե՞ք: Հաճախ է խոսում ձեր մասին:

Ժամանակն անցնում է: Մյուսը լուռ է մնում, հետո խոսում է.

- Վերջերս ձեր տանն ավելի շատ է լինում, քան իմ տանը:

- Ինձ հաճելի է: Լավ տղա է, անհնար է չսիրել նրան:

- Ձեր դուստրն էլ, որդուս ասելով:

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ ՄԱՂԹԵԼՈՎ

- Սամիրան սիրում է նրան: Երբեք նրան այսքան երջանիկ չեմ տեսել:

- Ես էլ չեմ հիշում, որ տղաս այսքան երջանիկ լիներ:

Այս խոսքից մեկը սկսում է դարձյալ լաց լինել, իսկ մյուսը գրկում ու մխիթարում է նրան: Երկուսն էլ փակում են աչքերն ու լուռ աղոթք մրմնջում:

Երբ դուռը դարձյալ բացվում է, դուրս է գալիս բժիշկը՝ գունատ ու այլայլված: Կանայք ոտքի են ելնում:

- Խնդրում եմ, եկե՛ք իմ հետևից: Ներսում կխոսենք:

Դարձյալ ձեռք ձեռքի են տալիս, ամուր սեղմում ու գնում բժշկի հետևից:

Տեսնում եմ, թե նրանք ինչպես են ձեռք ձեռքի տված սենյակ մտնում: Հիմա իսկապես ուզում եմ ձայն տալ Սամիրային:

Coup d'etat³

Kolp ta' stat

Մարկը պատկերացնել անգամ չէր կարող, թե երբևէ որևէ կին այն-քան ուժեղ կլինի, որ իրեն անդունդը կզցի՝ ուղղակի իր կյանքից հեռա-նալով: Ընկերները զգուշացնում էին. նախկին կյանքին վերադառնալու համար որոշ ժամանակ է պետք: Ու եթե շարունակի լող տալ նրա լուսա-նկարներում՝ բորբոքելով հիշողությունները և դարձյալ ու վերստին լսելով նույն երաժշտությունը, միայն կերկարացնի այդ ժամանակահատվածը: Եթե ճակատագիրը չորոշեր բարեգութ լինել նրա հանդեպ, երբեք չէր հաս-նի այն կետին, երբ կնոջ անսպասելի ժպիտը վերածվում է հայտնի ասաց-վածքի սեպին, որով ուրիշ սեպ են հանում: Բայց կարելի էր գոնե ընդունել ճակատագրի հրավերը՝ ճամփա ընկնելով դեպի մեծ աշխարհ, տանը թո-ղած իր հանդեպ խղճահարությունը:

Հոգեթերապևտը փորձում էր բացատրել, որ կյանքը նոր էջից սկսելու համար անհրաժեշտ ուժը հենց իր մեջ է: Պեղահաբերը կարող են օգնել, բայց նորից սկսելու խթանը պետք է ներսից գա: Հոգեբանին հինգ ամիս այցելելուց հետո հոգևեց կնոջ ճղճղան ձայնից: Զզվել էր մի ժամ ձգվող հեկեկոցների համար մի փեշ փող վճարելուց. փոխարենը կարող էր մենակ արտասվել, ծրի, իր բազմոցին: Վերջին սեանսին հոգեբանին հայտնեց, որ կանխիկ գումար չունի, ու որ հաջորդ անգամ կվճարի երկու սեանսի համար, բայց գիտեր, որ հաջորդ անգամը երբեք չի լինելու: Մի զույգ սև բամբակե ձեռնոց թողեց բաց կանաչ բազմոցի վրա՝ որպես նշան, որ կվե-րադառնա: Բայց ինչ էլ որ լիներ դրանց գինը, ինքը շատ ավելին էր խնայել: Այն ժամանակ փողը նրա համար որևէ նշանակություն չուներ: Այլևս ոչինչ արժեք չուներ:

3 Պետական հեղաշրջում:

Առավոտյան բացում էր աչքերն ու երագում նորից քնելու մասին: Ոչ թե ևս մի գիշեր, այլ առնվազն մեկ-երկու տարի: Օրվա ամենավատ ժամն էր. անկողնում բացել աչքերն ու գիտակցել, որ երագ չի եղել, ու Սոֆին պառկած չէ կողքին: Նրա գունատ մարմինը: Կարճ սև մազերը: Ուսի այն պեպենը, որին սիրում էր սեղմել շուրթերը՝ ձևացնելով, թե պոկում է:

Որքան շատ էր խորհում կատարվածի մասին, այնքան շատ էր հիշում հոգեթերապևտի և ընկերների խոսքը. նրանք պնդում էին, որ պետք է առաջ նայել: Բայց մոռանալու փոխարեն վերապրում էր յուրաքանչյուր հիշողություն, նորից ու նորից գույն ու շունչ հաղորդում: Պատկերացնում էր, թե ևս ինչպես է արթնանում ու գլորվելով բարձրանում իր մարմնին՝ կուրծք կրծքի, խաղաղ շնչալով՝ դեռ քնած ես, ծուլիկ: Հետո արթնացնում էր միայն իրեն հատուկ ձևով, ու պատրաստվելով կյանքի հերթական օրվան, որը հիմա այնքան կատարյալ էր թվում, որոշում էին, թե ինչ են անելու երեկոյան: Խոսում էին, թե ինչ ֆիլմեր են ցուցադրում կինոթատրոնում, ինչ է պետք զնել, ընկերներից ում ծննդյան տարեդարձն է մոտ ժամանակներս, որ տեսաերիզն է վաղուց սպասում հյուրասենյակի սեղանին, և որ տնական ռավիոլին արդեն մի ամիս սառցարանում է: Բայց հիմա բացում էր աչքերն ու ոչինչ չէր տեսնում, բացի սառը բարձից, որի երեսը կեղտոտվել էր թքից. երագում փորձում էր շուրթերով պոկել պեպենը: Ու զգում էր հինգ ամիս չփոխած սավանների հոտը, բերանի դառնահամն էր զգում ու փորձում ազատ օր վերցնելու պատրվակ գտնել. բայց ինչքան կարելի է ձևացնել, թե հիվանդ է: Հարյուրերորդ անգամ մտածեց՝ գուցե դուրս գա աշխատանքից, փախչի ու հեռու մի տեղ կյանքը սկսի մաքուր էջից: Հիշեց ֆիլմը, որ տեսել էր փոքր ժամանակ. տղամարդու մասին, որը փախուստի է դիմում՝ բանտախցից թունել փորելով մինչև ջրթափ փոսը, և ծերունու, որը ֆիլմի վերջում այնքան միայնակ է զգում բանտից դուրս գալուց հետո, որ հյուրանոցում սենյակ է վարձում, անվան սկզբնատառերը խազում հեծանին ու կախվում:

Աշխատանքի ճանապարհին իր հետ քարշ էր տալիս չորս տարվա հիշողություններ կնոջ մասին, որը, նրա կարծիքով, պիտի դառնար իր երեխաների մայրն ու թոռների տատիկը. մի օր ունենալու էր: Երբ դուրս էր

գալիս տևից, անասելի ջանք էր գործադրում, որ հանրությունից թաքցնի հեկեկոցը: Ամեն կերպ փորձում էր զսպել արցունքները: Մեղմում էր մատները, կրծոտում շրթունքները, այնքան էր կծում մատները, մինչև արյունահոսում էին, ճանկոտում էր մեջքը: Ու երբ աչքերը վերջին սախազգուշացումն էին տալիս, շտապում էր մոտակա խանութ, ճանկում առաջին պատահած շապիկը, վազում հանդերձարան, իբր ուզում է փորձել, ու տասնհինգ րոպեից դուրս գալիս: Կամ շտապում էր եկեղեցի: Կամ մետրոյի կայարան: Կամ՝ զբոսայգի: Կամ էլ՝ աշխատավայրի գուգարան, ու դուռը կողպած՝ մնում այնտեղ, ձեռքը ջրի կոճակին՝ մի քանի րոպեից մեկ սեղմելով, որ կասկածի տեղիք չտա:

Գիտեր, իր վիճակում չի կարող կարևոր որոշումներ կայացնել: Գլխում առկայծեց իր երկիր վերադառնալու միտքը: Կամ զոնե կարելի էր տեղափոխվել նոր բնակարան, քաղաքի ուրիշ թաղամասում՝ թողնելով նրան հիշեցնող ամեն բան: Նույնիսկ մտածում էր մեքենան փոխել. չէր պատկերացնում առջևի նստարանին որևէ մեկին, բացի Սոֆիից: Բայց չէր ուզում արմատական որոշումներ կայացնել: Երկշաբաթյա ուղևորությունը դեպի Աֆրիկա, որը որոշել էր ձեռնարկել կնոջ հեռանալուց անմիջապես հետո, որ հեռվից մոռանա նրան, հակառակ ազդեցություն ունեցավ: Տպավորություն էր, թե կնոջն էլ է տարել իր հետ. ամբողջ ճանապարհին՝ «Շառլ դը Գոլ» օդանավակայանից, սառցապատ թռիչքուղուց պոկվելու վայրկյանից մինչև երկու շաբաթ անց իր վերադարձը՝ զգում էր կնոջ ներկայությունը: Դեպի Յոհաննեսբուրգ ուղևորության ընթացքում խոսում էր նրա հետ, բռնում ձեռքը՝ թռիչքի ժամանակ իրար հետևից ֆիլմեր դիտելով: Յո՛բուրգից մինչև Բլանթայր՝ երկարաշունչ պատմություն էր պատմում նրան, իսկ Մալավիում կինն ամենուր սովերի պես հետևում էր նրան: Բոլոր ավտոբուսները, որ նստում էր, փողոցային ուտելիքը, որ ծամում էր, գիշերները, երբ քնում էր, անցակետերը, որոնք հատում էր, հողածածկ ճանապարհները, որոնցով քայլում էր, փղերը, որոնց տեսնում էր, մոճակները, որոնց սպանում էր, ընդհուպ մինչև հին Fanta-ի շշերը, որոնցից խմում էր. ամենուր կիևը կողքին էր: Արտացոլում էր իր ժպիտը, երբ Մաքլիբրի հրվանդանի ափին հանդիպում էր երեխաների. նրանք պարում

ու ուղքերով խփում էին դատարկ շշերին, որ զբոսաշրջիկները մի քանի մետաղադրամ նետեն: Ինչպես ինքը, կինն էլ անակնկալի եկավ Սզուգուի ծայրահեղ աղքատությունից: Եվ խեղճ արքիևոսներից, ուրվականի պես ճերմակ. նրանց մարմինները կարծես հալչում էին կիզիչ արևի տակ: Ի՛նչ դաժան կարող է լինել կյանքը:

Նետո, երեկոները, երբ վերհիշում էր օրը, մտածում, թե ինչքան միայնակ է, ու ի՛նչ հաճույք կստանար կինը, եթե իր հետ լիներ, ազատություն էր տալիս ցավին, արցունք հեղում, բացում օրագիրն ու գրում նրան իր տեսած, լսած ու զգացած ամեն բան: Օրինակ՝ գրում էր, թե ինչպես է երբեմն խելագարի պես ուսապարկն ուսին վազվզում, միայնակ ու ցրված, ու, կնոջը տեսնելուց բացի, ոչինչ չի ուզում: Եվ այնուամենայնիվ շարունակում էր թերթել լուսանկարների անվերջանալի շարքը. ա՛խ, երանի կյանքը նորից միավորեր նրանց. ի՛նչ հաճույքով ցույց կտար լուսանկարները տանը, բազմոցին, նրա գլուխն իր կրծքին, ու կպատմեր ամեն մեկի պատմությունը: «Այս մեկն այստեղ է,- օրինակ,- այն մեկը՝ «Կարլսբերգի» գործարանի դիմաց: «Կարլսբերգն» ամենահայտնի զարեջուրն է: Պարչևագույն զարեջուր ունեն, կոչում են «բրաունի»: Բոլորը դա են խմում: Կամ «Տես, մոծակների ցանցն է, Բլանթայրում անցկացրած առաջին գիշերն իմ սենյակում էր: Տեսնո՞ւմ ես անցքերը»: Ու կինը կծիծաղեր՝ հագին գիշերազգեստի տաբատը, որից մաքրության հոտ էր փչում, ու այնքան լայն էր, որ մորն ու քրոջն էլ կտեղավորեր:

Մենության առաջին մի քանի ամիսներին լինում էին պահեր, երբ համոզված էր, որ կվերամիավորվեն: Ու ինքը կօգտվի կարճատև դադարի վաղանցիկ պահերից, որ քեբաբ ուտի հանդիպակաց մայթի թուրքական ռեստորանում, որ ցնցուղ ընդունի, որ ժպտա: Ու գուցե մտածի շաբաթկիրակի մի տեղ մեկնելու մասին: Բայց ավելի հաճախ լինում էին պահեր, երբ լիովին համոզվում էր, որ երբեք չեն միավորվի, ու սկսում էր անզուսպ հեկեկալ, փոքրիկ տղայի պես, ինչպես այն գիշեր, Գլազգոյում, շաբաթավերջին, երբ Big Mac-ը հետ տվեց Սոշիոլ փողոցում. մի ամբողջ օր պատկերացրել էր, որ կինն իր կողքին է:

Նետո որոշեց, որ փախուստի այսպիսի փորձերն անօգուտ են: Մի-

այն փող է վատնում ու դիմացը ոչինչ չի ստանում: Եթե վշտի ժամանակ է, ուրեմն ստիպված է անցնել դրա միջով, մենակ ու մինչև վերջ: Հիշեց կնոջ խոսքերը, այն օրը, մեքենայի մեջ. ասաց, որ ամեն ինչ վերջացած է, որ լավագույն տարբերակն իրենց կապը խզելն է, որովհետև վերջը դեռ թարմ է, ու եթե նորից քերծեն, քանի դեռ կարգին չի սպիացել, ցավը կվերադառնա նույն ուժգնությամբ: Ի՞նչ ուժեղ էր թվում, ինչպե՞ս էր վերահսկում իր սիրտն ու միտքն այդ օրը: Ինչքան վճռական էր: Ինչպե՞ս կուզեր նույնքան վստահ ու վճռական լինել: Ստաժեց՝ գուցե պատճառը հենց դա՞ է, որ հեռացավ իրենից, իսկ այն փաստարկը, թե սերիական ստախոս է, ուղղակի հարմար պատրվակ էր: Գուցե ուզում էր լինել տղամարդու կողքին, որը ոչևչից չէր վախենում: Տղամարդու, որ վստահում էր իր ուժերին, իր գործին: Տղամարդու, որ ընդունում էր ցանկացած նոր մարտահրավեր՝ առանց աչք թարթելու և համոզված, որ փորձությունից դուրս է գալու ավելի ուժեղացած:

Ի վերջո որոշեց, որ ամենևին իմաստ չունի որևէ բան ծրագրել, եթե կիսն այդ ծրագրի մաս չի լինելու: Մերժեց օգոստոսի վերջին արձակուրդն իրենց հետ անցկացնելու ընկերների հրավերը: Ասաց, որ ուրիշ ծրագրեր ունի, բայց գիտեր. ոչ մի տեղ էլ չի գնալու:

Ժամանակի ընթացքում Մարկն ուրիշ փոփոխություն նկատեց: Նրան դուր էր գալիս այն ամենը, ինչ սիրում էր Սոֆին: Չնայած երբեք Վուդի Ալենի երկրպագու չէր եղել, հիմա գնում էր նրա մասնակցությամբ բոլոր ֆիլմերը, որ հաջողվում էր գտնել, ու եթե մինչև վերջ չէր դիտում, գոնե կարդում էր կարճ բովանդակությունը, որ կարողանար խոսել այդ մասին: Մի անգամ Սոֆին ասել էր, որ սիրում է, երբ տղաներն Asics կոշիկներ են հագնում, բնականաբար մեծ ոգևորությամբ գնաց կոշիկ գնելու, ասես շուտով ամբողջ երկրի խանութներում կոշիկ չէր մնալու: Փոխեց բջջային հեռախոսը. հիշեց, որ Սոֆին դուր չէր գալիս իր հնացած մոդելը: Ու երբ լացի սեանսներից մեկին պատահաբար մի շիշ ջուր թափեց համակարգչի վրա, Mac գնեց: Ու այլևս չէր կրում ականջօղը, որը նյարդայնացնում էր կնոջը: Կարծես ուզում էր տպավորություն թողնել նրա վրա, եթե երբևէ նորից միասին լինեին: Հենց այդ պատճառով Սոֆիի հեռանալուց մի քանի

շաբաթ անց մեկնել էր Աֆրիկա: Սոֆին հաճախ էր փորձում համոզել, որ գոնե մի անգամ հրաժարվի լողավազանի մոտ անցկացրած անհոգ արձակուրդից և փոխարենը մեկնի արկածային ճամփորդության:

Եվ այնուամենայնիվ, չնայած դարակը լեփ-լեցուն էր Վուդի Ալենի ֆիլմերով, Asics-ի երեք զույգը կոկիկ ու կողք կողքի շարված էր եկեղեցու բեմում կանգնած տղաների պես, նոր բջջայինն ու սպիտակ MacBook-ը սեղանին էին, ներսում ոչինչ չէր փոխվել: Առաջվա պես ամեն թույլ մտածում էր նրա մասին: Սոֆին երբեք չէր պատասխանում նրա ուղարկած էլեկտրոնային նամակներին ու նույնիսկ փոխել էր հեռախոսահամարը, երբ հասկացել էր, որ իրեն բաց չի թողնի ու հանգիստ չի տա:

Եկավ օգոստոսը, ընկերները հավաքեցին իրերն ու հեռացան, իսկ նա մնաց իր բնակարանում: Երբ ընկերներն արտասահմանում էին, ասես մեն-մենակ լինելը աշխարհում: Ընտանիքի հետ նույնպես կորցրել էր կապը: Սոր հետ վերջին անգամ խոսել էր ութ ամիս առաջ, երբ Սոֆիի հետ խնդիրներն արդեն սկսվել էին, ու մայրն ասել էր՝ ճիշտ կլինի տուն վերադառնա, մի լավ կին գտնի:

Բայց այդ տարվա օգոստոսին, բնակարանում մենակ մնալու երկրորդ օրը, երբ բազմոցին նստած սպազետի էր ուտում, հանկարծ հայացքը կանգ առավ փայտե փղի վրա, որ գնել էր Մալավիում՝ հույս ունենալով մի օր այն տալ Սոֆիին, ու հանկարծ գլխում միտք ծնվեց: Ի՞նչն է խանգարում, որ փոքրիկ անմեղ պատմություն հորիսի, ինքն էլ դառնա դրա հերոսը՝ ուղղակի մի քիչ ժամանակ սպանելու համար: Շտապ կուլ տվեց ճաշը, արագ սրբվեց ու հենվեց բազմոցին՝ MacBook-ը ձևկին: Ստավ Facebook.

«Ուղևորվում եմ Մալավի»:

Facebook-ի վերջին թարմացումից ամիսներ էին անցել, ու վայրկենական հետադարձ կապն անակնկալի բերեց նրան: Չէր կորցրել հետևորդներից և ոչ մեկին: Ընկերներից մի քանիսն անմիջապես «հավանեցին» կարգավիճակի թարմացումը: Մյուսները, որոնք մտածում էին՝ տեսնես մենե՞ղ է, հաղորդագրություններ ուղարկեցին՝ հարցնելով, թե ինչով էր զբաղված ամբողջ ընթացքում ու հաջողություն մաղթեցին նոր արկածներում: «Նորից գնո՞ւմ ես», - անձնական նամակով հարցրեց փոքրաթիվ գործըն-

կերևորից մեկը, որը գիտեր, որ մի քանի ամիս առաջ Մալավի էր մեկնել: «Պրա համա՛ր մեզ լուսանկար ցույց չէիր տալիս, այլանդա՛ն», - գրեց մեկ ուրիշը: «Սև աղջիկ ես կպցրել, հա՞: Հըմմմ... Էդ սևերից ազատում չկա: Լավ ժամանակ անցկացրու, ընկե՛րս»:

Կցմցելով օրագրի պատառիկները, որոնք գրել էր Սոֆիի համար Մալավիում, և բոլոր լուսանկարները, սկսեց բնակարանից հեռարձակել վիրտուալ ճամփորդությունը: Կարող էր հորինել ինչ սիրտն ուզեր: Բացի սակավաթիվ գործընկերներից, քաղաքում շատ ընկերներ չունեի, իսկ օգոստոսին քաղաքն առանց այդ էլ դատարկ էր: Սևացել էին միայն նրանք, ովքեր չէին կարող իրենց թույլ տալ հեռանալ քաղաքից: Օրինակ՝ պակիստանցի կինը ներքևի բնակարանում, որը գաղափար անգամ չունեի, թե ովքեր են իր հարևանները: Ամիջապես մուտքագրեց.

«Հենց նոր վայրէջք կատարեցի Յո՛բուրգում»:

Եվ այդպես շարունակ, կարճ հրապարակումներ էր անում ֆիլմերի մասին, որոնք դիտել էր Հարավաֆրիկյան ավիաուղիների թռիչքին («Պոկահոնտաս», «Շեղակի» և «Թարգմանիչը»), օդանավում սաղմոն ուտելու, թռիչքի հարմարավետության մասին, և թե ինչպես էր ամաչում, որ բավարար ժամանակ չունեցավ՝ օդանավակայանից դուրս գալու ու մի քիչ շրջելու Հարավային Աֆրիկայում, մինչև կիսաներ Բլանթայր՝ Մալավիի տնտեսական մայրաքաղաք տանող թռիչքին: Այդ չորս ժամվա ընթացքում, մինչ Բլանթայրի ճանապարհին էր, ներբեռնելու պատրաստեց լուսանկարների առաջին շարքը՝ ցույց տալով, որ ժամանել է Մալավի: Հետո հայտարարեց, որ վայրէջք է կատարել Բլանթայրի փոքրիկ օդանավակայանում. երկու ընդարձակ սրահ՝ արևախանձ դաշտերի արանքում: Երեկոյան ավելի մանրամասն հրապարակում արեց օդանավակայանի լուսանկարի տակ:

«Բլանթայրի օդանավակայանում պետք է հանդիպեի տաքսու վարորդի, որին ուղարկել էր «Մագանիգո» հյուրատունը: Այդպես էլ եղավ, բայց մեքենայի փոխարեն մոտոցիկլետով էր եկել: Փառք Աստծո, ընդամենը մի ուսապարկով էի: Ինձ տարավ ավտոբուսի կանգառ, որ սև շուկայում մի քիչ կվաչա (նրանց տարադրամը) ձեռք բերեմ: Բայց անհարմար էի զգում ու որոշեցի միայն 30 եվրո փոխանակել: Մեկ ժամից ավելի պետք եղավ

հյուրատուն հասնելու համար: Բարեբախտաբար, համացանցը հասանալի էր: Այստեղ սքանչելի է: Թերեզան՝ տանտիրուհին, առաջարկեց հայտնի մահևուն, որը մի տեսակ...»:

Մորաքրոջ դուստրը՝ Մարիան, որի հետ վեց տարի չէր խոսել, ասաց, որ զգույշ լինի, բայց նաև լավ ժամանակ անցկացնի: Աշխատավայրից Սիլվենը հորդորեց շատ չվստահել մարդկանց: Մյուսները զարմացան, որ այդքան հեռու է գնացել: Շատերը նախընտրեցին մի կարճ «վա՛յ» ասել, գիտե՞ս, ուղղակի մի բան ասած լինելու համար: Թեսին, որին հիշում էր որպես իր գյուղի ամենահիմարիկ աղջիկ, ավելացրեց՝ «Եղպես էլ շարունակիր, ախպե՛րս»:

Եվ այսպես, ուղևորությունը շարունակվում էր: Երկար օրվա ավարտին, երբ թափառում էր Բլանթայրում ու, քառասյին ճանապարհներից, համատարած անտառբերությունից ու գրիչ, քաղցրավենիք կամ մի քիչ փող խնդրող երեխաներից բացի, գրեթե ոչինչ չէր տեսնում, նստեց Չոմբա տանող ավտոբուսը: Հաջորդ օրը գրեց, թե որքան հոգևեցուցիչ են ավտոբուսով ուղևորություններն Աֆրիկայում: Մինչև ավտոբուսի մեկնումը երեք ժամ կար, ու թեև այն նախատեսված էր տասնհինգ ուղևորի համար, երկու անգամ շատ մարդ վերցրեց, գումարած քսան ճուտ: Չոմբա հասավ առավոտյան վաղ, քայլերն ուղղեց դեպի հյուրատուն և անմիջապես, բացի այլ բաներից, սկսեց գրել Աֆրիկայի յուրահատուկ հոտի մասին, որը խփում է քթիդ օդանավից իջնելուն պես ու չի անցնում, մինչև ցնցուղ չես ընդունում ուրիշ մայրցամաքում: Չոմբայից էքսկուրսիայի գնաց Լիվոնդե այգի, տեսավ ամենատարբեր կենդանիներ: Բարեբախտաբար, այնտեղ ևույնպես համացանցը հասանելի էր, ու կարողացավ բազմաթիվ լուսանկարներ ներբեռնել:

Նրա ֆեյսբուքյան պատին հիմա բզզոց էր, ինչպես գյուղի մարդաշատ բարում: Բոլորն ինչ-որ ասելիք ունեին:

«Հերիք է, ինչքան փղեր ու գետածիեր տեսար: Ճամփա ընկիր Մանգոչի, հետո՞ Մաքլիդը հրվանդան՝ օդափողով լող տալու: Ինչպես ասում են՝ Մոնի բոլորին: Մուլի բվանջի՞: Նդիրի բվինո»:

- Այնքան՝ ուրախ եմ քեզ համար,- գրում էր Աբիգեյը՝ համալսարանական ընկերներից մեկը:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

- Ո՛րն եմ նախանձում,- գրում էր հորեղբոր որդու կինը, որը նրան «ուղտ» էր անվանում, որովհետև սեղանի շուրջը ուղտի պես էր ծամում ուտելիքը:

Շանտ էր ուզում, որ Սոֆին ինչ-որ կերպ հետևեր իր արկածներին, հիանար, գուցե մի քիչ էլ նախանձեր, թե ինչպես է վերականգնել joie de vivre⁴-ն: Գուցե դա այն փոփոխությունն էր, որն անհրաժեշտ էր՝ հարաբերություններին երկրորդ հնարավորություն տալու համար: Գուցե իրենց համատեղ վերջին ամիսներին չափազանց ծանծրալի էր դարձել, չափից շատ էր կենտրոնանում աշխատանքի ու իր գործերի վրա: Գուցե Սոֆին ուզում էր տեսնել նրան այն նույն ժպիտով, որը գրավել էր նրա սիրտը չորս տարի առաջ:

Արդեն երեք օր է, ինչ Մալավիում էր. լուսանկարներ էր ներբեռնում, կիսում Շոն Փոլի ու Շեգիի երգերը, որոնք լսում էր բոլոր բարերում, գրում էսառու Մվամվայայի սքանչելի երաժշտության մասին ու նկարագրում յուրաքանչյուր նոր արկած: Օրինակ, թե ինչպես Էփվոնդեում փղերը մոտեցան զբոսայգու կենտրոնում կայանած իրենց բեռնատարին: Կամ երբ լուսանկարում էր բանջարեղենի մարդաշատ շուկան, ու բոլոր կանայք բղավում ու ճչում էին, իսկ որոշ տղամարդիկ փորձում էին խլել տեսախցիկը՝ ասելով, որ իրենց նկարելու իրավունք չունի:

«Լիլոնգվեում ո՞վ կա: Գալի՛ս եմ»:

Պատմությունը զվարճացնում էր, ու նա այն համեմում էր երկրի մշակույթի, ավանդույթների, պատմության, աշխարհագրության և կլիմայի վերաբերյալ Վիքիպեդիայի փաստերով: Բազմաթիվ լուսանկարներ ուներ Մալավիում անցկացրած օրերից, որոնք ոչ մեկին ցույց չէր տվել. բավական լավ էր ճանաչում տեղանքը, ու ոչ ոք չէր կարող կասկածել, որ անդրավարտիքով նստած է իր հարմարավետ բնակարանում, պատմություն է հյուսում ու մտածում, թե ինչ հրաշալի կլիներ կյանքը, եթե Սոֆին պառկած լիներ կողքին, ինչ-որ ավագոտ լողափին: Ժամանակ առ ժամանակ մտածում էր՝ իրենց ընդհանուր ընկերները կփոխանցե՞ն լուրը, որ Մալավիում է: Ո՞վ գիտի:

4 Կենսուրախություն (ֆրանս.):

«Նույնընթաց մեքենայով M1-ը անցնելը զի՛լ էր:
Վերջապե՛ս, մայրաքաղա՛ք»:

Հասավ Լիլոնգվե և սկսեց պատմել, թե ինչպես պատշաճ հյուրատուն գտավ կենտրոնի ու Տարածք 2-ի արանքում, որը պատկանում էր մի սպիտակամորթ գույգի Հարավային Աֆրիկայից. նրանք պնդում էին, որ ստիպված են եղել փախչել երկրից, որովհետև սպիտակներին վնդում էին: Նույնիսկ կանխատեսում էին, որ առաջիկա տարիներին հեղափոխություն է լինելու: Մի քանի լուսանկար ներբեռնեց Լիլոնգվեում անցկացրած առաջին ժամերից, այդ թվում՝ երկու ինքնանկար. մեկը՝ շուկայում, լուիկներով շոջապատված, մյուսը՝ մեծ մզկիթի դիմաց: Հետո քնով անցավ՝ նույնիսկ չկասկածելով, թե ինչ է սպասվում վաղը:

Արթնանալուն պես տեսավ, որ հաղորդագրություն է ստացել գործընկերոջից՝ Ստեֆանից, որն արձակուրդում էր. ասում էր՝ անհանգստանում է, խնդրում էր կապի դուրս գալ, որ հանդարտվի: «Այսի՛նք», - մտածեց Մարկը, երբ վեր կացավ անկողնուց ու գնաց թեյնիկը միացնելու: Տուրը նոր էր սկսում եռալ, երբ ևս մի հաղորդագրություն եկավ. այս անգամ մտածեց, որ ինչ-որ մեկը հաստատ ծաղրում է իրեն: Մեկից էր, որի անունը չկար իր ծանոթների ցուցակում: Ճանաչեց երկրի ծածկագիրը, իսկ տեքստային հաղորդագրությունն ասում էր. «Ողջույն: Ֆինսա Կամիլլերին է՝ The Times-ից: Ասում են՝ Մալավիում եք: Ասացեք, խնդրեմ, ե՛րբ հարմար կլինի գանգել: Ձեր հեռախոսն անջատված էր մինչև այս պահը: Ձե՛ջ ԼԱՎ ՆԱՅԵՔ»:

Սա ի՞նչ պատմություն է: Սուրճի բաժակը ձեռքին՝ մտավ Facebook և հաղորդագրություններ գտավ հարյուրավոր ընկերներից. բոլորն անհանգստանում էին ու աղաչում հետ գանգել: Արդեն ուզում էր թարմացնել հրապարակումը՝ տեղադրելով օրվա անելիքները, երբ էլեկտրոնային փոստում հայտնվեց BBC-ի լուրերի ամենօրյա թողարկումը, ու նրան շանթեց առաջին գլխագիրը. «Հեղաշրջումը ցնցում է Մալավին. գոհվել է նախագահը և տասնյակ պատգամավորներ»:

Սեղմեց հոդվածի հղումը: Գրո՛ղը տանի: Մինչ քնած էր, լուր էր տարածվել, որ վիլան, որտեղ տեղի էր ունենում Մալավիի «Միասնություն»

կուսակցության նախագահ Բոմանի Մալեկեբուի կուսակցության կազմակերպած ընդունելությունը, ենթարկվել էր դաժան հարձակման: Հայտնում էին, որ նա մեռած է, նրա հետ նաև՝ կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներ, բանակի հրամանատարը, ոստիկանապետը, փոխնախագահը և այլք: Ու քանի որ ոչ ոք պատասխանատվություն չէր վերցրել, ընդդիմության առաջնորդ Ջիկոմո Կամվենդոն, որը նախագահ էր Մալեկեբուից առաջ, իշխանության է եկել զինված ուժերի և ոստիկանության օգնությամբ, «երկրում հնարավորինս արագ կայունություն վերահաստատելու համար»: Կամվենդոն վերանշանակել է բանակի նախկին հրամանատարին և նախկին ոստիկանապետին, որը դեռ վայելում էր բազմաթիվ զինվորների և ոստիկանների աջակցությունը, և նրանք շուտով դարձյալ վերահսկողությունն իրենց ձեռքն են վերցրել: «Նոր ժողովրդավարական շարժումը» վերադարձել էր իշխանության և անմիջապես քայլեր ձեռնարկել «այսպիսի բարդ և ցավոտ պահին» երկիրը միավորելու ուղղությամբ: Մալավիի բնակչությունը, հատկապես Բլանթայրի ու Լիլոնգվեի բնակիչները, բոլորը ցնցված էին: Մալեկեբուի աջակիցները հասկացել էին, թե ինչ է պատահել, և դուրս եկել փողոց՝ կատաղի ցույցերի:

Մարկը չէր հավատում կարդացածին: BBC կայքից տեղափոխվեց CNN. այնտեղ ասվում էր, որ տեղեկատվության նոր նախարարը քիչ առաջ հայտարարել է անվտանգության խիստ միջոցառումներ ձեռնարկելու և տասնյակ ձերբակալությունների մասին: Միջազգային կազմակերպությունները, այդ թվում՝ Միավորված ազգերի կազմակերպությունը և Աֆրիկյան միությունն իրենց բոլոր անդամներին կոչ են արել շտապ քննարկել իրադարձությունները և հայտարարել են, որ պատվիրակություններ են ուղարկում իրավիճակը մշտադիտարկելու նպատակով. որոշումն այնքան էլ դուր չի եկել նոր կառավարությանը, ինչի պատճառով տեղեկատվության նախարարը հայտարարել է, որ արտաքին ազդեցություններից զերծ մնալու համար Մալավիի սահմաններն ու օդային տարածքն անհապաղ փակվում են: Նախարարը հավելել է, որ միջոցառումները կշարունակվեն, մինչև կրկին կայունություն հաստատվի, և հնարավոր լինի նշանակել համապետական ընտրություններ:

Մի կայքից մյուսը՝ բոլորը խոսում էին Մալավիում կատարվող իրադարձությունների մասին: Նա ստուգեց Le Monde-ը. ներկայացված լուսանկարների շարքում Մալեկեբուի աջակիցներով լի փողոցներ էին. անհավանական բռնության տեսարաններ: Պարզվեց՝ Կամվենդոն արդեն երկու անգամ անընդմեջ նախագահ է եղել, ու ինչպես շատերը մեկնաբանում էին սահմանադրությունը, այլևս երբեք չի կարողանա զբաղեցնել այդ պաշտոնը: Իր բնակարանում փակված՝ Մարկն անհանգստացավ: Նկատեց, որ արդեն շուրջ ութսուն ընկերության հայտ ու տասնյակ հաղորդագրություններ է ստացել: Նաև հայտնաբերեց, որ հողվածում, որը հայտնվել էր իր երկրի The Times-ի էջերում, լրագրողն իրեն հիշատակել է որպես իր համերկրացու, որը հիմա Մալավիում է և կանոնավոր կերպով բլոգ է վարում Facebook-ում: Այս ամբողջ քառսի մեջ նաև հասկացավ, որ վերջին մի քանի ամիսների ընթացքում առաջին անգամ մի ամբողջ ժամ, թեկուզ մի անգամ չէր մտածել Սոֆիի մասին: Անհավանական է:

Նիմա ի՞նչ ակի: Ըստ նախնական ծրագրի՝ պիտի հեռանար Լիլոնգվեից ու մեկներ Սզուլու՝ կանգ առնելով Նկաթա ծովածոցում, որտեղից ներբեռնելու պատրաստ լուսանկարների գեղեցիկ շարք ուներ, ընդ որում մի լուսանկարում ձիով էր, ծանծաղ լճի ջրերում: Այնտեղից կշարունակի ճանապարհը դեպի Լիվինգստոնիա, որտեղ կիրապարակի Մալավի լճի ամենասքանչելի տեսարանը: Բայց հանկարծ կասկածեց. չգիտեր՝ շարունակի՞ ըստ ծրագրածի: Երկիրը կարծես համատարած քառսի մեջ լիներ:

Երկար ցնցուղ ընդունեց ու վերադարձավ բազմոցին՝ սրբիչը գոտկատեղին կապած: Միացրեց CNN -ը, որը հայտնում էր, որ երկու հիմնական կուսակցությունների աջակիցները դուրս են եկել փողոց, և իրավիճակը վտանգավոր է. քաղաքացիական պատերազմից մեկ րոպե էր պակաս: Երկու կուսակցությունների գլխավոր գրասենյակներն ավերված էին, Լիլոնգվե և Բլանթայր տանող հիմնական ճանապարհները՝ բարիկադավորված, ամենուր հրդեհ էր մոլեգնում: Նույնիսկ ավելի փոքր կուսակցությունները հայտնում էին, որ պահանջում են քաղաքական խորհրդակցություններ, և որ սա ոչ այլ ինչ է, եթե ոչ մինչև ամենայն մանրամասնությամբ մտածված պետական հեղաշրջում: Ոստիկանությունը փողոցներում արցունքաբեր

զագ, ռետինե, ինչպես և մարտական փամփուշտներ էր կիրառում, ձերբակալում ձեռքն ընկած ցանկացած մարդու: Ու մինչ հազարավոր մարդիկ կոծում էին փողոցներում, ուրիշ հազարավոր մարդիկ թալանում էին խանութներն ու ոչնչացնում ճանապարհին հանդիպած ամեն բան:

Բջջային հեռախոսի զանգը վախեցրեց նրան: Նույն հեռախոսահամարն էր. The Times-ի լրագրողն էր: Ի՞նչ անի: Պատասխանի՞: Ինչպե՞ս պատասխանի, եթե թռչունները դայլայլում են պատշգամբում: Թողեց զանգի: Այդպես էլ որոշեց շարունակել պատմությունը, բայց սեփական ռիթմով: Նախ սկսեց բողոքի ցույցերի և անկարգությունների սիրողական նկարահանումներ որոնել YouTube-ում, որտեղ անհասկանալի գորգոռոցների, կրակոցների, ավերածությունների ու ոստիկանության ազդանշանների խառնադմով էր լսվում: Ուրեմն, եթե լրագրողը սորից զանգեր, կմիացներ տեսահոլովակն ու հեռախոսին կպատասխաներ լոզարանից, իբր ցույցերին շատ մոտ է: Մի քիչ էլ կարդաց իրավիճակի մասին՝ խորանալով հիմնական կետերի մեջ: Ուզում էր սեփական կարծիքն ունենալ: Շատ շուտով հայտնվեց Մալեկբեուի կողմնակիցների շարքում, ինչպես բոլոր լրատվական գործակալությունները, վշտացած իրավիճակի լոջության համար, որը մի քանի տասնամյակով հետ էր շարտում աֆրիկյան երկիրը:

«Ես Լիլոնգվեում եմ, ողջ-առողջ, բայց շատ անհանգիստ»:

Կես րոպեում արդեն տասնյոթ հազորդագրություն էր ստացել: Ընդունեց ընկերության բոլոր հայտերը, կարդաց նամակները, որոնք շարունակ գալիս էին: Այնպես էր ուզում լուսանկարներ ներբեռնել, բայց Մալավիում անցկացրած օրերին անկարգություններ չէին եղել: Դիմեց Google-ի օգնությանը և որոնումների պատուհանում գրեց՝ «Պատերազմներ և անկարգություններ Աֆրիկայում»: Լուսանկարների հեղեղ տեղաց: Թերթեց էջերն այնքան, մինչև գտավ մի քանի լուսանկար, որոնք իսկապես կարող էին արված լինել Մալավիում: Որակը սարսափելի էր, բայց ոչ ոք նրանից Պուլիցերի որակի լուսանկար չէր սպասում: Պատճենեց Քենիայում և Նիգերիայում նախագահական ընտրություններին հաջորդած անկարգությունների լուսանկարները, որոնց հետևանքով հարյուրավոր մահեր էին եղել, և կտրեց ցանկացած մանրուք, որ կարող էր մատնել իրեն:

Յրված՝ մի քիչ սպագետի խաշեց, խառնեց աղ դրած տավարի մսի ու սոուսի հետ, որ մնացել էր սառնարանում: Արդեն վերջացնում էր, երբ հեռախոսը զանգեց: Լրագրողն էր: Արագ գտավ YouTube-ի տեսանյութը, միացրեց բարձրախոսները, սեղմեց «play» կոճակն ու վազեց լոգարան: Հեռախոսը բերանից մի մետր հեռու պահած՝ պատասխանեց՝ այո՛: Ձևացրեց, իբր շատ վատ է լսում գրուցակցին, բայց ասաց, որ հասկանում է, որ լրագրողն իր հայրենիքից է և ուզում է իմանալ՝ ինչպես է ինքը, և ինչ տեղեկատվությամբ կարող է կիսվել: Բազմոցին դրված համակարգչից տարածվող G-20-ի բողոքի ցույցերի աղմուկ-աղաղակի տակ, լոգարանի վարագույրի մեջ խճճված բջջայինով հայտնեց նրան իր իմացած սակավ տեղեկատվությունը:

- Մի շատ փոքր հյուրատանն եմ, Լիլոնգվեում: Այստեղ կատարյալ քառս է: Վախենում եմք, որ ցուցարարները կանցնեն մեր փողոցով: Եթե այդպես լինի, երևի կջարդեն բոլոր պատուհանները, կթալանեն ու կրակի բաժին կդարձնեն շենքը: Բայց գուցե և այդպես չլինի: Ինձ ասել են, որ ավտոբուսի կանգառը փակ է, ու գաղափար չունեմ, թե ինչպես դուրս գամ այստեղից: Բարեբախտաբար, համացանցը միացած է, ու չնայած կապն այնքան էլ արագ չէ...

Ուզում էր լրագրողին պատմել, թե ինչ էր տեսել ավելի վաղ՝ առավոտյան, բայց YouTube-ի տեսահոլովակը կտրուկ դադարեց, ու լռություն տիրեց: Արագ անջատեց հեռախոսը, թեթև ժպտալով՝ դուրս եկավ լոգարանից ու բացեց խոհանոցի պատուհանը:

Լրագրողը շուտով հարցաշար ուղարկեց նրան Facebook-ի հաղորդագրության տեսքով: Հարցնում էր՝ արդյոք կարելի՞ է օգտագործել նրա լուսանկարները: Իհարկե, թույլ տվեց: Մեկ ժամ անց ամբողջ երկիրն արդեն քննարկում էր Մարկի ճակատագիրը: Մեկ ամիս անց, երբ նրա երկրում ոչինչ չէր կատարվել՝ բացի բոլոր օդորակիչների միացած լինելու պատճառով հոսանքի անջատումներից կամ գուցե լողափին ծեր զբոսաշրջիկի հանկարծահաս մահից, Times-ի կայքում հայտնվեց Մարկի պատմությունը: Ազգային ռադիոկայանները շուտով ցանկացան հարցազրույց անել և հարցրին՝ արդյոք կարելի՞ է զանգել, և եթե այո, ապա երբ և ինչպես:

Երրորդ հարցազույցից հետո դուրս եկավ լոգարանից՝ քրտինքի մեջ կորած: Մի քայլ առաջ էր տարել պատմությունը՝ ասելով, որ ամենադաժան բողոքի ցույցերն արդեն մոտենում են կենտրոնի և Տարածք 2-ի սահմանագծին, որտեղ ինքն էր, և որ ստիպված է ուրիշ հյուրանոց գտնել, ավելի հեռու: Ավելացրեց, որ պետք է հատկապես զգույշ լինել, քանի որ այսպիսի հակամարտությունների ժամանակ սպիտակները միշտ ավելի շատ ուշադրություն են գրավում, քանզի կապված են Աֆրիկայի ճակատագրի նկատմամբ անտարբեր ավելի հարուստ մայրցամաքների հետ:

Պետք էր ինքնակազմակերպվել: Հնգապատիկ ավելացնել G-20-ի բողոքի ցույցերի քանակը: Բայց դրա համար անհրաժեշտ էր ներբեռնել ինչ-որ ծրագիր, բավական պարզ, քանի որ ուղեցույց փորփրելու ժամանակ չունեիր: Ներբեռնեց CoolEdit կոչվող մի ծրագիր և կարճ ժամանակ անց արդեն սովորել էր՝ ինչպես կրկնօրինակել և ցանկության դեպքում կրկնապատկել ձայնային ալիքը: Մի ակնթարթում տասը ռոպեանոց MP3 ձայնագրեց՝ աղմուկ-աղաղակով և իրարանցումներով լի:

Մինչ հեռախոսն անջատած էր, ու ոչ ոք չէր կարող անհանգստացնել, էլեկտրոնային նամակ ստացավ իր երկրի արտաքին գործերի նախարարությունից. խնդրում էին մնալ ապահով վայրում, մինչև ձեռնարկեն անհրաժեշտ բոլոր միջոցները: Ավելացրին, որ կառավարությունն առայժմ չի կարողանում կապ հաստատել նոր մալավական կառավարության հետ, որը միջազգային հանրությունը համարում է ապօրինի, բայց սերտ կապի մեջ են Լիլոնգվեում գործող միջազգային կազմակերպությունների գրասենյակների հետ և հետևում են զարգացումներին:

Արդեն մի քանի ամիս էր, ինչ նրա կյանքը վերածվել էր քաոսի: Մի օրում ֆեյսբուքյան ընկերները չորս անգամ ավելացել էին, ամեն ռոպե ընկերության նոր հայտ էր գալիս: Իր պատմության մեջ ավելի խորանալու համար հաջորդ առավոտ չբացեց վարագույրներն ու մթության մեջ դիտեց CNN-ի թողարկումները: Տեսարանները գրեթե անհավանական էին: Ցույցերը հիմա շատ ավելի բազմամարդ էին, գլխանոցներով տղամարդկանց միացել էին նաև երիտասարդ տղաներ: Հրապարակները լեփ-լեցուն էին մարդկանցով, որոնք գոռում էին, տանում երկու առաջնորդների նկարները՝ մի

կողմում Մայլեթբուի, մյուսում՝ Կամվենդոյի: Վառվող խանութների տեսարաններ: Իրար վրա քարեր նետող մարդիկ: Երեխաներ, որոնք ձևացնում են, թե մեծ են: Տուն վազող մարդիկ՝ թալանած ջահերով, ծաղկամաններով, գրամեքենաներով և ևույնիսկ լվացող սյուսթերի փաթեթներով: Շփոթված ծերունիներ, որոնք չգիտեն ինչ անեն: Ոստիկանություն, որը փորձում է կարգուկանոն հաստատել, բայց միայն ավելացնում է քաոսը: Իհարկե, բանտերում տեղ չկար փողոց դուրս եկած բոլոր մարդկանց համար:

Ստավ Facebook և գտավ ընկերության հարյուրավոր հայտեր ու տասնյակ հաղորդագրություններ: Մարդիկ, որ քսան տարի առաջ իր հետ սովորել էին դպրոցում, հիմա գտել էին նրան: The Times-ի հրապարակած պատմությունը, որի տպագիր տարբերակի շապիկի կեսն այդ առավոտ զբաղեցնում էր նրա դեմքը, գրավել էր մեծ թվով լրագրողների ուշադրությունը:

«Ստիպված եմ հեռանալ հյուրատնից. այստեղ չափազանց վտանգավոր է դառնում»:

Հրապարակեց իր բոլոր մտքերը. ինչ լսել էր, ինչ կանխատեսել էր: Կարեկցանքի խոսք ասաց Մայլեթբուի աջակիցներին և իր բոլոր Ֆեյսբուքյան հետևորդներին կոչ արեց դատապարտել հեղաշրջումը: Ստացվող հաղորդագրությունները շարունակում էին բազմապատկվել. բոլորը նրան խնդրում էին հոգալ իր համար: Ոմանք ևույնիսկ ճանապարհ էին ցույց տալիս դեպի մոտակա հյուպատոսարան, Խաղաղության կորպուսի գրասենյակներ կամ Միավորված ազգերի կազմակերպության փախստականների գործակալություն:

Երկրի բոլոր գլխավոր հեռուստաընկերությունները խնդրում էին ուղիղ հեռարձակում: Որոշեց հեռարձակում ապահովել ուրիշ հյուրատնից, որը փոքր-ինչ հեռու էր բողոքի ցույցերից. այդպես կարիք չէր լինի MP3 ձայնագրություններ միացնել: Ոստի խոսելիս հեռախոսը պահում էր պարզած ձեռքի հեռավորության վրա: Ստաճեց մոր մասին. հիմա հաստատ փետում էր մազերը: Երևի գնացել էր քրոջ տուն, մորաքրոջ աղջիկները ցույց էին տվել իր գրածները Facebook-ում, ու հիմա երևի աղի արտասուք էր թափում:

Սուրճի բաժակը կողքին՝ գլխավոր նկարը փոխարինեց Մալեկեբուի լուսանկարով: Մեկ ժամվա ընթացքում ֆեյսբուքյան ընկերների գրեթե կեսն արեց նույնը: Մտածեց հաջորդ քայլը: Լիոնգվեից հեռանալը չէր քննարկվում, քանի որ բոլոր ճանապարհները բարիկաղավորված էին, ու դա չափազանց վտանգավոր էր: Օդանավակայանը փակ էր, ուստի ինքնաթիռ նույնպես չէր կարող նստել: Տարբերակները երկուսն էին. կամ պատմությունն հորինել, թե իբր հյուրատան սեփականատերը ամենազնայն ծանոթ վարորդ ունի, որը կարող է գիշերը նրան տանել Չամբիա, կամ մնալ Լիոնգվեում: Բայց եթե մնար, ստիպված կլինեիր պատմությունն հորինել: Ավելի ճիշտ՝ շարունակել հորինելը: Ընտրեց վերջինը. միտքը ծնվեց մի հաղորդագրությունից, որն ինչ-որ մեկը թողել էր ֆեյսբուքյան պատին:

«Ձգուշացի՛ր գրածներիցդ: Դժվար թե ուզես, որ Կամվենդոյի մարդիկ ամեն ինչ իմանան քո մասին ու ձերբակալեն»:

Այդքանը: Որոշեց նույնպես դուրս գալ փողոց: Չէր ուզում վախկոտ լինել, ինչպես Սոֆին էր միշտ ասում, որ հավերժ ձեռքերը ծալած նստում է ու չի պայքարում հանուն գործի:

«Այսօր ես միանում եմ ցուցարարներին:

Մալավին չի վախենում, Կամվենդո»:

Օրվա մնացած մասը նվիրեց հաջորդ քայլը ծրագրելուն: YouTube-ի որոնումների պատուհանում գրեց «Ադմուկ՝ առանց ազդանշանի» և իր գտած հոլովակով ոչնչից MP3 ձայնագրեց, որը ոչ այլ ինչ էր, եթե ոչ տարօրինակ ֆշշոց: Եթե մեկնումեկը զանգի, մինչև վերջ կմիացնի բարձրախոսները, տեղում կպատասխանի հեռախոսին ու ամեն ինչ կանի, որ իրեն հասկանան: Առաքելությունը, ակնհայտորեն, անիրագործելի է, բայց գերազանց միջոց՝ շուրջը տիրող քաոսի վրա ուշադրություն հրավիրելու համար: Այդ ընթացքում սկսեց ծրագրել երեկոյան հաղորդումը: Ուզում էր ձևացնել, թե Կամվենդոյի ոստիկանության հարձակման ենթարկված խաղաղ ցուցարարների շարքերում է: Մյուսների հետ կոպ է տալիս արցունքաբեր գազն ու վախի ոչ մի նշույլ ցույց չի տալիս: Համացանցում արագ կարդաց արցունքաբեր գազի ազդեցությունների մասին և սովորեց՝ ինչպես շնչել հարձակման ժամանակ: Ուզում էր ամեն բան համեմել հերո-

սական արարքով: Ուստի ստեղծեց մի նոր կերպար՝ Յունո անունով փոքրիկ տղան: Մահճակալին պառկած, առաստաղին նայելով՝ սկսեց հորինել Յունոյի պատմությունը. նրա մայրը մահացել էր, հայրը՝ սպանվել նախօրեի անկարգությունների ընթացքում: Նրան նկատել էր ցույցի ժամանակ. երևում էր, որ շփոթված ու սոված է: Երբ մթնեց, տղան նրա հետևից գնաց ընդհուպ մինչև հյուրատուն: Հենց այդ պահին հասկացավ, որ Յունոն գնալու տեղ չունի: Ուստի իր մոտ տարավ:

«Ես ուզում եմ Մալավիի հաղթանակի մաս լինել»:

Պատմությունն այն մասին, թե Մարկն ինչպես է ապաստան տվել տղային, որի հայրը սպանվել էր, էլ ավելի բորբոքեց նրա վառած կրակը: Հիմա նույնիսկ օտարերկրյա լրագրողներն էին ուզում իմանալ նրա պատմությունը: Այդ երեկո խոսեց մի շարք լրատվամիջոցների, այդ թվում՝ The Washington-ի և La Repubblica-ի հետ: Արհամարհեց Լիլոնգվեում BBC-ի թղթակցին հանդիպելու խնդրանքը:

Մառնարանն արդեն դատարկ էր, ու սուպերմարկետի ճանապարհին նրան թվաց, թե իրեն հետևում են: Պարզ երևում էր. պատմությունը սկսել էր հաղթել նրան: Խանութի անցումներով սայլակն առաջ հրելով՝ հասկանում էր, որ Սոֆիի հեռանալուց հետո այսքան ուտելիք չէր գնել: Նույնիսկ կոկոսի փաթիլներով թխվածքաբլիթներ, սուֆլեներ էր գնել, որ սիրում էր ուտել մանկության տարիներին: Գնումների տոպրակները խոհանոցի սեղանին դատարկելով՝ նորից մտածեց Սոֆիի մասին: Հույս ուներ, որ հետևում է իր պատմությանն ու անհանգստանում իր համար: Ո՞վ գիտի: Գուցե այս ամենը նրան ստիպի հասկանալ, թե իրականում ինչքան է սիրում իրեն ու չի ուզում, որ նա ի վերջո թաղվի Աֆրիկայի սրտում:

- Այո, լսում եմ ձեզ,- պատասխանեց իր երկրի գլխավոր հեռուստակայանի լրագրողին ու շերտյան, երբ նրանք տևական ժամանակ կարծում էին, թե կապը կորել է:- Ինչպես ասում էի, Մալավին մշտապես եղել է մասնատված քաղաքական իրավիճակում՝ ունենալով բազմաթիվ քաղաքական կուսակցություններ: Այս երկիրը ծայրահեղ աղքատ է, ՄԻԱՎ-ով մարդկանց անհավանական բարձր ցուցանիշով, և իսկապես մեծ ցավ է, որ այսպես է քայքայվում: Այնուամենայնիվ, տեսարանները, որոնց ակա-

նատես ենք լինում փողոցներում, վկայում են այն մասին, որ այս ժողովուրդը երբեք չի հանձնվի: Եվ հենց այդ պատճառով էլ այսօր պարտավոր եմ միանալ բողոքի ցույցին, քանի որ այն, ինչ արեց Կամվենդոն, անգութ արարք էր: Միանգամայն անընդունելի: Աշխարհի երեսին յուրաքանչյուր մարդ արարած պետք է վիրավորված զգա այստեղ պատահածի համար: Յուրաքանչյուր ոք պետք է հնարավոր բոլոր միջոցներով օգնի, որ երկիրը չվերածվի հերթական դիկտատուրայի:

Մարդու վստահությամբ, որը երկու անգամ եղել է երկրում, ուստի իրապես հասկանում է, թե ինչ է խոսում, ցանկություն հայտնեց, որ ապագայում կհիշի այս օրերն ու կասի՝ ես այնտեղ եմ եղել: Միգուցե մենք էլ մի օր հետ նայենք ու հիշենք Մանդելայի ժամանակները Հարավային Աֆրիկայում, կամ Գանդիինը՝ Հնդկաստանում:

Լրագրողը նրան հարցրեց Յունոյի մասին, որն այդ պահին քնած էր: Մարկը պատասխանեց, որ ինչ էլ եղած լինի, հույս ունի, որ տղան կգտնի մեկին, որը հոգ կտանի իրեն: Երբ հարցրին, թե ինչպես է հանդիպել նրան, ասաց, որ հանդիպումը տարօրինակ էր: Յունոյի աչքերում տեսավ Սոֆիի՝ իր նախկին ընկերուհու աչքերը, որին շարունակ փնտրում էր իր տեսած բոլոր դեմքերի մեջ, նույնիսկ այս հեռավորությունից:

The Times -ի լրագրողը, որն իր կարիերան կառուցել էր սիրո, նորածնության և սեքսի մասին հոդվածներ գրելով, իսկ հետո հայտնվել լուրերի բաժնում, շուտով ֆեյսբուքյան նամակ ուղարկեց նրան՝ մանրամասն հարցնելով Սոֆիի մասին: Առանց երկար-բարակ մտածելու՝ ամեն ինչ պատմեց նրա մասին, այդ թվում և ազգանունն ու քաղաքը, որտեղ ապրում էր:

Երրորդ օրն անկարգությունները շարունակվում էին: Չնայած Լիլոնգվե տանող ճանապարհները պետք է որ փակ լինեին, պարզվեց, որ բաց են նրանց համար, ովքեր ցանկանում են, որ քառսը շարունակվի: Թաղաք մտան ավելի մեծ թվով ապստամբներ, հաշված ժամերի ընթացքում լուր տարածվեց, որ երեք եվրոպացի լրագրողներ, որոնք գրում էին Կամվենդոյի դեմ (երկու ֆրանսիացի Le Monde-ից և Liberation-ից և մի անգլիացի՝ The Guardian -ից) առևանգվել են:

Հորդորները Մարկին, որ հոգ տանի իր համար, շարունակում էին կուտակվել ֆեյսբուքյան էջում: Բայց նրա ծրագիրն արդեն որոշված էր: Մարկն ուզում էր, որ իրեն առևանգեն, և որ առևվազն հինգ օր անցկացնի կատարյալ լուռության մեջ: Հետո ինչ-որ կերպ փախուստի կղիմի (թե կոնկրետ ինչպես, պետք էր մտածել) ու կմիանա համացանցին, որ բոլորին տեղյակ պահի՝ անցել է տառապանքներով, բայց հիմա ապահով է, վերադառնում է Եվրոպա: Եթե մեկնումեկը հարցնի, թե ուր է պատրաստվում մեկնելու, ուղղակի չի պատասխանի: Ամսաթիվ ու ժամ նշելու անհրաժեշտություն չկա: Երկու օր անց կթարմացնի ֆեյսբուքյան էջը՝ գրելով, որ վերադարձել է տուն ու վերականգնում է ուժերը ծանր փորձությունից հետո:

«Այսօր գլխիս եմ գցելու Մալավիի դրոշը. ծագող արևն Աֆրիկա մայրցամաքում հույսի ու ազատության խորհրդանիշն է, սևը՝ մայրցամաքի բևեռի ժողովրդի, կարմիրը՝ պայքարի արյան»:

Յունոյի հետ հեռացավ հյուրատնից, որ միանա ցուցարարներին, ու ինչպես սպասվում էր, չվերադարձավ: Անցավ մի օր... երկու... երեք... Նոր հաղորդագրություններն ամեն վայրկյանը մեկ հայտնվում էին նրա ֆեյսբուքյան էջում: Երկիրն ուրիշ ոչինչ չէր քննարկում: Նույնիսկ երբ այդ հարցի հետ կապ չունեցող մամլո ասուլիսում վարչապետին հարցրին, ստիպված ասաց, որ բարձրաստիճան պաշտոնյաները հնարավոր ամեն բան անում են՝ Լիլոնգվեում երիտասարդին գտնելու ուղղությամբ: Ընդդիմության առաջնորդը մի քայլ առաջ գնաց՝ մի փունջ կակաչ տանելով Մարկի մայրիկին:

Մարկի անհետացման չորրորդ օրը և Մալավիում համացանցի ու շարժական ցանցերի արգելափակումից մեկ օր անց անկարգությունները դադարեցին: Միավորված ազգերի կազմակերպության ղեկավարած միջազգային առաքելությունը մտավ երկիր՝ վերահսկողություն սահմանելու, Մալեկեբուի կուսակցությունն ընտրեց նոր պաշտոնյաների, այդ թվում՝ բազմաթիվ երիտասարդների, նշանակվեց համապետական ընտրությունների օրը:

Եվ հենց այն ժամանակ, երբ Մարկը պատրաստվում էր հայտարարելու ապստամբների ճամբարից իր փախուստի մասին, որտեղ նրան պա-

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

հել էին երեք օր, իսկ այդ օրերը ևս երբեք չէր մոռանա, շենքի առաջ կանգ-
նեց քաղաքի գլխավոր թերթի տարբերանշանով փոքրիկ ֆուրգոնը:

- Այ՛ նրա պատուհանը,- ասաց Սոֆին վարորդին իր անզուգական
առոզանությամբ: -Տեսնո՞ւմ եք, վարագույրի հետևում լույս է վառվում:
Ասում էի, չէ՞: Ես նրան շատ լավ եմ ճանաչում: Չորս տարի անընդմեջ
պատմություններ էր հորինում: Չէի գանգի ձեզ, եթե չհիշատակեր անունս:
Իրականում հիմարություն է արել: Եթե ևս էլ ինձ այնքան լավ ճանաչեր,
որքան ես՝ իրեն, կկռահեր, որ մտքովս առաջին հերթին հենց դա կանցնի:

ՕՏԱՐՈՒՀԻՆ

II-barranija

Ձվարճալի Է. ի՛նչ արագ կարող է փոխվել կյանքը: Մի պահ վերևում ես, վատահ, որ ոչինչ քեզ չի իջեցնի, բոլորը շողոքորթում են, օրվա գրաֆիկը լեփ-լեցուն է հանդիպումներով, իսկ հաջորդ պահին հանկարծ հայտնվում ես ինչ-որ կույտի տակ, պատի հետևում թաքնված մողեսի պես, որը վախենում է դուրս գալ անցքից: Հենց դա է պատճառը, որ երբ լսեց՝ փոստատարն ինչ-որ բան գցեց փոստարկղը, անհանգիստ քայլեց այդ կողմը, ինչպես տարօրինակ առարկայի ուղղությամբ լողացող ձուկ: Վերցրեց ծրարն ու վրան տեսավ թեմի հայտնի լոգոտիպը: Ծրարի մեջ եպիսկոպոսից նամակ էր: Լավ, թեև խիզախություն չէր ունեցել այցի գալու իրեն, համենայն դեպս պարկեշտություն էր ունեցել նամակ ուղարկել:

Սիրելի՛ մոնսիյոր

Հույս ունեի այցի գալ Ձեր տուն և անձամբ խոսել Ձեզ հետ...

Կինը զգվել էր քաղաքային կյանքից. մշտական աղմուկ ու խելագարություն, խցանումներ, անպիտան առարկաների անվերջ գնում և տառացիորեն ամեն ինչի համար անհրաժեշտ ծավալուն թղթաբանություն: Ահա թե ինչու այնքան ուզում էր տեղափոխվել ավելի խաղաղ մի վայր, հեռու ընկերներից, որոնց տարիքից, անկեղծ ասած, դուրս էր եկել: Այնքան էր հոգնել քաղաքից, որ ժամանակ առ ժամանակ թվում էր՝ էլի մի քիչ, ու կգժվի: Վերջերս սկսել էր ժամանակն անցկացնել իր բնակարանում, ինչ-որ բանի անթարթ նայելով: Պատշգամբից ոչ թե դուրս էր նայում, այլ ներս՝ դատարկ պատին: Թվում էր՝ լույսը չափազանց պայծառ է, ձայ-

ները՝ չափազանց բարձր, իսկ դեմքի մկաններն ուժասպառ են եղել հարկադրված ժպիտից: Բժիշկը դեղահաբեր էր նշանակել, բայց իրականում նա փախուստի կարիք ուներ: Սկսել էր երազել մի վայրի մասին, որտեղ ոչ ոք չէր ճանաչում իրեն, որտեղ կարող էր ազատվել ամեն շաբաթ կազմակերպվող հասարակական հավաքներից. առանց դրանց էլ կապրեր: Հեռու բոլոր կեղծ ժպիտներից, բոլոր դատարկ խոսակցություններից, մի վայր, որտեղ վերջապես կազատվեր գլուխը պատին խփելու մշտական ցանկությունից:

Տեսչում էր արև, կյանքի դանդաղ ուժը, մոտակայքում՝ ծով, այգում՝ գրիլի վրա թշաջող ձկան հոտ, սպիտակ գինի և խոհանոցի բարձրախոսներից սահող ջազի հնչյուններ: Ուզում էր շրջապատված լինել մարդկանցով, որոնց չէր ճանաչում ու ճանաչելու պատճառ չուներ: Բայց նաև հույս ուներ, որ քաղաքավարի կլինեն, ու հեշտ կլինի լեզու գտնել նրանց հետ, համենայն դեպս առօրյա կյանքին վերաբերող հարցերում: Ամիսներ շարունակ փնտրտուքի մեջ էր: Մալագայում և Գրանադայում վաճառվող տներ այցելեց, բայց որը դուր էր գալիս, չափազանց թանկ էր: Մի տուն գտավ Յեֆալուում, որը, գրոհը տանի, քթի տակից թոցրեց այն նույն նոտարը, որը պետք է գործարք կնքեր իր համար: Կտրեց անցավ Ֆրանսիական Ռիվիերան՝ փնտրելով իր երազանքի տունը, բայց այդպես էլ չգտավ մի վայր, որ դուր կգար և կտեղավորվեր բյուջեի շրջանակում: Հետո, երբ արձակուրդում էր, ու միտքը զբաղված չէր տան փնտրտուքով, գտավ:

Փոքրիկ գյուղ էր, կղզում, ամառային պարզ գիշերներին հեռվից երևում էր Սիցիլիան. համենայն դեպս այդպես էին ասում: Ավտոբուսով տեղ հասավ, ու գյուղն անմիջապես ձգեց նրան: Հիշեցրեց երիտասարդ տարիներին լսած վայրերի մասին, որտեղ ամեն ինչ փոքր էր ու հանդարտ, ու կյանքը պտտվում էր պատիկ եկեղեցու շուրջը, որը միշտ քաղաքի կենտրոնում է, զանգերի հրաշալի զրնգոցով: Մինչդեռ, ի տարբերություն այդ պատմությունների գյուղերի, այս մեկը ծովից ընդամենը հինգ րոպեի հեռավորության վրա էր: Այս գյուղի մարդիկ զբոսնելիս ժպտում էին, իսկ եղանակը կլոր տարի մեղմ էր: Փոքրիկ տուն կար՝ եկեղեցուց երկու փողոց այն կողմ, պատշգամբից մեծ ցուցանակ էր կախված. «ՎԱՃԱՌՎՈՒՄ Է»:

Չանգեց գործակալին, մի քանի օրվա ընթացքում պայմանագիր կնքեց, մեկ տարի անց տեղափոխվեց:

Սի բան չգիտեր. նոր հարևանը ոչ այլ ոք էր, եթե կղզու եպիսկոպոսը, որն ամբողջ տարին պաշտոնական կեցավայրում ապրելու փոխարեն, ինչպես ակնկալում էք, նախընտրում էր ամառներն անցկացնել ծնողների թողած գողտրիկ տանը, այն տանը, որտեղ մեծացել էր: Իսկ ամառները, անշուշտ, այս կղզում շատ երկար էին տևում:

Եպիսկոպոսի կյանքի մեծագույն հաճույքներից մեկն այգում սիեստան վայելելն էր: Հարմար տեղավորվում էր սովերում, բազկաթոռի մեջ, թերթում The Times-ի կամ ծիսագրքի էջերը, միևնույն աչքերը ծանրանում էին, քունը տանում էր: Այդտեղ, նայելով եկեղեցու զմբեթին, իրեն ավելի շատ թագավոր էր զգում, քան եպիսկոպոս: Բազկաթոռի մեջ մարմնով մեկ ձգվելով՝ զգում էր, թե երախտագիտության անկեղծ աղոթքն ինչպես է բարձրանում հոգու խորքից. արտաբերում էր այն՝ աչքերն անթարթ գամած զմբեթին: Ստովի տեսնում էր եկեղեցու պատերը զարդարող կտավները: Այդպիսի պահերին զգում էր, որ ոչինչ չի ուզում: Ամեն ինչ իր ճիշտ տեղում էր: Նա հարգված ու սիրված էր: Առողջ էր ու երջանիկ: Եպիսկոպոս էր մի թեմում, որտեղ ընդամենը մանր-մունր խնդիրներ կային, դրանք էլ որևէ կապ չունեին հավատի հետ: Իմաստուն էր և կարող էր երկար խոսել աշխարհի ցանկացած թեմայի շուրջ: Եվ բամբասանքներ տարածվեցին, թե հենց նա է լինելու նոր արքեպիսկոպոսը: Թեպետ պաշտոնի բարձրացման հեռանկարը երբեք չէր քննարկել ո՛չ հանրության, ո՛չ օգնական եպիսկոպոսի հետ, բազկաթոռի մեջ միայնակ պառկած, հաճախ էր մտորում գաղափարի շուրջ, վերուվար անում փուչիկի հետևից վազող երեխայի պես: Ու հենց սկսում էր ծուլորեն նիրհել, մտքում ծնվում էր ևս մի գայթակղիչ հեռանկար: Նրա երկիրն աշխարհի այն սակավաթիվ երկրներից էր, որը երբեք կարողնալ չէր ունեցել: Իսկ եթե վիճակված էր ունենալ, ինչո՞ւ չէր կարող հենց ինքը լինել: Եվ քնով էր անցնում նույն վայրկյանին, երբ իրեն պատկերացնում էր Սիքստինյան կապելլա մտնելիս՝ կարմիր թասա-

կով, առիթին համապատասխան հանդիսավոր տեսքով, շրջապատված երկրագնդի տարբեր անկյուններից ժամանած բոլոր ռասաների կարող-նալներով. բոլորն էլ Սուրբ հոգով լուսավորված, եկել էին՝ իրենց շարքից Պետրոսի ժառանգորդ ընտրելու: Իրենց շարքից: Ուրեմն հնարավոր է՝ շուտով ինքն էլ կարմիր թիկնոցը փոխարինի սպիտակով:

Բայց երբ հարևան տունը վաճառեցին մի օտարուհու, ամեն ինչ փոխվեց. իր տանն առանձնացած, որը, փողոցի ուրիշ տների պես, հետևաբար ուներ, ևս սիրում էր կիսամերկ շրջել: Միկիելն առաջինը նկատեց, երբ տանիքի աղավնիներին կերակրելիս տեսավ սոր հարևանուհուն, այգում, հագին՝ վարտիքից բացի, ոչինչ: Դունչը կախվեց: Երբեք կնոջ կուրծք չէր տեսել, բացի Թեսսիի կրծքից, իսկ Թեսսիի կուրծքն ամենևին գեղեցիկ չէր: Չափազանց փարթամ ու վավաշոտ: Շուտով նրա երեխաներն իմացան այդ մասին ու, բնականաբար, պատմեցին իրենց բոլոր ընկերներին: Մի քանի շաբաթ անց փոստատարի հերթը հասավ: Թակեց դուռը, որ պատվիրած նամակ հանձնի նոտարից, և կինը բացեց դուռը՝ մարմինը սրբիչով փաթաթած, իմիջիայոց, ասես փոստատարն իր քույրն էր, որը մտնում էր սենյակ:

Լուրն արագ հասավ եպիսկոպոսին, և ևս (ավելի շատ որպես հարևան, քան եպիսկոպոս) իր պարտքը համարեց գնալ և ստուգել: Մի փոքրիկ գիրք վերցրեց գրադարանից՝ Ֆուլթոն Շինի պատմվածքների ժողովածուն, որից ևս երեք օրինակ ուներ, և գնաց՝ հանձնելու, գյուղ և իր թեմ նրա գալուստը ողջունելու: Բայց երբ գնալը տվեց ու ևայեց ապակեպատ դռան միջով, տեսավ կնոջը նախասրահի վերջում, այգուց ներս մտնելիս, լրիվ մերկ: Հայացքը գամվեց կրծքին: Աստված իմ: Ուռքերը դողացին, ու քանի դեռ մտքերի մեջ էր՝ հեռանա, թե ոչ, տեսավ, որ կինը, սրբիչը մարմնին փաթաթած, մոտեցավ ու արագ բացեց դուռը: Զգալով, որ թույլ է ու հագիվ է խոսում՝ ներկայացավ, «բարի գալուստ» ասաց, գիրքը տվեց ու հեռացավ: Բայց երբ արդեն տանն էր, հայացքը սուրճի բաժակին գամած, փրփրեց: Կինն իրեն նեղություն չտվեց գունե ներողություն խնդրելու, որ այդ տեսքով է դիմավորում իրեն: Ինչպիսի՜ մեծամտություն: Ինչպիսի՜ անհարգալից վերաբերմունք քեզ հյուրընկալված երկրի հանդեպ: Համայնքի, որ դռներն է բացել ու ընդունել քեզ:

Իրավիճակն է՛լ ավելի բարդացավ հաջորդ օրը, երբ այգում, դարձյալ բազկաթոռի մեջ պառկած ու հայացքը գմբեթին գամած՝ հանկարծ հասկացավ, որ չի դադարում մտածել նրա մասին: Չէր կարողանում մտքից հանել այն, որ մի քանի մետր հեռու, ոչ շատ բարձր պատից այն կողմ մի կին, որի կրծքի պատճառով իր ոտքերը թուլացել էին, մերկ քայլում էր ծառերի արանքում, ինչպես Եվան՝ մեղքից առաջ: Որքան շատ էր փորձում իրենից վանել անմաքուր մտքերը, այնքան ավելի ամուր էին կառչում: Մի պահ սկսեց պատկերացնել, որ իրենց այգիներն անջատող պատ չկա, և կինը կարող է մտնել ուղիղ իր այգի: Պատկերացրեց, թե ինչպես է քաղում այգու խնձորները, հիանում կիտրոններով, շնչում երկարոտն շուշանների քաղցր բույրը ու մեջքը քնքշորեն հենում բուզինսվիլներին, որոնցով ծածկված էր այգու պատը: Փակեց աչքերն ու ակնածանքով խաչակնքեց, ինչպես սովորեցրել էին դպրոցում՝ սատանային դռան տեղը ցույց տալու համար:

Նույն անհաղթահարելի մտքերը վերադարձան քնելուց առաջ: Կնոջ պատկերներն այնպիսի հստակությամբ սկսեցին հեղեղել միտքը, որ երբեք չէր եղել: Ննջասենյակի մթության մեջ պատմությունն հյուսեց նրա մասին: Գուցե հեռացել է ամուսնուց, փախել հայրենիքից ու ապաստան գտել այս գյուղում: Կամ ամուսինն է տևից վռնդել: Մի՞թե կարելի է մեղադրել նրան: Ինչ էլ որ եղած լինի, եթե կարծում է, որ կարող է իրեն այդպես պահել, չարաչար սխալվում է: Համայնքը պետք է աչքերը չորս անի: Ինչպե՞ս կարելի է այդ տեսքով ներկայանալ մարդկանց: Տրոյական ծիե՛ր:

Մի քանի օր սպասեց, հետո որոշեց գրուցել նրա հետ ու բացատրել, որ այն, ինչ արտասահմանում սովորական երևույթ է, ընդունելի չէ իր կղզում: Մտածում էր շաբաթվա վերջին այցելել նրան, բայց հաջորդ օրը, երեկոյան, տուն վերադառնալիս կնոջ տան դիմաց մի խումբ երեխաներ տեսավ: Մեկը նայում էր փոստարկղի ճեղքով, մյուսը փորձում էր անհևարիկը տեսնել բանալու անցքից, իսկ ևս երեքը դեմքերը սեղմել էին պատուհանի ապակուն: Ո՛չ: Այլևս չի կարելի հետածգել: Ձեռքով նշան արեց երեխաներին, որ հեռանան, դռան գանգը տվեց, ու շուտով կինը ներս թողեց նրան. թեթև, սպիտակ վուշից զգեստով էր, կոճակների կեսն արձակած, դեմքն արևի տակ մի քանի ժամ մնալուց կարմրած: Եպիսկոպոսը հևա-

րավորինս մեղմ ծայրով ասաց, որ լսել է հարևանների խոսակցությունները, թե նրան տեսել են այգում, մերկ: Բացատրեց, որ հասկանում է՝ ուրիշ երկրներում ամեն ինչ այլ է, բայց հիմա պետք է անցյալում թողնի հին սովորությունները: Եթե իր թեմում բոլորն իրենց պահեն այնպես, ինչպես արտասահմանում, կղզին շուտով կվերածվի հասարակաց տան: Կինը չհավատաց ականջներին, հետո բերանից թոցրեց իր լեզվով որոշ արտահայտություններ, որոնք եպիսկոպոսը չհասկացավ, բացեց դուռը, որ նա դուրս գա, ու հենց դուրս եկավ, շրխկոցով փակեց: Հաջորդ օրը թերթեց «Դեղին էջերը», և մի քանի ժամից նրա այգում այգեպան հայտնվեց:

- Իրականում մեծ խնդիր չէ,- ասաց այգեպանը, երբ հասկացավ, թե ինչ էր ուզում կինը:- Ձեզ պետք է ընդամենը վեց կոճի այլտեղ, վեցս էլ՝ այստեղ: Շուտով կաճեն ու կբարձրանան: Ճիշտն ասած, տնկարանում հրաշալի բարձր ծառեր ունենք: Բայց ավելի թանկ են:

Պայմանավորվեցին, որ այգեպանը մի քանի բարձր ծառ կտնկի, որոնք կաճեն ու ավելի կբարձրանան առաջիկա մի քանի շաբաթներին: Կարճ ժամանակում այգին լցվեց տասնյակ ծառերով, բարձրուղեշ ու բարալիկ, ինչպես հսկայական լուցկու հատիկներ, որոնց արանքից ոչ մի հարևան ոչ մի դեպքում չէր տեսնի նրան: Սակայն կինը չէր հասկանում, որ հինգ-վեց ծառի պատճառով իրեն հանդիմանելու եկած հարևանն այլևս չի տեսնի գմբեթի տեսարանը: Հիմա եպիսկոպոսի օրվա ամենաանգին ժամերն ամենահիասթափեցնողն էին: Մի չար կին անկոչ հյուրի պես հեռուներից եկել ու փակել էր տեսադաշտը, որն այնքան՝ ոյութել էր իր մորն ու կնոջ հորը, և վերջինս, ի պատիվ նրա, այնպիսի անկյան տակ էր տնկել այգին, որ հևարավոր լիներ վայելել տեսարանը: Նա ուղղակի ի վիճակի չէր հաշտվել այսպիսի շրջադարձի հետ և խելագարության էր հասնում, ու ամեն անցնող օրվա հետ վիճակը վատանում էր: Պետք էր ինչ-որ կերպ ազատվել ծառերից ու ցույց տալ կնոջը, որ նա չի կարող անել այն, ինչ իրեն դուր է գալիս, և որ կան նաև ուրիշ մարդիկ, որոնք ավելի վաղուց են բնակվում գյուղում: Մի օր, մեքենայի մեջ, երբ վերադառնում էին հարևան ծխում կազմակերպված երիտասարդական աղոթահավաքից, օգնական եպիսկոպոսին իմիջիայլոց հարցրեց ծառ ոչնչացնելու հևարավոր ձևերի

մասին: Հասկանում էր, որ տարվել է մտքով, բայց որքան էլ բազկաթռոժի մեջ նստած, հարմարավետ ու ապահով դիրքից ջանում էր համոզել իրեն, որ, այնուամենայնիվ, կարող է վայելել գեղեցիկ տեսարանը, ներսի գայրույթը ոչ մի կերպ չէր ցրվում: Անշուշտ, մի քիչ մխիթարում էր այն, որ կորած տեսարանը հարևաններին պաշտպանում էր կեղտոտ մտքերից: Հասկանում էր նաև իր խնդրի հարաբերական անկարևորությունը՝ համեմատած Եթովպիայի և Գվատեմալայի խեղճ սովյալ հոգիների հետ: Օտարուհին ոչ միայն համառորեն ցուցադրում էր իր մերկությունը, այլև նրան հաջողվել էր ոչնչացնել տան ամենագեղեցիկ առանձնահատկությունը, տան, որտեղ մեծացել էր. անկեղձ ասած, եթե չլիներ եկեղեցու տեսարանը, հավանաբար չէր խախտի կանոններն ու ամառները չէր անցկացնի այս տանը: Եվ իր պապն էլ սեփական գրպանից չէր վճարի գմբեթի կառուցման ծախսերի կեսը: Ախր ինչպե՞ս: Մի՞թե էլ չի լսելու զանգերի հանդարտեցնող ձայնը, որ հնչում էր յուրաքանչյուր ժամը մեկ: Մի՞թե վերջին անգամ է խոհանոցի պատուհանից հետևում, թե գմբեթն ինչպես են զարդարում տոնական լուսաշղթաներով: Ինչպե՞ս կարող էր պատահել: Այդ գմբեթի ստվերի տակ էր մեծացել, ու մտքով երբեք չէր անցել, որ կգա մի օր, երբ այլևս չի տեսնի:

Չայրույթը վերածվեց կատաղության, երբ վրա հասավ գյուղի տոնը: Գմբեթը լուսավորված էր հարյուրավոր գունավոր լույսերով, իսկ նա ոչինչ չէր տեսնում: Տոնակատարության առաջին օրը, երբ արձանը հանդիսավոր կերպով հանեցին որմնախորշից, փրփրած վերադարձավ տուն: Այնքան անարդար էր, որ մի օտարուհի կարող էր ուղղակի հայտնվել ու փոշիացնել մշտապես այդտեղ ապրողների ամբողջ կյանքի հաճույթը: Ավելի ուշ, անկողնում, ոչ մի կերպ չէր կարողանում ազատվել այդ մտքից, ու երբ վերջապես քնով անցավ, երազ տեսավ. արթնացել է գիշերվա կեսին, որպեսզի ցույց տա կնոջը, թե այստեղ ով է դեկավարը: Երազում գնացել էր կնոջ տուն, եպիսկոպոսի զավազանով ջարդել դուռն ու մտնել նրա ննջարան: Կինը սարսափած արթնացել էր ու աղաչել, որ ինչ ուզում է անի, միայն թե չվնասի: Լսելով նրա խոսքերը՝ «միայն թե չվնասես», կյանքում առաջին անգամ մարմնով դող անցավ: Կինը չարաճճի փոքրիկ փիսիկ էր հիշեցնում՝ դաժան վագրին դեմ հանդիման: Հետո ժպտաց՝ կծելով ներքևի

շրթունքը, ու սկսեց հանել սպիտակ սավանը, որով ծածկել էր մեծ կուրծքը, որը եպիսկոպոսը տեսել էր, երբ գնացել էր՝ Ֆուկոն Շիկի գիրքը տալու: Անհնար էր սպասել: Թռավ նրա վրա՝ գավազանն ու մնացյալը ձեռքին: Ու հիմա, նրա հետ համընթաց շարժվելով, թվում էր, թե ափին գետաքարերի հետ խաղացող ալիք է: Պարանոցից կախած խաչելությունը քսվում էր կնոջ մաշկին, ու ամեն ցնցման հետ նրա դեմքին ժպիտ, իսկ մեջքին քերձվածք էր հայտնվում: Հետո բարձր թրմփոց լսեց. մտածեց՝ գավազանն է ընկել մահճակալից: Սարսափահար արթնացավ ու հայտնաբերեց, որ քրտինքի մեջ կորած է, կանգնած Աստվածամոր պատկերի առաջ: Չնայած սենյակը. հավատը չէր գալիս, թե ինչ էր արել: Հետո դարձավ մահճակալի կողքից կախած խաչին ու աղոթքով ներում հայցեց: Չէ, նոր հարևանը կին չէր, այլ տանջող դև, որ եկել էր իրեն գայթակղելու: Դողալով իջավ առաջին հարկ՝ մի բաժակ ջուր խմելու, ու լցնելիս գլխում միտք ծագեց: Հաջորդ օրն անհրաժեշտ ամեն բան գնեց և այդ գիշեր իրականացրեց ծրագիրը:

Սանդուղքը հենեց այգու պատին, գաղտագողի բարձրացավ՝ ձեռքին թթվուտի ամանը: Երբ հասավ վերջին աստիճանին, ձեռքն այգու պատին հենած, բացեց ամանն ու դատարկեց ծառերից մեկի վրա: Վեց անգամ կրկնեց նույն գործողությունը, մինչև հասավ այգու հեռավոր ծայրը՝ վերջին ծառին: Հետո իջավ, խաչակնքվեց ու վերադարձավ ննջարան, որտեղ անցկացրեց գիշերվա մնացած մասը՝ պայքարելով մերկ կնոջ մասին մտքերի դեմ. մարմինն այրվում էր մի քանի ժամ արևի տակ անցկացնելուց հետո:

Հաջորդ օրը, վերադառնալով այգի, սկսեց մտածել, թե գուցե այնքան քիչ թթվուտ է օգտագործել, որ ոչ մի ազդեցություն չի թողել: Երևի մի քանի տերև է սպանել, ոչ ավելին: Նյութը դժվար թե հասած լինի արմատներին: Թեմայի շուրջ ծանոթներին հարցուփորձ անելով ու մի քիչ կարողալով իմացավ, որ միայն խտացված, ազոտային հիմքով պարարտանյութը կարող է ծառ ոչնչացնել: Բայց նույնիսկ այդ դեպքում ծառը պետք է թաց լիներ, իսկ գործողությունը պետք է կատարվեր արևի տակ: Այդ դեպքում ծառը կմեռներ մեկ շաբաթում: Բայց ինչպե՞ս կազմակերպեր: Խոսեց ընկերոջ հետ, պատմություն հորինեց ինչ-որ հորեղբոր, թե մորեղբոր որդու մասին, թե իբր նա ուզում էր ոչնչացնել ծառը, որը խանգարում է բակի սալիկներին,

և չի ուզում, որ իր բնասեր կինն իմանա այդ մասին: Ընկերն առաջարկեց խոշոր պղնձե մեխեր խփել ծառի մեջ:

- Ինչքա՞ն ժամանակ է պետք, որ ծառը մեռնի:
- Կմեռնի աստիճանաբար, մեկ-երկու տարում:

Մեկ-երկու տարի՞: Ծաղրո՞ւմ է, ինչ է: Ուզում էր այգուց ավելի շուտ տեսնել գմբեթը: Որոշեց, որ առանց ծրագիրը բացահայտելու կգրուցի իր օգնականի հետ, որը մի քանի բան գիտեր ծառերի մասին. ազարակատների ընտանիքից էր:

- Ծառարմատների մեծագույն թշնամին աղև է,- ասաց օգնականը:- Եթե, օրինակ, արմատների շուրջը փոս փորես ու լցնես աղով, ծառը կմեռնի: Եվ բավական արագ, եթե շատ ծեր չէ:

Հագիվ էր ավարտել խոսքը, երբ եպիսկոպոսը սկսեց պատկերացնել, թե ծառն ինչպես է ամեն օր մի քիչ մեռնում, ճյուղերը դանդաղ պակասում են՝ աստիճանաբար մերկացնելով գեղեցիկ գմբեթի տեսարանը: Այո՛: Սա է որ կա: Կսպանի բոլոր ծառերը: Հետ կբերի հին տեսարանը, և թող այդ անդուր օտարուհին իմանա, որ Աստված գոյություն ունի: Բայց ինչպե՞ս գուլի բերի գործը: Ստաճեց, մտաճեց, ևսյնիսկ մի պարկ աղ գնեց, բայց կյարդերը տեղի տվեցին: Մի անգամ էլ հարևանի մասին գրուցեց օգնականի հետ, ասաց, թե ինչ սպառնալիք է ևս գյուղի համար, որը սովոր չէր այսպիսի սկանդալային պահվածքի: Օգնականը, որ ավելի երիտասարդ էր ու խոսում էր մի քանի լեզվով, խոստացավ անձամբ գնալ ու գրուցել նրա հետ: Բայց ևս տանը չէր: Չորրորդ փորձից հետո եպիսկոպոսին հայտնեց, որ կհեր հավանաբար մեկնել է արձակուրդի:

- Նույնիսկ պատուհանափեղկերն են ամուր գոցված:

Սա է որ կա: Եպիսկոպոսը հասկացավ, որ պահը եկել է: Այդ երեկո, ծերատանը խնջույքից հետո, որտեղ չափից շատ էր խմել, զգաց, որ պատրաստ է իրականացնելու ծրագիրը: Դուրս բերեց սանդուղքն ու որոշեց բարձրանալ օտարուհու այգին:

Չնայած միանգամայն վստահ էր, որ կհեր մեկնել է, փորձեց ծպտուն չհանել: Աչքերն ու ականջները սրած, որ որսա տնից եկող ամենաաղոտ լույսը կամ ամենացածր ձայնը, աղոթք հղեց Տիրամորն ու բարձրացավ

այնքան, մինչև ոտքերը լայն դրած նստեց այգու պատին. մի ոտքը կախեց իր, մյուս ոտքը՝ կնոջ այգու վրա, ու դանդաղ բարձրացրեց սանդուղքը, ապա իջեցրեց պատի մյուս կողմից: Թռավ ցած, վերցրեց աղի տոպրակներով լեփ-լեցուն ուսապարկն ու փոքրիկ ձեփաբահիկը, մի զույգ բաց վարդագույն խոհանոցային ձեռնոց հագավ, որ իր աղախինն էր կրում տունը մաքրելիս, ու գործի անցավ: Հողը փափուկ էր, փորելը՝ հեշտ. կարճ ժամանակ չանցած՝ դատարկել էր բերած ամբողջ աղը: Բայց հենց ավարտեց ու պատրաստվում էր դուրս գալու այգուց, լույսերը վառվեցին: Ցատկեց, շրջվեց ու տեսավ կնոջը. կիսամերկ, ընդամենը մի քանի մետրի վրա:

- Չշարժվես, գրո՛ղը քեզ տանի,- բղավեց նա՝ մեծ դանակը ձեռքին: Հետո ինչ-որ բան նետեց, որ եպիսկոպոսը բնագոյաբար բռնեց: Ու երբ հասկացավ, որ ձեռքերում երկար ոսկե շղթա է, լսեց մոտեցող ոստիկանական մեքենայի ազդանշանը: - Ես քեզ տեսա՛,- ասաց՝ դանակը ձեռքում ամուր պահած, ճարպկորեն մի ոտքից մյուսը ցատկելով, ասես սումոյի ծես էր կատարում: - Տեսա՛,- ու սկսեց ճչալ: - Տեսա՛ քեզ: Նախ ծառերս ես ոչնչացնում, հետո թանկարժեք իրերս գողանում: Ամո՛ր՝ քեզ, *eveque de merde*: Ամո՛ր:

Նամակը ձեռքին՝ քայլեց դեպի ննջասենյակ: Նստեց մահճակալին ու սկսեց նորից կարդալ, ամենավերևից:

Սիրելի՛ մոնսիեյոր

Հույս ունեի՝ այցի գալ Ձեր տուն և անձամբ խոսել Ձեզ հետ իմ անսպասելի ձուլումից հետո: Սակայն այս պահին, և Դուք, անկասկած, գիտեք այդ մասին, ամեն ինչ դեռ նոր է, ամեն օրը լի է բազում հանդիպումներով, և ես ոչ մի կերպ ժամանակ չեմ գտնում:

Աջքերն արագ սահեցին ցած՝ ստորագրությանը. ավելի բարդ էր, քան այն ժամանակ, երբ ուղարկողը դեռ իր օգնականն էր: Ծալեց նամակը, դրեց մահճակալի կողքին՝ սեղանիկին, ու առավոտյան արթնանալուց հետո չորրորդ անգամ փորձեց նորից քնել:

ՌՈՒԲԻԿԻ ԽՈՐԱՆԱՐԴՈՎ ԱՊՋԻԿՆ

Il-kubu ta' Rubik

Առաջին բանը, որ ապշեցրեց ինձ, երբ ներս մտա, մաքրությունն էր: Մաքրությունը երևում էր շողշողուն սպիտակ սալիկներից, որոնց մեջ արտացոլված էին առաստաղը պահող սև հեծանները, որից վեր Աստված գիտի՝ քանի սենյակ կար, և քանի մարդ էր ապրում սենյակներում: Հետո տեսա երկու շարքով կոկիկ դասավորված պլաստմասսայե սեղանները, որ ասես ուսանողական նստարաններ լինեին՝ քննության օրը: Ու երբ քայլերս ուղղեցի դեպի իմ ընտրած սեղանը (դռան մոտ ինձ ոչ ոք չդիմավորեց, իսկ մարդուն մինչև սեղան ուղեկցելու ավանդույթը դեռ չէր հասել քաղաք), նկատեցի պատին փակցրած թերթերի առաջին էջերը: Ամփջապես ենթադրեցի, որ երկրի պատմության կամ գոնե ռեստորանի սեփականատիրոջ համար կարևոր օրերի մասին է: Բոլոր էջերը շրջանակված էին սևով, ինչպես սեղանի ոտքերն ու աթոռները, իսկ մեկին, որի տակ նստած էի, անհասկանալի հսկայական գլխագիր էր և կիսաքանդ շինության լուսանկար, որի շուրջը կանգնած էին, հավանաբար, այնտեղ բնակվող մարդիկ: Այդ պահին էլ տեսա նրան:

Նստած էր անկյունի սեղանի առաջ, խաղում էր Ռուբիկի խորանարդով, որով կարծես նրանից առաջ բազմաթիվ մարդիկ էին խաղացել. համենայն դեպս հեռվից կարելի էր այդպես ենթադրել: Նկատեց, որ նայում եմ իրեն, ու հայացքս արագ տեղափոխեցի ուրիշ սեղան, որտեղ երկու տղամարդ ծամում էին հացն ու շշուկով խոսում: Բեղավոր մի մարդ, գոգնոցը կապած, դուրս եկավ կողքի դռնից (հավանաբար խոհանոցի) այնպիսի տեսքով, որը հատուկ է ռեստորանի տերերին: Ղատելով նրանից, թե իմ կողմը գալիս ինչպես խառնշտորեց աղջկա մազերը, գլխի ընկա, որ նրա հայրն էր: Մոտեցավ ինձ ու երկչուտ ժպիտով ասաց՝ ողջո՛ւյն, ող-

ջո՛յն: Հավանաբար հասկացել էր, որ օտարերկրացի եմ: Սոտ հինգ-վեց ճաշատեսակից բաղկացած ճաշացանկն ինձ հանձնելուց հետո ջրով լի փոքր ապակե շիշ բերեց: Փոքրիկ անծեռոցիկի վրա արդեն գլխավայր շրջած դատարկ բաժակ կար, ճիշտ և ճիշտ պատի ու սալիկների գույնի: Ու մինչ սպասում էի, որ վերադառնա ու ընդունի պատվերս, թաքուն հետևում էի փոքրիկ աղջկան. ի՛նձ էր հիշեցնում, նույն տարիքում, հիշեցնում էր այն տարիները, երբ ինքս էլ հորս փոքր ռեստորանում էի: Բայց այն ժամանակ նախընտրում էի մնալ խոհանոցում, տաք օջախի մոտ, որտեղ տատիկն ինձ անվերջ պատմում էր իր հորեղբոր պատմությունները. այնպե՛ս կուզեի հանդիպած լինել նրան: Հետո տատիկն անսպասելի մահացավ կեսգիշերին, և խոհանոցային պատմություններն ընդհատվեցին: Եվ ահա, ինչպես հարագատի մահվան դեպքում է լինում, կյանքիս գրքի մի գլուխը փակվեց, ու բացվեց մյուսը, ռեստորանից հեռու:

Աղջնակը կարծես երջանիկ էր, որ հավաքել էր Ռուբիկի խորանարդը: Շատ աղմուկ չբարձրացնելով, այնուամենայնիվ, ուզում էր ցույց տալ ինձ, որ խորանարդն իսկապես հավաքած է: Մտքովս անցավ, որ հայրը երևի զգուշացրել է. եթե ուզում է նստել ռեստորանում, ապա չպիտի խոսի հաճախորդների հետ. ի վերջո, մարդիկ չեն եկել նրա հետ խոսելու: Հետո սկսեց պտտել խորանարդը՝ ձևացնելով, թե ճեղքերի արանքում ինչ-որ բան է փնտրում: Նախ սպիտակ երեսն ուղղեց իմ կողմը: Հետո կարմիրը, կապույտը, նարնջագույնը, և յուրաքանչյուր փոփոխությունից առաջ նախորդից ավելի երկար դադար էր տալիս, հետո՝ կանաչը և վերջապես դեղինը: Ու նրա հայացքից, որ ուղղված էր մերթ խորանարդին, մերթ ինձ, հասկացա. աղջիկը հասել էր ուզածին:

Խոհանոցից դուրս եկավ հանդուզն տեսքով մի տղա՝ կարճ կտրած մազերով, դեմքը քերծվածքներով պատված: Ենթադրեցի, որ աղջկա ավագ եղբայրն է: Կիսածայն քննարկումով տարված երկու տղամարդկանց սպասարկելուց հետո աղջկա ձեռքից խլեց Ռուբիկի խորանարդն ու կայծակնային արագությամբ խառնեց շարքերն ու սյուները: Անակնկալի եկա: Ո՛չ խորանարդը խառնելու արագությունից, ո՛չ դաժանությունից, այլ աղջկա արձագանքից: Նա հանգիստ կարող էր գոռալ, հեկեկալ, վա-

զել նրա հետևից կամ գնալ խոհանոց ու զանգատվել հորը: Դրա փոխարեն խորամանկ նայեց ինձ, ասես սպասում էր, որ կկարեկցեմ՝ ելնելով անացի համերաշխությունից: Այդպես էլ արեցի. հայացքս վկայում էր, որ ոչ միայն հասկանում եմ նրա զայրույթը, այլև համոզված եմ, որ կարող է նորից հավաքել խորանարդը: Նա հասկացավ միտքս, սկսեց ուսումնասիրել խորանարդը, ու շրթունքն ատամներով սեղմած՝ սկսեց մտմտալ ամենակարևոր քայլերը: Այնքան էր մոտեցրել դեմքին, որ պատկերացնում էի, թե զուևավոր քառակուսիներն ինչպես են պատվել գոլորշով: Հետո դուրս եկավ հայրը՝ սպիտակ գոգնոցով, և ապուրից, որ դրեց իմ առաջ, բարձրացավ ոսպի, գազարի ու սոխի թանձր բույրը: Ժպտաց ինձ ու ընդգծված առոզանությամբ ասաց.

-Անու՛շ արեք:

Անուշ արեցի, ընդ որում՝ ոչ միայն ապուրը, այլև լոլիկով, սխտորով ու սոխով լցունած արտիճուկները, որ մատուցեցին դրանից հետո. բույրը փողոցում խուտուտ էր տվել քթանցքերս ու ներս հրավիրել:

Փոքրիկ, համեստ ռեստորան էր, Էժան, բայց իսկական, ինչպես քաղաքի մյուս ռեստորանները, իսկ քաղաքն ամաչկոտ էր իր առաջին զբոսաշրջիկներին դիմավորելիս, և բնակչության մեծ մասը չէր էլ կարող պատկերացնել, թե օտարերկրացիներն ինչի համար են գալիս: Ո՛չ զբոսաշրջային ծուղակներ կային, ո՛չ մարքեթինգային հևարքներ, ոչ կիսով չափ լի կամ տաքացրած ճաշատեսակներ: Ուրախ էի, որ գտա այդ վայրը, որ նոր էջ բացեցի նոթատետրում, որի էջերը լցնում էի դիտարկումներով: Ամիսներ անց այն պետք է ուղեցույց դառնար զբոսաշրջիկների համար, որոնք կժամանեին ու կօզնեին վերակառուցել քաղաքը: Ճիշտ այդպես երկու օր առաջ նոր էջ բացեցի, երբ տեսա մզկիթը՝ սքանչելի սրբավայրով: Կամ թե փոքրիկ անմեղ երեխաներն ինչպես են խաղում արդեն դատարկված շենքերում, որոնց պատերը ցանցի էին վերածվել փամփուշտներից: Կամ դեռահասները՝ նորածն հագուստով ու վառ գույնի խմիչքներով. ամեն ինչ անում էին՝ մոռանալու համար այլանդակ անցյալը: Դարելով հիփ-հոփ ռիթմի տակ՝ ազդարարում էին նոր դարարջանի մեկնարկը: Կամ փողոցներում հանդիպող ծերերը, ոմանք՝ աղմկոտ, մյուսնե-

որը լուռ ու դատարկ հայացքներով, որ ասես ճանապարհի երկայնքով պատից կախված սավանի վրա դիտում են իրենց իսկ կյանքի ֆիլմը:

Մինչ աղջիկը չարչարվում էր Ռուբիկի խորանարդի վրա, բերեցին գլխավոր ճաշատեսակը՝ տապակած գառան միս, որ նրա հայրն էր առաջարկել: Ուզում էր մեկ անգամ էլ բացատրել, թե ինչպես են պատրաստել, բայց դարձյալ շփոթվեց, բառերը մոռացավ և համարյա ներողություն հայցող հայացքով ու նույն առոգանությամբ միայն մի բան կարողացավ ասել.

- Լա՛վն է, շա՛տ լավն է:

Լրիվ համածայն էի նրա հետ, ու տեսնելով շփոթված հայացքը՝ որոշեցի, որ այո՛, այս ռեստորանը կհայտնվի իմ սիրելի ռեստորանների ցուցակում. ուզում էի, որ ուրիշներն էլ բացահայտեն այն: Հետո դարձյալ դուրս եկավ տղան՝ ևս մի գամբյուղ հաց բերելով, ու աչքերով հարցրեց՝ դո՞ւր է գալիս գառան միսը:

- Այո, շատ լավն է,- ասացի իր լեզվով, իսկ նա ժպտաց ու հետ վազեց խոհանոց, որ պատմի հորը, թե այս օտարուհին, որ եկել էր ուտելու, կարողանում է խոսել իրենց պես: Բայց ճանապարհին նորից ճանկեց քրոջ խորանարդն ու մի անգամ էլ խառնեց գույները: Ուշադիր հետևում էի աղջկան. շատ էի ուզում տեսնել արծազանքը: Ոչինչ: Առաջվա պես: Մի՞թե տարիքին անհամապատասխան իմաստություն ուներ ու հասկանում էր, որ հայրը ժամանակ չունի իր ու եղբոր երեխայական վեճերի համար: Աղջիկը գլխի ընկավ, որ հացի փոքրիկ կտորը բերանումս՝ լրտեսում եմ իրեն, ուստի ժպտացի՝ փորձելով հասկացնել, որ շատ անհանգստանալու կարիք չկա. ես սովորական հաճախորդ չեմ: Ու թեև եղբայրն ամեն բան անում էր, որ բարդացնի նրա կյանքը, առջևում լուսավոր օրեր են սպասում ոչ միայն քաղաքի, այլև իր ընտանիքի ու հենց իր համար: Չէի պատրաստվում ուղղակի վճարել հաշիվն ու հեռանալ: Ուզում էի ռեստորանը ներկայացնել մեծ թվով մարդկանց. արծակուրդին գուցե մի օր ցանկանային ճաշել այստեղ, աղջկա հետ, որը Ռուբիկի խորանարդ էր հավաքում: Ու իր վաստակած գումարով հայրը հաստատ կկարողանար քերծված ու փոս ընկած խորանարդը փոխարինել անուշիկ, շատ ավելի անուշիկ խաղալիքով: Գուցե այդ դեպքում եղբայրը ստիպված չլիներ լուրիկ կտրատել ու ափսոս

վանալ, այլ կնստեր վաճառասեղանի հետևում ու ամեն թղթադրամը ստանալիս աչքով կաներ ռեստորանի սրահի հեռավոր ծայրին նստած քոջը:

Ժամանակն էր, որ մատուցեին մեղրի մեջ թաթախված մանրացրած նուզան՝ դարչնով ու ընկույզով տարածաշրջանային թեյի ուղեկցությամբ, որը մատուցում էին փոքր կերամիկական գավաթով: Ափով գրկեցի ջերմ գավաթը. թվաց՝ նորածին երեխայի գլխին եմ դիպչում: Քիչ էր մնում նորից սկսեի անհանգստանալ, թե ինձ երբևէ վիճակվա՞ծ է դիպչել իմ իսկ երեխայի գլխին, բայց նախընտրեցի կենտրոնանալ թեյի վրա: Նույնիսկ պատվիրելու կարիք չկար. սեփականատերն ինքն էր բերում ի նշան երախտագիտության, որ քաղաքի բոլոր ռեստորաններից հենց իրենն էմ ընտրել: Խմեցի թեյը՝ հուսալով, որ հինգ տարի անց էլ ավանդույթը կպահպանվի: Հույս ունեի, որ տերը, տեսելով ներս մտնող նոր հաճախորդներին՝ իմ ուղեցույցը ձեռքին, չի տարվի մեծ գաղափարներով, ինչպես ուրիշ քաղաքների ուրիշ ռեստորանատերեր: Ուզում էի ասել, որ չգնի հարևան տունը, ոչ էլ նրա կողքի տունը՝ պատերը քանդելու ու փոխարենը կամարներ կառուցելու, կամ աշխատանքի վերցնի մի քանի տասնյակ մարդկանց ու արագ թխող գազօջախներ գնի՝ փոխելով դանդաղ գազօջախները, կամ վճարի մեկին, որը կբացի դուռը ոչ թե մարդկանց դիմավորելու համար, այլ որ ցույց տա, թե որտեղ նստեն, ու սպասի՝ ձեռքն ուղղելով սեղանին, որի շուրջը մարդիկ դեռ վայելում են իրենց ճաշը:

Մինչ մոլորվել էի մտքերիս մեջ, աղջիկը հանկարծ խորանարդը գցեց հատակին: Սպասում էի, որ վեր կկենա, կկռանա ու կբարձրացնի: Մի վայրկյան մտածեցի, թե գուցե ինքս վերցնեմ, բայց մինչև հասկացա, որ խորանարդը նրան ավելի մոտ է, քան ինձ, հայտնվեց եղբայրը՝ մի ափսե ապուր բերելով մյուս սեղանին: Մատուցեց, ծնկի իջավ, վերցրեց խորանարդն ու դրեց քոջը դիմաց: Քույրը շնորհակալություն չհայտնեց: Կարծես չճանաչեց էլ նրան: Դեմքի անտարբերությունը ոչնչացրեց այն պատկերը, որ ստեղծել էի մտքումս: Հանկարծ աղջիկը, որ հագիվ յոթ տարեկան լիներ, երեսառած լակոտ թվաց: Ինչպե՞ս ավելի շուտ չէի հասկացել: Յոթ տարեկանում ես կզնայի խոհանոց, կօգնեի ինչով կարողանայի. ափսեները կսրբեի, պարկից կարտոֆիլ կբերեի (նույնիսկ ձեռքովս վեր սողացող բլու-

ծի վտանգի տակ) կամ արկղից կհանեի ամենահյուրեղ սոխերն ու կմաքրեի կեղևը՝ աղի արտասուք թափելով: Բայց ո՛չ նա: Ռեստորանում նստած՝ խորանարդ է խաղում: Հիմա հասկանալի է, թե եղբայրն ինչու էր անընդհատ խառնում գույները: Խեղճ տղա, ամբողջ օրն առանց մի վայրկյան հանգստանալու աշխատում է, իսկ քույրը նստել է ու ոչինչ չի անում: Հենց այդ ժամանակ ընկա միայնակ զբոսաշրջիկի ծուղակը, երբ պատմությունն են հորինում՝ փոխանակ մեկի հետ խոսելու, ու պատմությունը քեզ տանում է այնպիսի տեղեր, ուր ավելի լավ է չգնաս: Երանի՛, երանի թե ինձ պես մեկը երեսուն տարի առաջ զար մեր ռեստորան ու սկսեր հաճախորդների մեծ խմբեր ուղարկել մեզ: Ամեն ինչ այլ կերպ կդասավորվեր: Գուցե հայրիկը ստիպված չլիներ փակել այն. խեղճ անհաջողակ, ռեստորանի դիմացի մայթին կանգնածները ծաղրում էին նրան իմ ներկայությամբ, անհարմար վիճակի մեջ դնում աշխարհում թերևս միակ մարդու առաջ, որը գոնե մի փոքր հիացմունքով էր նայում նրան:

Նայեցի դուրս ու հասկացա. արդեն մութ է: Ժամանակն էր դուրս գալու ու վերադառնալու հյուրանոց, որտեղ միակ բանը, որ սպասում էր ինձ մի քիչ խոնավ սենյակում, նեղ մահճակալն էր: Միայնակ շրջագայելու ամենավատ հանգամանքը: Լինում են պահեր, երբ ուզում են հպվել մեկին, հասկանում են, որ ոչ ոք չկա, ու ի վերջո կուչ են գալիս: Եվ ոչ մի գրկախառնություն այնքան քնքուշ չէ, որքան թևաթափ մարդուն փարվելը: Դանդաղ, տարօրինակ հաճույքի զգացումով ընկղմվում են վշտի ավազակի մեջ: Արդեն մինչև ծնկներս խորասուզվել էի, երբ մուտքի դուռը բացվեց, ու ներս մտավ մի ծեր կին՝ մրգով լի զամբյուղով: Խառնշտորեց աղջկա մազերն ու քայլեց խոհանոց: Մտածեցի՝ տատիկն է, ամեն երեկո միրգ է բերում: Աղջնակը թեթև ժպտաց՝ վերահաստատելով իմ կասկածը, որ սխալ նոտայից է սկսել կյանքը: Ուզում էի մոտենալ նրան, մի քանի անգամ թափ տալ ու ասել՝ գնա՛ խոհանոց, օգնի՛ր տատիկիդ, լսի՛ր նրա պատմությունները, այլապես դրանք կմեռնեն նրա հետ:

Բութ մատով ու ցուցամատով օդում անտեսանելի տառեր խզմզելով՝ քերծված դեմքով տղային խնդրեցի բերել հաշիվը: Թիչ հետո բերեց: Փողը դրեցի սեղանին ու վեր կացա: Երբ ելա տեղից, Ռուբիկի խորանարդը

դարձյալ ընկավ հատակին, ասես միտումնավոր, այս անգամ ինձ ավելի մոտ, քան աղջկան: Ուզում էի չտեսնելու տալ ու քայլերս ուղղել դեպի ելքը. նա ընդամենը երեսառած երեխա էր ու արժանի չէր, որ ինձ նման մեկը փոխեր կյանքը: Բայց մինչ մտքերի մեջ էի՝ վերցնեմ խորանարդը, թե ոչ, մարմինս ինքնուրույն կռացավ: Վերցրի և ուզում էի բարձրանալ, երբ աչքերս կանգ առան աղջկա դատարկ տաբատի վրա. փողթերը կապված էին:

ԹՈՒԹԱԿԻ ՃԻՉԸ

L-ghajta tal-pappagall

Հարցրին՝ ընտանիք կամ ընկերներ ունի՞, ում կարելի է զանգել, ու նա լուրից ցնցվեց, իսկ խոհանոցի իր վանդակում Ռիքի թութակը ճչաց՝ «ինչ ինչ ի՛նչ», ու նա պատասխանեց, թե, այո, ունի, շնորհակալություն: Հանգստացրեց նրանց, որ մենակ չի մնա, կգտնի մեկին, որը կուղեկցի հիվանդանոց, կիմանա, թե ինչ է պետք անել: Կոկորդում ճնշող զգացողությամբ՝ շնորհակալություն հայտնեց, որ եկել են, որ հեռախոսով չեն հայտնել լուրը: Երբ նրանց հետևից փակեց դուռը, հանկարծ այնպիսի թուլություն զգաց, նստեց, աչքն ընկավ լուսանկարին, որտեղ երկուսով էին, իրենց հարսանիքի օրը. մուգ կապույտ կոստյումով տղամարդը ձգվել էր, որ բռնի վարդագույն փուչիկը, իսկ ճերմակազգեստ կինը նստած ժպտում էր նրան: Հենց այդ պահին կենտրոնացավ նրա աջ աչքի տակ հայտնված խալին: Մեծացավ, ինչպես թանաքի կաթիլը ծծանին, այնքան ժամանակ, մինչև բժիշկը խորհուրդ տվեց հեռացնել: Այդպես էլ արեց:

Հանկարծ մտածեց, որ հազվադեպ է տեսել կին ոստիկաններ, իսկ եթե նույնիսկ պատահել է, մոտակայքում շրջող տղամարդ ոստիկան է եղել: Ու երբ մուտքի դռան ապակու մեջ տեսավ նրանց, անծրանցնոցների տակ, անսպասելի տեղատարափին, անմիջապես մտածեց, որ ամենայն հավանականությամբ եկել են ասելու մի բան, որն առանձնապես կարևոր չէ: Բայց կարևոր էր: Ամուսնուն մեռած էին գտել, տաքսու մեջ, ճգմված:

Սարսափելի ավտովթար էր, ևս երեք մեքենայի մասնակցությամբ, բայց ամենամեծ հարվածը բաժին էր հասել տաքսուն, որում ամուսինն էր: Մեքենան շարժվել էր ճանապարհի օղակաձև հատված, կողաշրջվել, իսկ հակառակ ուղղությամբ սլացող բեռնատարը չէր հասցրել արգելակել և բախվել էր ուղևորին: Հորդ անծրեն էր մեղավոր, վատ տեսանելիությունը,

թե պարզապես արագության չարաշահումը, բայց հարվածն այնքան հուժկու էր, որ բեռնատարը ճգմել էր ամուսնուն մինչև գոտկատեղը: Վարորդը ծայրահեղ, համարյա մահամերձ վիճակում էր:

Ահա և վերջ: Սթենը չկար: Առանց զգուշացման, հրաժեշտի նամակի, առանց վեճերի կամ երկարաշունչ քննարկումների: Առանց փաստաբանի: Ոչ մի բան: Ուղղակի անհետացել էր, «ինչպես տեռն անապատում», ինչպես ասում են ֆրանսիացիները: Մի առավոտ արթնանում ես՝ ակնկալելով հերթական տափակ ու ձանձրալի օրը, և կեսից գիտակցում. արտասովոր օր է, որ սահմանազատում է առաջ-ը և հետո-ն:

Կինը հաճախ էր մտածել մահվան մասին, ինչպես իր, այնպես էլ մտերիմների, այդ թվում՝ ամուսնու մահվան: Բայց երբեք չէր սպասում ստանալ ոստիկանության բերած լուրը, ու չէր էլ կարող պատկերացնել, թե ինչպես կարձագանքի: Օրինակ՝ լաց չեղավ: Լացակումած չպիղեց, որ անհնար է Սթենը լինի, որ Սթենը հաստատ դեռ ողջ է: Չճշաց և նույնիսկ ուշագնաց չեղավ: Արյան ճնշումն ընկավ, ինչպես լինում էր շաբաթական մեկ-երկու անգամ, ուստի գունատվեց ու լռեց, ասես հայտնվել էր պղպջակի, աշխարհի մնացած մասը բացառող տարածության մեջ: Ոստիկանների խլացած ձայներն ականջին էին հասնում կեսգիշերին հաստ քարե պատի միջով հազիվ լսվող հարևանների խոսակցությունների պես:

Ցնցուղի տաք ջրի տակ կանգնած՝ սկսեց ամենայն լրջությամբ հասկանալ ստացած լուրի իմաստը: Հակիրճ, հիևզ բառով ասած, դա նշանակում էր, որ իր կյանքը վերջապես կարող էր սկսվել: Իր մեծագույն խնդրի լուծումը մանանայի պես թափվել էր երկնքից: Զգացողություն էր, որ վեր է թռել մղձավանջից ու հասկացել, որ, այո, սարսափելի էր, բայց ավարտվեց: Պահեց դեմքը թափվող ջրի տաք ճնշման տակ, փակեց աչքերն ու վայելեց՝ թողնելով, որ ջուրը լցվի բերանը: Ինչպես հավերժահարսը՝ շատրվանի տակ՝ լճակում: Մտքում մի պատկեր հայտնվեց. Տիրամայրը, որի նկարը հայրը կախել էր իր ննջասենյակում, երբ դեռ փոքր էր: Ամեն գիշեր, ծնկի իջած, արմունկներով մահճակալին հենված, աղոթում էր նկարի առաջ: Ու թեև շատ տարիներ էին անցել, ու հազարավոր կիլոմետրեր էին բաժանում այդ տունը ահռելի, աղմկոտ քաղաքից, որտեղ ապրում էր հիմա, նա հստակ

տեսնում էր պատկերը: Տիրամայրը՝ կենտրոնում, հրեշտակը, իրականում՝ հրեշտակապետը, մյուս կողմում, երկուսի ձեռքին էլ՝ մի բան, թե ինչ՝ երբեք էլ չհասկացավ: Այս անգամ, հաճույքներ ու հրաշք ինտրդելու փոխարեն, ինչպես անում էր փոքր ժամանակ, շնորհակալություն հայտնեց նրան:

Երբեք մտքով չէր անցել, որ ամուսնուց երկար կապրի: Այնքան՝ հեշտ էր նրան պատկերացնել մոտ ութսունամյա, գուցե նույնիսկ ինստունամյա ծերունու կերպարում՝ կնճռոտ դեմքով ու նոսր, ճերմակ մազերով: Հեշտ էր, որովհետև նույնիսկ հիմա, հիսունհինգում, արդեն սկսել էր իրեն ծերունու պես պահել: Ու մինչ ջուրը թափվում էր գլխին, մտածեց կյանքի վերջին փուլի մասին: Ասես նկարիչ լինե՞ր՝ դատարկ կտավի առաջ: Սպիտակ թղթի հետ մենակ մնացած գրող: Զարաբեկորին նայող քանդակագործ: Միայն առողջություն էր պետք: Երջանկությունը կամ տխրությունը հիմա ամբողջովին կախված էին իրենից, և երկար տարիներ մի մարդու կողքին ապրելուց հետո, որև անվերջ հիասթափեցնում էր, չէր պատրաստվում հանձնվելու: Կախեց գլուխը, դատարկեց բերանն ու ժպտաց՝ քաջ գիտակցելով. այդ պահից սկսած, համենայն դեպս որոշ ժամանակ, ստիպված է զգոնություն պահպանել, որ հանկարծ չժպտա մարդկանց ներկայությամբ:

Սկսեց մտածել, թե ինչ անել: Առաջինը միտքը եկավ դիակիզարանը: Հետո՝ հաշիվները վճարելը: Ձևաթղթեր պիտի լրացնի, որ ստանա այրու բոլոր արտոնությունները... այրո՛ւ: Անհամբեր սպասում էր, թե երբ է տեսնելու՝ ինչ է թողել ամուսինն իրենից հետո, և դրանից ինչը պահի: Մնացածն աղբի հետ դեն կնետի: Հետո կսկսի իր կյանքը: Կկարողանա ընտրել ճանապարհն ու այդ ճանապարհն անցնելու արագությունը: Վստահ էր, կհանդիպի մարդկանց, որոնք կզեղեցկացնեն կյանքը, չեն իջեցնի վարագույրները, այլ կբացեն պատուհանները, որ վայելի սքանչելի բնապատկերները: Այո, հանկարծ ամեն ինչ իմաստ առավ, այդ թվում՝ տարիների տխրությունը: Դրանք անհրաժեշտ էին: Անհրաժեշտ, ինչպես զսպանակը, որը սեղմած ցած պահելուց հետո հանկարծ բաց թողնելիս խաղալիքն ուրախ ցատկոտում է:

Դեմքն արտացոլվել էր զուրբշապատ հայելու մեջ, ձեռքերը քոր էին գալիս. ուզում էր վերցնել ածելին, սափրվելուց հետո օգտագործվող

լույսն ու ատամի խոզանակը, որը լրիվ պատված էր «Քուզեյթի» մևացուկներով, ու դեն նետել: Բայց դեռ ժամանակը չէր: Խորհրդանշական շարժումով զգուշորեն վերցրեց «Փալմոլիվի» լարձուն, չորացող փրփուրով ծածկված տարան, գևաց խոհանոց ու նետեց աղբամանը, իսկ անկյունից լսվում էր Ռիքիի «ինչ ինչ ի՛նչը»:

Վերադառնալով ննջարան՝ մտածեց, թե ինչ հագնի: Տեսնես նորաթուխ այրիներն ինչպե՞ս են հայտնվում հիվանդանոցում: Գուցե նույն հագուստով, որը հագին էր նոր կարգավիճակն իմանալու պահին: Բայց արդեն ցնցող էր ընդունել: Սև՞ հագնի: Սև զգեստները չափից շատ տոնական էին: Ներքևի դարակից ընտրեց մոխրագույն վերնազգեստ, իսկ ճոռացող դռնով զգեստապահարանից դուրս քաշեց սև ջինսի տաբատը, որը վաղուց չէր հագել ամուսնու փնթփնթոցի պատճառով: Երբ հայելու մեջ նայեց իրեն ու նկատեց, որ այն կիպ է, ինչը ժամանակին նյարդայնացնում էր ամուսնուն, մտածեց, որ ավելի լավ հագուստ չէր էլ կարող գտնել:

Երբ նստեց մահճակալին, որ հագնի կոշիկները, թվաց, թե ներքևակն առաջվանից ավելի հարմարավետ է: Մահճակալը կարծես անսպասելի մեծացել էր: Անհավանական է, բայց այդ օրվանից կարող է նաև քնել ձախ կողմում: Ո՞վ կմտածեր: Իսկ վաղը կշրջի մահճակալը, որ դեմքով դառնա պատուհանին, ինչպես միշտ ուզում էր, դեն կնետի ծանր շրջանակներով նկարները, այլանդակ, ինչպես դրանցում պատկերված կանայք: Հետո պատերը կներկի բաց գույներով, ջահերը կփոխարինի գեղեցիկ լուսամփոփներով: Վերջապես կկարողանա փոխել բազմոցն ու նոր ու հարմարավետը գնել, որի վրա հաճույքով կնստի: Եվ նոր հեռուստացույց կգնի: Ու կազատվի դատարկ սպասքապահարաններից, որոնց կարիքը չկար, բայց դրանցից սենյակները փոքրանում ու խցկվում էին: Ինչքան՝ շատ բան կար անելու: Ու եթե պարզվի, որ անելիքը չափից շատ է, միշտ էլ կարող է վաճառել իր չսիրած քառասյին ու անանուն քաղաքի կենտրոնի այս տունը, իսկ ստացած գումարով երազանքի տուն գնել քաղաքից դուրս, ինչ-որ տեղ: Բայց երազանքի տան պատուհանից նայելով՝ էլ չի տեսնի, թե ամուսինն ինչպես է մոտենում մեքենայով, նայում իրեն բոլոր ծրագրերը փոշիացնելու պատրաստ մարդու հայացքով:

Նրան դուր էր գալիս կիպ ջինսով քայլել ննջասենյակից խոհանոց: Զգում էր, որ գրավիչ է: Ավելի երիտասարդ: Քայլերը՝ ավելի թեթևասահ: Նույնիսկ Ռիքին կարծես նկատում էր, որ նա մարտահրավեր է նետել ամուսնու ֆաթվային:

«Ինչ ինչ ի՛նչ...»:

Երբ հայացքը հանդիպեց թութակի հայացքին, հասկացավ, որ կարող է վերջապես ազատվել նաև նրանից: Շատ մեծ թռչուն էր, անճոռնի շարժումով և ամենակարևորը՝ հիմար: «Ինչ ինչ ի՛նչ» էր կանչում. ամուսինն էր սովորեցրել գնելուց հետո, ու դրանից ձայնը ծիծաղելի էր հնչում:

- Գիտե՞ս ինչ,- ասաց՝ երկու ձեռքով վերցնելով վանդակն ու տեղափոխելով պատուհանի մոտ,- երկուսիս ծառայությունն էլ ավարտված է:

Բացեց վանդակի դուռը, ու շփոթված թութակը դուրս եկավ թաց պատուհանագոգին, առաջին անգամ ծովը նետվող վախեցած տղայի պես: Խիզախությունը չէր հերիքում ամայության գիրկն ընկնել: Գուցե չգիտե՞ր, որ դա հնարավոր է: Ռիքին երբեք չէր բացել թևերը: Փակեց պատուհանը, որ թռչնակը չվերադառնա, ու դա է՛լ ավելի շփոթեցրեց նրան: Սկսեց կտուցով կտկտացնել պատուհանի ապակուն ու հիշեցրեց իր սովորած միակ բառը՝ կարծես պնդելով, որ հեշտ ու հանգիստ դուրս շարտելու թռչուններից չէ:

Նայեց ժամացույցին: Վեցն էր: Սի ժամ էր անցել այն պահից, երբ ոստիկանները հայտնեցին լուրը: Անծրևը դադարել էր, սկսում էր մթնել: Տաքսի կանչեց ու մտքերի մեջ ընկավ. նույն ծառայությունն է, որից օգտվում էր ամուսինը: Ի՞նչ էր անում տաքսու մեջ: Սովորաբար գրասենյակի մեքենայով էր այցելում օդակածն ճանապարհին կից շինհրապարակ: Գուցե այդ օրն ազատ մեքենա չի՞ եղել:

Մինչ սպասում էր, որ տաքսին մոտենա, քայլում էր սենյակում ու նկատեց դատարկ ծաղկամաններ. հիմա, երբ ամուսինը չկար (նա ամեն ինչից ավերգիա ուներ) կարող էր լցնել գեղեցիկ ծաղիկներով: Կակաչներ, աֆրիկյան մանուշակներ, հիբիսկուսներ, շուշաններ և հասմիկներ: Ծաղիկների մասին միտքը նրան հիշեցրեց թաղման արարողությունը, որը պիտի կազմակերպեր դիակիզարանում: Եվ դազաղը, և ամուսնուն՝ դազաղի մեջ

պառկած: Ո՞վ գիտի, մինչև բեռնատարը կմխրճվեր մարմնի մեջ, հասցրե՞լ է վերջին անգամ մտածել: Աչքի առաջ հայտնվե՞լ է կնոջ դեմքը:

Շրջեց սենյակում, ճաշասեղանը տեղափոխեց կենտրոն, անմիջապես ջահի տակ. միշտ ուզել էր, որ այնտեղ լինի: Դողացող ձեռքերով քաշեց աթոռներն ու դասավորեց սեղանի շուրջը: Հուզված էր: Ու մի քիչ վախեցած: Բացեց պահարանը, որտեղ ամուսինը խմիչք էր պահում, ու փորձեց ընտրել մեկը: Ալկոհոլից ոչինչ չէր հասկանում, ու պիտակներն առանձնապես չօգնեցին: Գիտեր միայն, որ «Սակալանի» շիշը, որ ամուսնու հայրն էր տվել մահից առաջ, յուրահատուկ էր, և որ ամուսինը սպասում էր ինչ-որ կարևոր առիթի, որ բացի: Մի քիչ լցրեց գավաթի մեջ. մի կումը բավական էր: Կմկմաց ու ծամածռեց դեմքը: Ի՞նչ են գտել խմիչքի մեջ: Երբ գավաթը դրեց խոհանոցի սեղանին, հնչեց դռան զանգը: Երկու անգամ: Տաքսու վարորդները: Միշտ շտապում են:

Սուտեցավ դռանը, որտեղից էլ չէր լսվում թուփակի ճիչը, ու պատուհանի ապակու միջով, տաքսու վարորդի փոխարեն, տեսավ ամուսնուն: Ճերմակ մազերն ու սպիտակ վերնաշապիկը թաց էին: Չայրացած էր երևում: Եվ սառած: Բանալիներն ո՞ր էին: Եվ ինչո՞ւ էր առանց բաճկոնի:

Դողացող աջ ձեռքով դանդաղ պտտեց բանալին:

ՆՈԱՆ ՏՈՒՆԸ

Dar ir-Rummien

Երբ Հաննան ու ես որոշեցինք «Նոան տունը» վերածել նկարիչների կեցավայրի, թվաց, թե հաշվի ենք առել ամեն ինչ. տան հնարավորությունները, ամբողջ տարի արևի լույսով ողողված կեցավայրի պահանջարկը, իսկ մեզ համար՝ աշխարհի տարբեր երկրների նկարիչներին հյուրընկալելը: Ճաշից հետո կլինեին երկար գրույցներ և մեծ բավականություն, որ մեր տունը ներշնչանքի աղբյուր է հավերժական գործեր ստեղծելու համար: Բայց ամենակարևորը, հույս ունեինք, որ Տոյը բացառիկ հնարավորություն կունենա մեծանալու ստեղծագործող մարդկանց կողքին: Պատկերացնում էինք, որ տունը նրա համար կենդանի թանգարանի նման մի բան կլինի, ինչը հատկապես կարևոր է մեր փոքրիկ կղզում, որտեղ միակ բանը, որ թանգարան է համարվում, բրածոներով ու փորագրված քարերով լի սենյակն է: Միայն թե հաշվի չէինք առել, որ Տոյն ընդմիջտ երեխա չի մնալու, ու որ նկարիչները գիտեն սրտեր նվաճելու ձևերը:

Տոյը տասնչորս տարեկան է, բայց ավելի մեծ է երևում: Իմ միջերկրածովյան արմատները նրան պարզևել են կարգին հախուռն խառնվածք, համառություն և կյանքի մեծ կիրք: Մորից ստացել է մնացածը, այդ թվում՝ գեղեցիկ խարտյաշ մազերը, կապույտ աչքերը և փարթամ շուրթերը: Աշխույժ է մեծանում. գաղափարներով լի, միշտ պրպտում է, երագում, երգում կամ պարում: Բայց նաև մեծ հաճույք է ստանում երկարատև միայնակ զբոսանքներից՝ խաղաղ մտորումների ու խորհրդածության համար: Երբ նեղվում է, ժամերով փակվում է իր մեջ: Մինչև որևէ զվարճալի տեսա-հոլովակ է գտնում Յութուբով, որ ցույց տա մեզ: Կամ էլ գունավոր թիթեռնիկ է նկատում պատշգամբում ու փորձում է առանց նրան վախեցնելու հայտնել մեզ: Երբեմն կարծես փոքրիկ աղջիկ լինի. ամենաձանձրալի բա-

ներն անգամ երջանկություն են պարգևում: Օրինակ՝ շիկահավը՝ վաղ նոյեմբերին, խիսունջի դանդաղ ընթացքը կամ միայնակ աստղը ամառային գիշերներին: Երբեմն էլ ինչ-որ բան է քննարկում, այնպես որ, հասկանում ենք. դանդաղ վերածվում է կնոջ:

Մի քանի ամիս առաջ հյուրընկալեցինք Ահմեդին՝ այժիրցի քանդակագործ, որը նրան խնդրեց բնորդ լինել իր համար: Հեռանալուց առաջ մեզ թողեց նրա աջ ձեռքի փորագրությունից մի կտոր. ցուցամատն ու բութ մատը՝ շրջանի տեսքով: Հիմա այն ծառայում է որպես գրչակալ: Մի երիտասարդ բանաստեղծ ունեինք Վերոնայից. հեռանալիս ասաց, որ գող եմ, երկու աստղ եմ թոցրել ու դրել դստերս աչքերի մեջ: Կատակեց, թե մտադիր է վերադառնալ, երբ Տոյը մեծանա, որ պոեզիայի միջոցով նվաճի նրա սիրտը: Չնայած ասացի, որ մեր տան դռները միշտ բաց են նրա առաջ, իրականում ուզում էի հասկացնել, որ իրեն նեղություն չտա ու չվերադառնա: Երբ նրա հետևից փակեցի դուռը, Տոյը բոլոր բարձերը շարտեց վրաս:

Հիմա Տուանն է մեզ մոտ՝ մեր ամենաերիտասարդ հյուրը: Ընդամենը տասնինը տարեկան է, բայց արդեն ցուցադրվել է հարգված թանգարաններում: Նրա հայտը տպավորեց Հաննային ու ինձ, և Տոյը, որ միշտ հետաքրքրվում է մեր հյուրերով, նույնիսկ համացանցում փորձեց փնտրել ու մեզ ցույց տալ նրա որոշ գործեր:

Տուանը հագիվ էր հասցրել տեղավորվել իր սենյակում, երբ նկատեցինք, որ նրա ու Տոյի միջև փոխադարձ համակրանք ձևավորվեց, արմատ առավ ու սկսեց գալարվել տևով մեկ: Այդ գաղափարն ինձ տարիներ առաջ տեսած մի ֆիլմ հիշեցրեց:

- Այն մեկը, Ռոբին Ուիլյամսի մասնակցությամբ: Վերնագիրը չեմ հիշում,- ասում է հիմա Հաննան. պառկած նայում ենք ծովի ջրերի վրա արտացոլված լուսնալույսին:

- Տղաները սեղանի խաղ էին խաղում, չէ՞,- ես էլ եմ փորձում հիշել:- Ո՞նց էր կոչվում:

-«Տումանջի», - հաղթական ասում է նա ու դառնում ինձ այնպիսի հայացքով, որով նայում ենք իրար, երբ կիսում ենք նույն միտքը:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

-Ղա՛ է որ կա:

Ու անմիջապես սկսում է երագել:

-Տոյ, Տուան, Տումանջի... Մի օր նրանք այդ անունը կգրեն իրենց տան վրա: Ի՛նչ ընտիր կլինի, չէ՞:

Հաջորդ օրը՝ դասերից հետո, Տոյն անհանգիստ էր: Յրված ու շտապ կատարեց տնային աշխատանքն ու գնաց լողափ՝ Տուանի մոտ. ուզում էր հարցնել՝ կցանկանա՞ շրջել գյուղում: Այնքան բան կար տեսնելու, գուցե, օրինակ, հացի փուռ գնան կամ ինտերնետ սրճարան, որը վերջերս էր բացվել ու դեռ նորություն էր: Կամ ցույց տար Խորհրդի այգուց բացվող տեսարանը:

- Խոստովանիր, որ շատ են սագում իրար:

- Հա՛ննա: Նա ընդամենը տասնչորս տարեկան է:

- Սեփականատեր մի՛ եղիր, Գա՛նն,- ասաց ժպտալով:

Տուանի գաղափարն էր՝ մի ամիս մնալ ու ծովից ոգեշնչված՝ աշխատել նոր հավաքածուի վրա: Հետևաբար նախընտրում էր նկարել լողափին, տնից մոտ հիսուն մետր հեռու: Ասում էր, որ այնտեղ ավելի մոտ է զգում իր թեմային, և, ինչպես և կարելի էր ակնկալել, Տոյն անմիջապես ստանձնեց նրա օգնականի դերը. միշտ Տուանի տրամադրության տակ էր: Երբեմն տանիքից տեսնում էմ նրան. Տուանը՝ վրձինը ձեռքին, իսկ Տոյը հիացմունքով նայում է նրան: Մի օր, երբ աչքս ընկավ նրանց, արդեն լսում էի, թե ինչ ենք խոսելու երեկոյան, երբ սովորականի պես մտնեմ բարի գիշեր մաղթելու:

- Հա՛յր,- սկսում է նա:

- Ասա՛:

- Չգիտեմ, թե ոնց ասեմ:

- Աչքերդ փակի՛ր, ասա: Եթե աչքերդ չբացես, դուրս կգամ սենյակից, իբր ոչինչ չես ասել: Եթե բացես, կմնամ ու կպատասխանեմ:

- Ինձ թվում է,- ասում է ու լռում, հետո շարունակում,- ինձ թվում է՝ սիրահարված եմ Տուանին:

Հետևում եմ, թե ինչպես է բացում աչքերն ու կկոցում:

- Այդքան շո՞ւտ:

- Հա: Գիտեի, որ հենց դա ես ասելու: Ու եթե ուզում ես ասել, որ չգիտեմ, թե ինչ է սերը, ուրեմն իմացիր. դու էլ չգիտեիր, երբ մայրիկի նկարը տեսնելուն պես սիրահարվեցիր:

Հաջորդ օրը վազեց ինձ մտա՝ պատմելու, թե Տուանն ինչ է նկարել:

- Այսօր ծովն է նկարել, հայրի՛կ: Գուշակիր, թե ինչով: Ծովի ջրով:

Վստահ էի, Տուանը հեռանալիս հենց այդ նկարն է թողնելու մեզ: Այստեղից հեռացող բոլոր նկարիչներն ինչ-որ բան են թողնում. դա գործարքի պայմաններից է: Ցանկացած բան: Մարժենան՝ Վարշավայից, փոքրիկ բանաստեղծություն էր թողել, որ նրա բառերը ջերմանան մեր այրող արևի տակ: Անգլիացի Գրեգը, որն ամբողջ կյանքում աշխատել էր նավթաշտարակների վրա, թոշակի էր անցել ու պիեսներ էր գրում, իր նոր պիեսի առաջին արարն էր թողել: Սյունները լուսանկար էին թողնում, նոտաներ կամ քանդակ: Հաննան նախատեսում է մի օր ամեն ինչ հավաքել, լուսանկարել և այլքում հրատարակել, որ նվիրենք մեր բոլոր այցելուներին:

Իմ մեծ պապ Ֆելիչի ժամանակներում ոչ ոքի մտքով չէր անցնի, որ ամեն ինչ այսպես կդասավորվի. նրան ծաղրում էին առանձնատունը ծովին այսքան մոտ կառուցելու համար: Գուցե նախատեսում էր այն համալրել բազմաթիվ սենյակներով, մեծ ընտանիքի համար, բայց չէր կարող կանխատեսել, որ վաղ տարիքում ամուրի կդառնա ու էլ երբեք ուրիշ կնոջ չի սիրի: Վիլլան կոչեց «Նոան տուն». այն բոլոր կողմերից շրջապատված էր բազմաթիվ ռոնենիներով: Պապիկս էլ «ը» հողն ավելացրեց, երբ ժառանգություն ստացավ, ու վերածեց հյուրատան: Ժամանակի ընթացքում տունը հասավ հայրիկիս. երիտասարդ տարիքում կորցնելով կնոջը՝ նա ամբողջ էներգիան ներդրեց տունը շահութաբեր դարձնելու համար: Ասում են՝ առաջին սերունդը գցում է ընտանեկան բիզնեսի հիմքը, երկրորդն ամրապնդում է, իսկ երրորդը ոչնչացնում է այն, բայց հայրս բացառություն էր: Նա ձևափոխեց բիզնեսը, նորոգեց համեստ խոհանոցը՝ այն վերածելով ռեստորանի, ու ևս մի հարկ ավելացրեց՝ չփչացնելով հին տան գեղեցկությունը:

Ինչպես հայրս ու նրա նախնիները, ես նույնպես մեծացա այստեղ: Հեշտ չէր ապրել այս տանը, ամեն ինչից կտրված: Ամռանը երբեք չէի բողո-

քում. ծովն ուղիղ մեր տան շեմին էր: Բայց ծմեռն այլ պատմություն էր: Մեծանում էի ու հասկանում, թե իմ առօրյան ինչքան տարբեր է ընկերներիս կյանքից: Մայրս մահացավ երիտասարդ տարիքում: Անկեղծ ասած, դա միաժամանակ և՛ ազդեց, և՛ չազդեց վրաս, որովհետև այդպես էլ չիմացա՝ ինչ կլինեք, եթե նա լինեք: Բանն այն է, որ, ի տարբերություն ընկերներիս, ես չէի ապրում սովորական տանը: Երբ իմացան, որ իմ տունը հյուրատուն է, գլխիս հարցերի տարափ տեղացին: Երևի մտածում էին, թե ապրում էի ծառե տնակում կամ նավում: Ոմանք չէին հասկանում՝ դա հնարավոր է, իսկ իմ կարծիքով բնական էր: Ինձ համար տարօրինակ էր, թե ինչպես են ապրում նրանք. փոքր տներում փակված, նույն երկու-երեք մարդու հետ: Ի՞նչ էր լինում, երբ վիճում էին: Լուռ նստում էին, մինչև մեկնումեկը զիջո՞ւմ էր: Իսկ ինչի՞ մասին էին խոսում ամեն երեկո: Ինչպե՞ս էին բավականաչափ թեմաներ գտնում: Իմ հարցերը միշտ անակնկալի էին բերում նրանց, ուստի զարմանալի չէ, որ մոտ ընկերներ չունեի:

Բայց երբ լրացավ տասներկու տարիս, մեր ապրելակերպը խնդիր դարձավ: Ինձ անընդհատ թվում էր՝ կյանքս կանխորոշվել է հենց ծննդյանս օրը, և ես հնարավորություն չունեմ գտնելու իմ ճանապարհը: Որովհետև, ինչպես մեծ պապս տունը թողել էր պապիկիս, որն էլ հետո թողել էր հայրիկիս, «Նռան տունը»՝ ի վերջո բաժին էր հասնելու ինձ: Համարյա առանց գիտակցելու՝ սկսեցի անլուրջ վերաբերվել դպրոցին, ոչ թե որովհետև բավականաչափ խելացի չէի, պարզապես գիտեի՝ լավ գնահատականներով, թե առանց դրանց՝ ի վերջո ե՛ս եմ դեկավարելու հյուրատունը: Ավելի խոհեմ կլինեք հնարավորինս արագ խորասուզվել գործի մեջ: Նույնիսկ աղջիկների հարցում մյուսներից հետ էի: Եթե դպրոցական ընկերներս ծրագրում էին, թե որտեղ հանդիպեն երեկոյան, կամ հաջորդը ում հետ համբուրվեն, ես միշտ գիտեի, որ լինելու եմ հյուրատանը: Օգնելու եմ հայրիկիս: Չէի պատկերացնում, որ կարելի է հայրիկին խնդրել ընդհատել գործն ու ինձ մեքենայով գյուղ հասցնել: Հետո զալ իմ հետևից: Այդ մռայլ բլուրը հեծանվով բարձրանալու տարբերակ չկար:

Երբեմն ըմբոստանում էի, զայրանում իմ կյանքի վրա: Բայց միշտ էլ ի վերջո համակերպվում էի հանգամանքների հետ: Ու, անկեղծ ասած, լի-

նում էին պահեր, երբ գիտակցումը, թե ճանապարհս նախապես գծված է, հանգստացնում էր ինձ: Ապագան ծրագրելու կարիք չկար. մեկն արդեն ամեն ինչ տեղն էր գցել: Ինչ վերաբերում է կարիերային, նախանձում էի նրանց, ովքեր ձգտում էին մեճ գործերի՝ ճարտարապետ, զինվոր, վարչապետ դառնալ: Հետո հասկանում էի, որ բախտս բերել է, երբ մյուսները դժվարանում էին ուղի ընտրել՝ վախենալով, որ շատ են ուշացել:

Ստուալորապես այդ ժամանակ մի ծեր կին եկավ մեզ մոտ:

- Կոնկրետ քանի՞ տարեկան էիր,- ամեն անգամ քնից առաջ հարցնում է Հաննան, երբ խոսվում է այս պատմության մասին:

- Մոտ տասնչորս, Տոյի տարիքին,- ասում եմ ես, երբ երեկոյան նորից հասնում ենք այս պատմությանը:- Մինչև հիմա ացքիս առաջ է. ներս է գալիս՝ գեղեցիկ հագնված, ուղեբեռը ձեռքին:

Հայրս պատրաստվում էր մի լավ հանդիմանելու ինձ: Տեսել էր, թե ինչպես եմ դանակ-պատառաքաղի ծակը արկղը հանում սենյակից, որտեղ սպասք էինք լվանում, ու զայրացած էր: Չէր ուզում, որ ծակը իրեր բարձրացնեմ, միշտ ասում էր, թե ինչ կարևոր է հոգ տանել մեջքի համար: Բայց անզուրիհն ներս էր մտել, և նրա գործը տիկնոջը լայն ժպիտով դիմավորել էր: Գրանցեց նրան, բացատրեց, թե ինչը որտեղ է, թե առավոտյան որ ժամին է գյուղ մեկնում միակ ավտոբուսը: Տեղյակ պահեց, թե երբ է նախաճաշը, հագուստը երբ թողնել լվացքատանը, երբ են մատուցում ճաշը: Հաջորդ օրը, սակայն, աստիճանների վրայից կանչեց՝ խնդրելով, որ ճաշը բարձրացնեմ իր սենյակ: Կարծես անմիջապես զգաց, որ ուզում եմ մարմնիս ծանրությունն այսուայնկողմ տանել: Ուղիղ չորս ամիս մնաց Սենյակ 7-ում: Չեմ հիշում, թե ուրիշ մեկն այդքան երկար մնացած լիներ:

Երբ առաջին անգամ բարձրացա, տեսա, որ տեղաշարժել է ամբողջ կահույքը: Մահճակալը կողքանց էր, գրասեղանը՝ ուղիղ պատուհանի առաջ, որ նստի ու նայի ծովին: Մահճակալի կողքի սեղանիկը հիմա գրասեղանի մոտ էր՝ վրան դարսած գրքերով և լուսանկարներով: Գրասեղանի մյուս կողմում երկինք ուղղված հեռադիտակ էր: Պետք է խոստովանեմ, որ շատ էքսցենտրիկ ծեր տիկին էր: Հերիք չէ՝ մեռակ էր եկել, ծմեռվա կեսին, խնդրում էր, որ ուտելիքն իր սենյակ բերեն, դեռ հետև էլ հեռադիտակ էր

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

բերել: Սկուտեղը դրեցի գրասեղանին ու շրջվեցի, որ գևամ: Նա շնորհալալություն հայտնեց, բայց շարունակեց.

- Անունդ ի՞նչ է, երիտասարդ:

- Գաննի:

- Ի՛նչ գեղեցիկ անուն է: Քանի՞ տարեկան ես, Տիանի:

- Ոչ թե Տիանի, այլ Գաննի:

- Կներես, սիրելի՛ն: Ղե, ասա՛ ինձ, Գաննի, ճի՞շտ ասացի, քանի՞ տարեկան ես:

- Այո, Գաննի: Տասնչորս:

- Ի՛նչ լավ է, համարյա թռուռուտ տարիքին:

Թերթեց փոքրիկ թղթապանակի էջերի արանքում դրված մի քանի լուսանկար ու ցույց տվեց ինձ հենց նոր քնից արթնացած աղջա նկարը: Որքան շատ էր պատմում թռուռուտու մասին, այնքան շատ էի ուզում ապրել նրա քաղաքում, նրա տան մոտ, որ ավելի ու ավելի լավ ճանաչեմ: Ոչ թե այստեղ, կղզու այս փոքրիկ ժայռի վրա: Գուցե նույն դպրոցում սովորեիք: Երբ պատմում էր, թե թռուռուին ինչպես է սիրում անցկացնել շաբաթ-կիրակին, ինչ թանգարաններ է այցելում, ինչ երաժշտություն է սիրում և էլ ինչ հազարավոր հետաքրքրություններ ունի, անդադար մտածում էի՝ ինչքան լավ կլիներ ապրել ավելի մեծ քաղաքում:

Չորս ամիս, օրումեջ, նրա ճաշը բարձրացնում էի սենյակ: Էինում էին երեկոներ, երբ ներքևում էր ճաշում, մեզ հետ: Մի երեկո սեղանատանը իմացանք, որ գիրք է գրում: Ասում էր՝ այդ ամենը թղթին հանձնելու միակ ճանապարհը տևից հեռանալն էր. հենց այդպես էլ հայտնվել էր մեզ մոտ:

Բայց լավագույն գրույցները սկսվում էին, երբ երկուսով էինք մնում նրա սենյակում կամ պատշգամբում, ու ինձ հարցնում էր կյանքիս մասին, ասես միջնադարյան հետազոտող էի, որը կարող էր անթիվ-անհամար պատմություններ պատմել: Ասացի, որ երբեք դուրս չեմ եկել կղզուց: Ու գուցե էլ դուրս չգամ: Նա, որ շրջել էր ամբողջ աշխարհում ու ամեն երեկո հեռադիտակով ուսումնասիրում էր, թե ինչ կա աշխարհից անդին, ուշադիր լսում էր ինձ:

Նրա հեռանալուց գրեթե մեկ տարի անց մի ծանրոց եկավ: Հասցեա-

գրված էր ինձ, անկյունում վեց կապույտ դրոշմանիշ՝ թագուհու պրոֆիլով: Ծանրոցում վեպն էր՝ «Նռան տունը»: Եվ իմ կյանքի առաջին սամակը: Այդ երեկո, անկողնում, տիտղոսաթերթը բացելով, տեսա, թե ինչպես է գրվում Հաննայի անունը:

Հաջորդ տարի Հաննան մոր հետ եկավ «Նռան տուն»: Ծեր կինը մահացել էր, և նրանք ուզում էին տեսնել այն տունը, որի մասին այնքան էր պատմել, ու հանդիպել տղային, որին հասցրել էր սիրել: Անմիջապես ճանաչեցի Հաննային, քարացա: Գալիս էին ամեն ամառ, մինչև մի տարի Հաննան մենակ մնաց և որոշեց չհեռանալ:

Այսօր անկողնում նորից հիշում եմք պատմությունը, ու ինչպես հաճախ է պատահում, յուրաքանչյուրս կրկնում է իր սիրած հատվածները: Ու ժպտում ենք՝ տեսնելով, թե կյանքն ինչպես է երբեմն կրկնվում: Այսօր ցուրտ է, Տուանը որոշել է աշխատել իր սենյակում: Ավելի վաղ ձայն էր տվել՝ հարցնելով, թե կարո՞ղ է ճաշել վերևում: Նախասրահում բազում ձայներ լսելով՝ որոշեց, որ ես ու Հաննան շատ զբաղված ենք, ու հարցրեց՝ Տոյը կբարձրացնի՞ր ուտելիքը:

Քո վերջին ամառը, Էմի

L-añhar sajj tiegñek, Amy

Հիմա, երբ որոշել եմ միանալ քեզ, մտածում եմ անհարմար կզգամ, եթե այսքան տարի անց ևորից հանդիպենք: Պե, իհարկե, մի քիչ: Բայց վստահ եմ, արագ կկոտրենք սառույցը, խաղաղ անկյուն կգտնենք, ու ես ամեն ինչ կպատմեմ քո վերջին ամառվա մասին, Էմի, ու նաև՝ դրան նախորդած ամիսների մասին: Մտածում եմ կնկատե՞մ քեզ, երբ տեղ հասնեմ: Պատկերացնում եմ ինչ քառասյին իրավիճակ կլինի, երբ այդքան մարդ գա:

Մի բան հաստատ է. առանց դժվարության կճանաչեմ: Իհարկե, տարիներ են անցել, բայց տեսքդ ինչքա՞ն փոխված կլինի, Էմի: Ա՛խ, պատկերացնում եմ հարցերի ինչ տարափով կդիմավորես ինձ: Կռահելու համար մրցանակ չեմ ուզում. Մաման ինչպե՞ս է: Վատ չէ: Պե, իրականում, լավ է: Այդպես էլ չհարմարվեց քո հեռանալու մտքին: Երբ հասկացավ, որ էլ չկաս (հիշում եմ, ցերեկվա ուղիղ 3-ն էր), ինչ-որ մեկը կարծես հսկայական ներարկիչով ընդմիջտ խլեց նրա դեմքի գույնը: Հույս ունեմ հիմա, երբ ե՛ս եմ հեռանում, կորոշի միանալ մեզ:

Այո, ամեն ինչ կպատմեմ, հենց որ տեղ հասնեմ: Չեմ մեղադրում քեզ, որ մոլորվել ես պատմությունների մեջ, որոնք գիտես կամ կարծում ես, թե գիտես. դու պատմության միայն մի մասն ես լսել: Երբ ևորից հանդիպես Մամային, խնդրի՛ր պատմել մնացածը: Այդպես ավելի պարզ կպատկերացնես: Մոտավորապես այդ ժամանակ էր. լսեցի նրա հեկեկոցն ու լուռ իջա նրանց ննջարան՝ տեսնելու, թե ինչ է կատարվում: Անկողնում էր, մեռակ, ոտքերիս մատների վրա մոտեցա, ինչպես անում էի, երբ գիշերները սիրտս խառնում էր: Չէր սպասում, որ կտեսնի ինձ:

- Հիվա՞նդ ես,- հարցրեց:

- Դո՞ւ էիր լաց լինում,- պատասխանի փոխարեն հարցրի ես:

Արագ փակեց աչքերը, որ չնկատեմ, թե ինչքան կարմրած եմ, թույլ ժպտաց ու ասաց.

- Պես քնի՛ր, առավոտյան դպրոց ես գնալու: Պես:

Ու քնաբռնեմ ուղարկեց հետ՝ իմ սենյակ: Ես հնազանդվեցի ու այլևս հարցեր չտվեցի. թեև փոքր տղա էի, արդեն զգում էի, որ ինչ-որ բան այն չէ: Երբ դուրս էի գալիս նրանց սենյակից՝ ուսիս վրայով նայելով Մամային, պատահաբար բախվեցի Պապային. զուգարանից էր գալիս: Երևի կարգին վախեցրի. ականջներիցս բռնած բարձրացրեց՝ նայելով ուղիղ աչքերիս մեջ: Չարմանալի է, թե որոշ պահեր ինչպես եմ դաջվում մեր ուղեղում. մինչև հիմա աչքիս առաջ է, թե ինչպես վեր հանեց ու մոտեցրեց իրեն: Կապույտ անդրավարտիքը: Մազոտ կուրծքը: Ոսկե շղթան՝ խաչելությամբ, որը համարյա չէր երևում կրծքավանդակի խճճված մազերի մեջ: Մորուքի մեջ մնացած կարիի մնացորդների գարշահոտը: Դեմքը: Ուղիղ ինձ նայող աչքերը: Եվ այդ ձայնը՝ բիլիարդի գնդակների պես սառը: Երբ ուշքի եկա, վազեցի վերև, արյունը տրոփում էր ականջներիս մեջ, ատամներս սեղմվել էին, աչքերս ամեն ինչ անում էին, որ լաց չլինեն: Ստա անկողին՝ բոլորին ինձ հետ տանելով սավանների տակ, ու միասին մի լավ արտասվեցինք: Համենայն դեպս կանայք լաց եղան: Քնով անցա, նրանց հետ գրկախառնված, արցունքոտ աչքերով: Երբ հաջորդ առավոտ արթնացա, ավելի լավ էի զգում:

Երբ նորից հանդիպեմք, հիշեցրու, որ ցույց տամ, թե ինչ էի անում լուցկիներով: Կոկիկ դասավորում էի կողք կողքի, երկու զուգահեռ շարքով, կարծես պատրաստվում էին պատերազմի: Կամ ռեգբիի հակառակորդ թիմերի պես, որոնք որոշում են, թե ով է սկսելու խաղը: Կամ դերասանների, որոնք փորձ են արել ու պատրաստ են բեմ դուրս գալու: Կամ էլ շախմատային խաղի երկու կողմի, միայն թե, իհարկե, ես շախմատ խաղալ չգիտեմ, ուստի ստիպված եմ ինքս կանոններ հորինել: Ասենք, օրինակ, մի կողմը պիտի կտրի անցնի տախտակն ու հայտնվի հակառակորդի թիկունքում՝ առանց խոցվելու, ու կհաղթի այն կողմը, որն ամենաքիչը կխոցվի:

Կարծես լրիվ այլ աշխարհ էր, Է՛մի: Չվարճալի է. երբ երեխա էիք,

Ճաղրում էինք մեծերին, որ այնպես են խոսում, ասես «ուրիշ աշխարհից» են, արհամարհում էինք ծերունիների խոսքը: Ինչքա՞ն կարող է փոխվել կյանքը՝ մտածում էինք: Բայց հետո մեծանում ես, ու թվում է՝ մանկությունը հիշողություն է, դե, այո, ուրիշ աշխարհից: Օրինակ՝ վերցնենք լուցկին. հիմա փողոցներում ինչքան ասես օգտագործած լուցկի կգտնես:

Քո վերջին ամառը, Էմի, անցկացրի օգտագործած լուցկիներ հավաքելով ու «Կոլայի» դատարկ շիշը ցնելով: Գյուղի ամեն անկյունում լուցկի կար, ու, մի՛ ծիծաղիր, դրանք ինձ երազած ընկերներ դարձան: Ամենաշատը գյուղի հրապարակում էին, ուստի ցերեկվա ժամերին խուսափում էի դրանցից ու խնայում թե՛ լուցկին, թե՛ ինձ՝ թողնելով երեկոներին: Գիտե՞ս, մարդիկ, որոնց կյանքն ամենևին էլ ափեսափ լցված չէ երջանիկ պահերով, հերոսաբար ամեն ինչ անում են, որ օրերը հևարավորինս երկար տևեն: Ինչպես, օրինակ, միայնակ տղան. անձանոթը նրան կանգնեցնում է փողոցում ու խնդրում ճանապարհ ցույց տալ, իսկ նա, ինչքան կարող է, ձգձգում է զրույցը: Կամ երբ հետածգում ես երկար սպասված պահը, որ սպասելու պատճառ լինի: Մաման այդպես էր անում, երբ ցոնած դոմիկ էր եփում: Դոմիկները կլոր շարում էր ափսեի մեջ, սկզբում կարտոֆիլն էր ուտում, հետո ուշադրությունը ծոկորեն դարձնում դոմիկներին՝ սկսելով վերևի համեղ «կեպիներից»: Հիշո՞ւմ ես խրթխրթան դարչնազույն միջուկով կեպիները: Ա՛խ, ի՛նչ եմ ասում: Երևի հազիվ ես հիշում, թե ե՛ս ինչ տեսք ունեի, էլ չասած՝ ցոնած դոմիկները: Արի ճիշտը խոսենք, դժվար թե ժամանակ ունենայիր ինձ ճանաչելու: Հաստատ ինձ շատ չէիր կարտոտում, Էմի: Ես այդպես էլ չդարձա քո երազած եղբայրը: Եվ ընդհանրապես, ոչ մի հարցում առանձնապես չէի փայլում: Առհասարակ ոչ մի դրական կողմ չունեի: Այդքան տարի ոչ մի ընկեր չունեցա: Ոչ ոք երբեք ինձ խաղի չհրավիրեց: Կամ ընթերցելու, կամ պատարագի: Կամ ժողովին դրոշ բարձրացնելու: Ոչ մի բան: Ամեն տարի Սուրբծննդյան ներկայացում էինք կազմակերպում, ու ոչ մի անգամ ոչ մեկի մտքով չէր անցնում, որ գուցե ես էլ, գուցե ես էլ ուղղակի ուզում եմ մասնակցել, նույնիսկ եթե դերակատարը չի խոսում, ուղղակի ամենի մաս զգալ: Արագ իմացա կյանքում իմ տեղը: Առավել ևս՝ քո ծնվելուց հետո: Մեզնից ոմանք ծնվում են, որ կյանքին կողքից կայեն,

մյուսներն էլ կենտրոնական դեր են զբաղեցնում: Ես, անշուշտ, առաջին խմբում եմ: Ուղղակի փորձում եմ բացատրել, թե ինչու էի ամբողջ ամառ զբաղված օգտագործած լուցկու հատիկներ հավաքելով:

Ինչպես արդեն ասացի, այն տարիներին ամեն տեղ կարելի էր հատիկներ գտնել: Տան շենին, նստարանների մոտ, եկեղեցու կողքին կամ լեյբորիստական կուսակցության ակումբի դիմացի մայթին: Գիտեի, որ ներսում ավելի շատ կա, բայց չէի համարձակվում ներս մտնել՝ վախենալով, որ ավելի մեծ երեխաները դուրս կչարտեն կամ կխլեն շիշը: Միայն մի անգամ ներս գնացի, Պապայի հետ, երբ մեր հարազատներն այցի էին եկել, ու սառնարանում խմիչք չէր մնացել: Այդ ժամանակ էլ գտա Սիլվանային:

Ամեն գիշեր, երբ լուցկու հատիկ այլևս չէր մնում, շիշն ամուր բռնած շնչակտուր վագում էի տուն տանող կարճ ճանապարհով: Թռչում էի ուղիղ անկողնու մեջ, ու հենց այդտեղ էլ սկսվում էր զվարճանքը:

Սահճակալիս տակ ցախավել էի պահում, որ վրան անկողնային սպիտակեղեն կախ տամ ու վրան սարքեմ: Բարեբախտաբար, Մաման միշտ երկու կողմից ծալում էր սավաններս, որ ձիգ լինեն, ու ցախավելը չէր ճոճվում: Հետո վառում էի լապտերը, որ Կարմենան էր տվել իմ առաջին Հաղորդությանը, և մեկ առ մեկ ծանոթանում նոր լուցկիներիս հետ, նրանք էլ ինձ էին ճանաչում: Տխուր է, բայց փաստ. այդպես անցկացրի քո վերջին ամառը, Էմի, ծանոթանալով օգտագործած լուցկիների հետ:

- Լավ, նախ ծանոթանանք: Այ, օրինակ, դո՛ւ: Անունդ ի՞նչ է:

- Մանունել:

- Մանունե՞լ: Ըհը՛, նորից: Մանունել արդեն ունեմ: Չի՞ կարելի քեզ ուրիշ անուն տալ: Փռի մոտակայքում բոլորիդ անունը Մանունե՞լ է, ինչ է:

- Մենք նրան Լեյի ենք կոչում,- սրամտեց ինչ-որ մեկը:

- Լավ, որոշված է: Դու Լեյին ես: Իսկ դո՞ւ: Հենց դու: Այդ ո՞ր ես վագում:

- Ես Ջոնաթանն եմ:

- Իսկ դու՞:

- Սթեֆանիս: Փորձիր արագ ասել «Սթեֆանի»: Դա էլ ես եմ:

Ու մինչ կհասցնեի, նրանք արդեն շատախոսում էին: Հարցնում էին

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

ինձ՝ հանդիպել՝ եմ իրենց ընտանիքից որևէ մեկին, ու սենյակը լցվում էր նրանց անուններով: Յուզադրում էին իրենց՝ ծոմովելով ամենատարբեր անհավանական ձևերով ու հարցնելով՝ կարո՞ղ եմ կրկնել: Ոմանք ասում էին, թե հարմարավետ կյանքով եմ ապրում լուցկու տուփերում: Մյուսները բարձրաձայն բողոքում էին, որ կլաուստրոֆոբիա ունեն ու հազիվ էին շարժվում: Եվ իհարկե, ի վերջո պատմում էին, թե ում հետ էին, երբ իրենց օգտագործեցին ու դեն նետեցին:

- Իմը մի սիգարետ էլ չէր կարողանում վառել: Թողեց, որ մինչև ծայրը վառվեմ: Տե՛ս, թե ինձնից ինչ է մնացել:

- Ինձ վառեց սպիտակ կիսաշրջագետսով բարձրահասակ աղջիկը, Լյուսիի հարևանությամբ է ապրում: Դե, պրոֆեսիոնալ է, վառեց թե չէ, ներս քաշեց սիգարետի ծուխը, երկու անգամ թափ տվեց ու դրեց սեղանին: Այդքան բան. ամեն ինչ վերջացավ, չհասցրի էլ մի քիչ տաքանալ:

- Ես չ...չկարողացա ինքնուրույն վառվել,- կակազում էր Ռուզենը՝ բարձրահասակը:- Մի թեթև կայծ տվեցի, հետո լրիվ հանգա: Այնքան բարկացավ, որ ինձ խցկեց...

- Ո՞ր,- հարցրին բոլորը:

- ... ակ... ակա՛նջը,- փնթփնթաց ու սկսեց լաց լինել:

- Յա՛խք,- ու բոլորը զզվանքով հետ քաշվեցին նրանից:

Սիրում էի կողքից նայել, թե ինչպես են շփվում, ճանաչում իրար: Ու ամեն անգամ, երբ Պապան վատ տրամադրություն էր ունենում ու փակի տակ պահում ինձ, շուտ էի պառկում ու բոլոր լուցկիներս շարում վրանիս տակ: Հերթով հիշեցնում էին, թե որտեղ եմ հանդիպել իրենց:

- Ուզում եմ, որ դիմավորեք Սիլվանային: Խեղճը շատ դժվարություններով է անցել: Միակն է, որ լեյբորիստական կուսակցության ակումբից է:

Քար լռություն տիրեց:

- Վստահ եմ, այնքան բան եք ուզում հարցնել նրան:

- Լավ, բայց ամենից շատ ի՞նչը քեզ ստիպեց մտնել ակումբ,- հարցրեց Ինեսը:

- Պապայի հետ էի: Մեր հարազատներն այցի էին գալու, իսկ տան խմիչքը վերջացել էր:

- Պատմիր մեզ: Պատմիր: Ի՞նչ ակումբ էր: Իմ բարեկամներից մարդ կա՞ր:

- Ամբողջ ընթացքում կանգնած էի Պապայի կողքին: Դե, բացի... բացի այն պահերից, երբ ստիպված էի մի տեղ գնալ: Չեմ ասի, թե ուր... ձեր կատակների հավեսը չունեմ:

- Զուգարան... այնտե՞ղ գտար Սիլվանային,- ճղճղաց Ռեբեկան:

- Հա, հա՛: Դրա համար էլ վրայիցդ մեզի հոտ էր փչում,- ծիծաղեց մեկը:

- Չափդ ճանաչի՞ր, խնդրում եմ,- ասաց միանձնուհին: Մենք նրան «միանձնուհի» էինք կոչում, որովհետև, իհարկե, կուսանոցի դռան շեմին էի գտել:

- Ա՛խ:

- Պարտադիր էր հիշատակել զուգարանը: Ավելի լավ է՝ պաղպաղակի մասին պատմես:

- Մինչ Պապան վճարում էր խմիչքի համար, տեսավ, որ նայում եմ պաղպաղակի սառցարանի փեղկին, ու քանի որ բարի մյուս տղամարդիկ նայում էին, իհարկե, ստիպված եղավ մեկն էլ ինձ բերել: «Վերցրո՛ւ,- ասաց,- միայն թե ո՛չ հիմար սառնաշաքարները»: Ու ի՞նչ եք կարծում ո՞րը վերցրի:

- Կապույտ սառնաշաքարը,- Ինես:

- Հիմա՛ր: Նա սառնաշաքարի մասին բան չասաց,- Մայքլ:

- Ինձ ասացիր հիմա՞ր,- Ինես:

- Լավ, վերջ, բոլորդ հանգստացեք,- ասաց միանձնուհին:

- Միայն թե չասես, որ «Շոկո-ռումբլ» ես ընտրել:

- Հենց դա:

- Այոոոոո՛,- բոլորը միաձայն ճղճղացին՝ հավաքվելով իրար գլխի, ինչպես խնջույքի մասնակից երեխաները, երբ ներս են բերում տորթը:

- Գլուխ գովելու տեղ ունես, ինչ խոսք,- Սիլվանա:

- Պատմիր մեզ, մեջն ի՞նչ կա,- Ռոուզեն:

- Ի՞նչ համ ունի,- Չարլզ:

- Ինչքա՞ն ժամանակում կերար,- ևորից Ռոուզեն:

- Զարմացած եմ, որ տակակնքը թույլ տվեց գնել:

ՊԻԵՏ Զ. ՄԵՅԼԱԿ

- Լսիր, Լեյլի: Խոսելուց առաջ մտածիր, իսկորում եմ: Ո՛չ երեխաների ներկայությամբ,- դե, պարզ է, միանձնուիկն էր:

Էմի, երևի չես հիշի, բայց «Շոկո-ռումբ» այն ժամանակ ամենալավ պաղպաղակն էր: Ու այն հաստատ չէիր ուտի հենց այնպես, ինչ-որ անկյունում թաքնված: Չէ՛, եթե «Շոկո-ռումբ» էիր ունենում, ամեն ինչ անում էիր, որ բոլորը տեսնեն: Գիտես, չէ՞, դուք՝ աղջիկներդ, ինչքան եք սիրում գեղեցիկ շորեր հագնել: Անպայման ցուցադրում եք, չէ՞: Թե չէ ի՞նչ կարիք կա հագնելու: Կարելի է հարմարավետ մարզահագուստով ման գալ: «Շոկո-ռումբ» այդ ամառ պետք էր այնպես ուտել, որ բոլորը տեսնեն: Դեռ չէի փորձել. սովորական պաղպաղակից երկու անգամ թանկ էր: Այդ գնով կարելի էր թե՛ մաստակ-պաղպաղակ, թե՛ «Ապոլլո» գնել: Կամ էլ Լույսից՝ երկու հատ: Պապան ասել էր, որ պաղպաղակ գնեմ, ու գիտեի՝ այսքան մարդու ներկայությամբ իրեն անհարմար դրության մեջ չէր դնի՝ ստիպելով, որ ավելի էժան բան ընտրեմ: Ա՛խ, Էմի, ի՞նչ պաղպաղակ էր: Գիտե՞ս, փայլուն մանուշակագույն թուղթը պահեցի, որ գիշերը սավանների տակ ցույց տամ ընկերներին:

- Տեսե՛ք, «Շոկո-ռումբի» թուղթ ունեմ: Դեռ պաղպաղակի հոտը գալիս է... մի քիչ գալիս է: Հանգի՛ստ, հանգի՛ստ: Հերթով: Ձեզ կարգին պահեք:

- Բայց ի՞նչ տեսք ունի:

- Սառնաշաքարի նման է, բայց փայտիկի շուրջը սառույցի փոխարեն շոկոլադի պաղպաղակի գունդ է՝ ծածկված մուգ շոկոլադի բարակ շերտով, կարծես Լոու լինի: Ու երբ մտածում ես, որ կերել-վերջացրել ես, գիտե՞ս ինչ է լինում:

- Ի՞նչ:

- Պարզվում է՝ միջուկի մեջ պաղպաղակ չի:

- Վաաա՛յ: Բա ի՞նչ է:

Շուրջս արմանք-գարմանք էր: Բոլորի քթից բռնած ման էի տալիս:

- Սուֆլե՛:

- Հոտ չի մնացել,- բողոքեց Տոնաթանը՝ խուզարկու շան պես հոտոտելով փաթեթը:- Բան չեն թողել: Այ էդպես է, միշտ վերջին եմ հասնում:

Կկարծես, թե հիմարություն եմ ասում, Էմի, բայց իսկապես կարոտում

եմ: Երջանիկ ժամանակներ էին. մեծ ուրախությամբ հետ կգնայի. իհարկե, եթե չլիներ այն, ինչ եղավ հետո: Ընկերախումբս ինձ պարզեց երջանկության համը, որը երբեք չէի զգացել: Վստահ եմ, հիշում եմ՝ ինչպես էինք ամբողջ տևով քարշ տալիս «Կոլայի» շիշը, չէ՞: Ու հաստատ հիշում ես այն ճակատագրական օրը կամ շաբաթը, գյուղի փառատոնից հետո, երբ քահանան Պիցցայի երեկո կազմակերպեց, երբ ծեր կանայք յուղոտ մկրատով պիցցայի կտորներ էին կտրում: Աչքդ չէիր կտրում իմ «Կոլայի» շիշը, հիշո՞ւմ ես: Ուզում էիր, չէ՞: Իմացիր, Էմի, այդ «Կոլայի» շիշն իմ կյանքն էր, իմ աշխարհը: Բոլոր ընկերներս շի մեջ էին: Ստըովս էլ չէր անցնում բաժանվել նրանցից: Խնդրում եմ, հասկացիր: Մի ամբողջ սենյակ լիքը խաղալիք ունեիր, լողում էիր բոլորի ուշադրության մեջ: Ու նաև գիտեիր՝ ինչպես ստանալ ուզածդ. բարձր ճշում էիր ու մատդ մեղադրական տևկում վրաս՝ միաժամանակ նայելով Պապային: Ու ինչքան շատ էիր տեսնում, որ խուճապի եմ մատնվում, կառչում շից ու փորձում կորչել բազմության մեջ, այնքան ավելի բարձր էիր ճշում՝ ուզո՞ւմ եմ, ուզո՞ւմ եմ, ի՞մն է, ի՞մն է, նա խլե՛ց, խլե՛ց ինձնից: Ու, իհարկե, Պապան, ինչպես միշտ, քո կողմից էր, ու այնքան ուժեղ խփեց ինձ, որ ընկա՜ շիշն ատամներով պահած: Դե, ասա, հիշո՞ւմ ես, Էմի: Պետք է որ հիշես. ինչպե՞ս կարելի է մոռանալ, թե ինչ չարությամբ կձեցի նրան, երբ կռացել էր՝ շիշը խլելու:

Վստահ եմ հիշում ես այդ ահարկու երեկոյին հաջորդած երկու ամիսը: Երկու ամիս անցկացրի փակի տակ, սենյակիս հատակին պառկած, վարագույրների հետևից պատուհանից նայելով: Նայում էի ու երագում թռչնի պես ծառից ծառ ցատկոտել կամ թեկուզ ծաղիկ լինել, ինչպես մեր հատակի սալիկներին նկարված ծաղիկները. յուրաքանչյուրի համար անուն էի հորինել, բայց չգիտես ոնց, ի տարբերություն լուցկիների, նրանք երբեք չէին պատասխանում ինձ: Մի քանի ժամ անցկացրի սենյակում, փակի տակ, անհանգստացած, թե ինչ եղավ իմ անգին լուցկիներին, իմ սիրելի ընկերներին: Սիլվանային: Չարլզին: Ռոուզենին: Ռեբեկային: Ինեսին: Միանձնուհուն: Ի՞նչ աղբարկղում հայտնվեցին: Հասկացա՞ն, թե հանկարծ ինչ պատահեց իրենց ու ինձ:

Բայց դու տեղյակ չես. այդ ահարկու շաբաթների ընթացքում նոր ըն-

կերևեր եկան իմ սենյակ, որ մենակ չմնամ: Իսկ թե ինչպես եկան, իսկապես հրաշալի պատմություն է: Մեր հարևան Կարմենան, դե, նա, որ ինձ լապտեր էր տվել առաջին Հաղորդության համար, հաճախ էր այցի գալիս ու ամեն անգամ, որպես բարեպաշտ կաթոլիկ, մի սանտա էր թողնում, փոքրիկ էջանիշ, որ բարեկամներն են բաժանում թաղման արարողություններին: Հակառակ երեսին հանգուցյալի նկարն էր ու աղոթք: Բերում էր, որ աղոթք ասեմ ու ժամանակ սպանեմ:

Մի անգամ սանտա բերեց ծեր կնոջ լուսանկարով. այնքան գերվեցի, որ էլի խնդրեցի: Շուտով մահճակալս վերածվեց սրբավայրի. գիշերը քնում էի՝ շրջապատված մեռյալների լուսանկարներով, յուրաքանչյուր տղամարդու կամ կնոջ նկարի տակ կոկիկ տպած էր՝ անուն, ծննդյան թիվ, ծննդյան և մահվան տարեթիվ, ինչպես նաև բոլոր բարեկամների ցուցակը, որոնք պիտի ողբային նրանց կորուստը՝ «սգալով ու արտասվելով արցունքների հովտում»: Օրինակ՝ «նրա ամուսին Տուգեպպին, երեխաները՝ Մարիան, Նարդուն և Միկիելին, նրանց ամուսիներն ու կանայք, նրանց թոռները, ուրիշ բարեկամներ և ընկերներ»: Գիտեմ, հնացած կատակի պես է հնչում, Էմի, բայց հիշում եմ, մտահոգվում էի, թե ինչու բոլոր գեղեցիկ վայրերից հենց այս մահաբեր «արցունքների հովիտն» էին ընտրել:

Ձանազան սանտաներ ունեի՝ աղոթքների ու սրբերին հղված խնդրանքների բազում տարբերակներով: Քանի որ լուցկիներն արդեն հավերժ կորած էին, սանտաներ հավաքելը շուտով դարձավ իմ հոբբին, և սկսեցի թաքցնել մահճակալիս տակ: Ժամերով զբաղվում էի դրանցով՝ հիմա էլ ընկերանալով իրական մարդկանց հետ: Օրինակ՝ Լուսյատա Սուերեբի: Օրինակ՝ սգալու համար նրա կորուստն ամուսնու՝ Կարմուտի, և զարմիկի՝ Տրիստանի հետ: Լուսյատան մի անգամ ինձ պատմեց, որ զարմիկն ուզում էր ճարտարապետ դառնալ, ու ես խոստացա, որ երբ տնից դուրս գամ, կփնտրեմ նրան: Կամ Միքայել Կամիլլերիի, որը մահացավ ծննդյան վաթսունհինգամյակին: Կամ Մարիա Տիովաննա Գրիմայի. հենց Վերափոխման տոնին, որ ամառվա կարևորագույն իրադարձությունն էր, ինևսունամյա պատկառելի տարիքում գնաց Արարչին հանդիպելու: Եթե փակեմ աչքերս, հստակ կտեսնեմ Մարիա Տիովաննային ու

նրա սանտան: «Ընդմիջտ՝ մեր սրտերում և աղոթքներում. երեխաները՝ Կարմենան, Ջարենան և Պիետրուն, նրանց ընտանիքները, թոռները, ծոռները, բարեկամներն ու ընկերները»: Տեսնո՞ւմ եմ՝ բառ առ բառ հիշում եմ: Կամ Տերեմի Միֆսուդը, որը գոհ գնաց ողբերգական ավտովթարին, շատ երիտասարդ տարիքում՝ ընդամենը քսանինևնու: Լուսանկարում հանդուգն երիտասարդ տղա էր՝ պիրկ շուրթերով, որոնք ասես կարված լինեին, ծեռքին մոտոցիկլետի կարմիր սաղավարտ, հագին սև կաշվե բաճկոնակ: Մարիա Տիովաննան կարծում էր, որ նրանք լողափին են լուսանկարվել: Ֆրեդուն (միակը, ում պատահաբար նկարել էին ժպտալիս), վստահ էր, որ լուսանկարում Տերեմին հենց նոր է դուրս եկել ցնցուղից ու պատրաստվում է հանդիպել ընկերներին: Կամ ընկերուհուն, որ արագ համբուրի, ինչպես ասաց մեկ ուրիշը: Բայց Տերեմին երբեք չէր ասում: Այնքան՝ գոռոզ տղա էր: Երբեք ոչ մեկի հետ չէր խոսում:

Հետո Ալիստերն էր, որը, անկեղծ ասած, կնոջ տեսք ուներ: Ըստ նրա սանտայի՝ մահացել էր, որովհետև Մանուկ Հիսուսն ուզում էր, որ ամենագեղեցիկ ծաղիկն իր մոտ լինի, երկնքում: Դրա համար էլ անունը դրեցինք «Ծաղիկ»: դրանից սաստիկ բարկանում էր:

Բերտուն միշտ շրջում էր փակ աչքերով՝ անընդհատ փնթփնթալով. հերիք չէ մահացել էր պատահարից, դեռ ինչ-որ մեկն էլ նրան հավերժացրել էր՝ որպես Ալբերտ, ոչ Բերտու, ու նա չէր հասկանում, թե իր բոլոր լուսանկարներից ինչու էին հենց սա ընտրել, որտեղ փակ աչքերով էր:

Որոշ աղոթքների դարձերեսին բանաստեղծություններ կային: Ի՛նչ ուշադիր էինք կարդում, հատ-հատ, ինչպես փոքրիկ երեխաներն են աղոթքն անգիր անում, իսկ հետո պայթում էինք անվերահսկելի ծիծաղից:

Այս պատմության սկզբից օրեր անց Մարիա Տիովաննային նշանակեցի գլխավոր պրեֆեկտ, ուստի կարող էի ասել, որ նա իրական առաջնորդ էր: Գուցե ակնհայտ այլանդակությունը, դեմքով մեկ տարածված մազերը մայրական ու ազդեցիկ տեսք էին հաղորդում նրան: Վանող, աղավաղված, կնճռոտ դեմք ուներ, քիթը, ինչպես ասում էր Ծաղիկը, կարծես ջարդած ընկույզ լիներ, ընդ որում՝ ջարդողը կյանքում առաջին անգամ էր արել այդ գործողությունը: Այո, այդպիսին է Ծաղիկը, միշտ պատրաստ մեկնաբա-

նություն անելու: Աչքը չէր կտրում Տերեմիից՝ իր սաղավարտով:

Երբ Կարմենան տվեց բոլոր սանտաները, սկսեցի անհամբեր սպասել, թե եկեղեցու զանգերը երբ կհնչեցնեն տրապիսսարը՝ ծանր, տխուր սգերգը. նշանակում էր՝ շուտով նոր սանտա եմ ստանալու, ու մի նոր ընկեր է միանալու մեր խմբին: Եվ ամեն անգամ, երբ նոր հյուր էի ունենում, առաջին գիշերը ներածական հարցազրույց էինք ունենում:

- Քո անսահման գթասրտությամբ, Հիսո՛ւս Թրիստոս, խնդրում եմ, ան Փոլ Ֆարրուչիայի հոգին, որին քեզ մոտ կանչեցիր հիսուն տարեկանում:

-Ողջո՛ւյն, Փո՛լ: Նախ մի քիչ հանգստացիր. շատ հոգևած կլինես: Կարթնացնեմ, երբ երեկոյան պառկեմ, լա՛վ: Հրաշալի օր ես ընտրել՝ մեզ միանալու համար: Կտեսնես, շատ ուրախ կանցնի:

Սպասում էի գիշերվան, պատրաստվում էի պառկել, հարցազրույց վերցնել մեր նորեկից ու սկսել ըննությունը:

- Հարց համար մեկ: Ավարտի՛ր նախադասությունը. ինչպե՞ս կհատուցեմ իմ հանդեպ Տիրոջ անսահման բարության դիմաց:

Թիկ-թակ: Թիկ-թակ: Թիկ-թակ:

- Ժամացույցը թկթկում է: Դե, դե: Ո՞վ կասի:

Թիկ-թակ: Թիկ-թակ: Թիկ-թակ:

Բոլորը լարված կրծում են եղունգները, բացի Տերեմիից. ձևացնում է, թե մի կողմ քաշված՝ երազում է ընկերուհու մասին:

- Ես գիտե՛մ, գիտե՛մ,- հանկարծ բղավեց Վիկտորիան՝ քաղցկեղով հիվանդ բրիտանուհին,- ...ես կբարձրացնեմ փրկության գավաթը ու կկանչեմ Տիրոջ անունը:

- Սխա՛լ է,- մեջ ընկավ Գրեգգյուն:- Բոլոր հավատարիմներին՝ հավերժական կյանք:

- Բայց դա ընդհանրապես ի՞նչ կապ ունի,- ու նրանք մի լավ ծիծաղեցին:

Այդ գիշերները դարձան կյանքիս մի մասը, մինչև... մինչև հանկարծ գյուղում այլևս ոչ ոք չմահացավ: Նշանակում էր՝ մեր խմբին նոր մարդիկ չէին ավելանում, մեր զրույցներն էլ սկսել էին կորցնել համուռոտը, ուստի անհարմար լռություն տիրեց: Այլևս մարդ չէ՛ր մնացել, որ մեռներ: Իսկ

տխրահոջակ «արցունքների հովտում» ապրողները, մի՞թե բոլորը հեռացել էին, ուրիշ վայր տեղափոխվել: Նոր սանտա պատրաստեցի: Յուրաքանչյուր նոր օր հույս էր տալիս, որ նորից տրապիսսար կլսեմ: Բայց չէ, ոչինչ չկար: Եկեղեցու զանգերը լուռ էին: Ոչ ոք չէր մեռնում: Ու անկեղծ ասած, վրանի տակ մեր փոքրիկ հավաքներն արագ դառնում էին ձանձորայի: Ընկերներիցս ոմանք այլևս ասելիք չէին ունենում, և, իհարկե, ոչինչ չէին ասում: Մեզ թարմ արյուն էր պետք: Ու ես սկսեցի խուճապի մատնվել՝ մտածելով, որ եթե շատ արագ ինչ-որ բան չպատահի, մեր խումբը կքայքայվի, ու ես նորից մենակ կմնամ, ինչպես այն ժամանակ, երբ Պիցցայի ճակատագրական գիշերն ինձնից խլեցիր լուցկիների շիջը:

Հենց այդպես էլ, Էմի, ծրագիր մտածեցի: Ճաշի ժամին, խոհանոցում: Հիշում եմ Պապան Մամային պատմում էր, որ բրեկետների կարիք չկա, քանի որ հավասար ատամները ոչ մի կերպ չեն մեղմի իմ տզեղ տեսքը: Մաման պնդում էր, որ անհապաղ պետք է տեղադրել. ինչքան շատ սպասենք, այնքան դժվար կլինի ուղղել ատամները: Նայելով նրան ու ևս մի գդալ սառը, պնդացած կարտոֆիլի խյուս կծոտելով՝ նկատեցի, թե ինչ հիացմունքով է նայում քեզ, Էմի: Նույնիսկ երբ քթի տակ փնթփնթում էր Մամային, որ փողը ծառերի վրա չի աճում:

Բայց ես չէի կարող հոգ չտանել ատամներիս համար: Ժպտացի. ծրագիրը լրիվ ձևավորվել էր մտքումս: Հանկարծ հասկացա, թե ինչպես փրկեմ ընկերներիս խումբը՝ ևս մի նոր անդամ բերելով... ու այն էլ ի՛նչ անդամ: Ընդամենը երկու գիշեր անց, վրանի տակ սքանչելի խնջույք կազմակերպեցինք: Նույնիսկ նրանք, ովքեր վերջերս լուռ էին, հանկարծ հագար ու մի հարց մոզոնեցին: Փորփրեցի գրպաններս ու գտա «Առավոտյան սուրճ» թխվածքաբլիթների մի փաթեթ խոհանոցից, ու մենք ցնձությամբ կիսեցինք: Եվ Տերեմին, որ հավանաբար որոշ բաներ գիտեր անկումների մասին, հանկարծ հուզվեց. մեզ պատմում էիր, որ քեզ թվաց՝ ինչ-որ մեկը տակիցից քեզ հրեց հորանը, ու երրորդ հարկից բերանքսիվայր ընկար բակ:

ՆՈՐԻԱ ԱՆՋԵԼԱ ԲԱՐՐԵՐԱ

Nuria Angels Barrera

Առաջին անգամ գրքի օրինակը ձեռքին, մեծ ու փոքր արծաթե շեփորների ոլորագծերով եզերված շապիկին տեսնելով իր անունը՝ մարմնով հուզմունքի անձանոթ դող անցավ: Այդպես լինում է, երբ վաղուց փափագած մրցանակ ես ստանում: Միգուցե: Կամ ինչ մայրն է զգում մաքուր-լվացված մանկանը գրկելիս: Կամ նույնիսկ, հիմա, քրքրելով իրեն ավելի ծանոթ իրավիճակները, դողը, որը դպրոցական ընկերուհիները հաստատ զգում էին դարպասից այն կողմ իրենց բարետես ընկերների հետ համբուրվելիս, իսկ ինքը նայում էր ու մտածում, որ մի օր ինքն էլ կհամբուրվի: Այսօր, տրամվայով տուն գնալիս, Նուրիա Անջելա Բարրերան իրեն թույլ տվեց ժպտալ, երբ բացեց «Els Dos Trompetistes»-ը և սկսեց կարդալ նախաբանը:

«Մեր գերեզմանը ամենանախանձելին է գերեզմանատանը: Մյուսներին հերիք է միայն ոչ մի բանով աչքի չընկնող մի արձան՝ մարմարե «Հարությունը» կամ լավագույն դեպքում Պիետայի պատճենը: Մեր գերեզմանը զարդարում են շեփոր փչող հինգ-վեց քերովբե: Չէ, ավելի շատ են: Ութ մանուկ-հրեշտակ, ինչպես օկտավան: Նոտաները բավարար են անթիվ-անհամար վարիացիաների համար, ուստի մեր հրեշտակները մի ամբողջ հավերժություն կնվագեն ու երբեք չեն կրկնի նույն մեղեդին: Համենայն դեպս մայրիկը միշտ ասում էր՝ երեխան չպիտի հարցնի, թե ինչպես: Եթե մայրիկն ասում է, ուրեմն այդպես էլ կա»:

Դարձյալ հիշեց երկու շեփորահարի պատմությունը, որը նրան հեռու տարավ իր ուղեկիցներից, տարավ վեր, ինչպես այն օրը, երբ առաջին անգամ լսեց: Ամուսնու մահից մեկ տարի անց էր: Այդ օրը ինչ-որ բան նրան տարօրինակ կերպով տարավ ձեղնահարկ՝ ամուսնու առանձնավայրը.

նրա կյանքի կատարյալ փոխաբերությունն էր՝ անհասանելի, գաղտնիքների պահոց, որոնք անհայտ էին կնոջն ու միշտ անհայտ էին մնալու: Մինչև այդ օրը զսպել էր այնտեղ բարձրանալու ցանկությունը:

Ձեղնահարկը գրքերով ու թերթերով լի արկղերի լաբիրինթոս էր, ու ամեն ինչ պտտվում էր կենտրոնում դրված մեծ սեղանի շուրջը: Եվ մի աթոռ, որի նստատեղը քսան տարի մշտական օգտագործումից հետո ընդունել էր տիրոջ մարմնի ձևը: Կինն ուսումնասիրում էր գրքերը՝ զննելով փոշոտ կազմերը, երբ մի կողմում թերթերի տրցակ նկատեց:

«Ուրիշ մարդու ներսում ապրելն առավելություններ ունի. ականջ ես դնում նրա յուրաքանչյուր մտքին: Այդպես իմացա, որ հորեղբորս և հորս երկրպագուները վճարում էին մեր շեփորահար հրեշտակներին: Եվ որ մեր գերեզմանը շքեղ էր ու քառահարկ, ոչ թե սովորական եռահարկ: Մեր բախտը բերեց, չէ՞, որ չորսով միանգամից տեղավորվեցինք, բայց նայնպես ստիպված էինք մայրիկի հորեղբայրների ոսկորները հավաքել սև տոպրակների մեջ, որ տեղ ազատվի: Երբեմնի հպարտ ու թմբկի տղամարդիկ հիմա վերածվել էին կույտի՝ տառաջիորեն ոտուզուխ»:

Նուրիան գլխի ընկավ, որ կարդում է ամուսնու հստակ, նրբագեղ ձեռագրով գրած վեպի առաջաբանը: Վեպի՝ Իսկապե՛ս մի ամբողջ գիրք էր գրել՝ առանց կնոջը մի թեթև ակնարկելու: Նա գիտեր ամուսնու երկու կրքի մասին. գաղտնիքներ և գրքեր: Բայց առանց կնոջը տեղյակ պահելու գիրք գրելը լրիվ նոր պատմություն էր: Հանկարծ հասկացավ, թե ինչին էին նվիրված անվերջ ժամերը, որոնք անցկացնում էր ձեղնահարկում, փակ դռան հետևում: Իրեն թույլ տվեց ժպտալ՝ մտածելով բոլոր հարցերի, կասկածների ու սցենարների մասին, որոնք ուրվագծվում էին ամեն անգամ կեսգիշերին արթնանալիս և պարզելիս, որ նա նորից փակվել է: Իր անգին ձեղնահարկում:

Վեպը երկու շեփորահար եղբայրների մասին է, որոնք դարձան ազգային հերոսներ: Նրանց երաժշտությունն աննախադեպ ճանաչում էր բերել երկրին, ու եղբայրներն իրավամբ համարվում էին աշխարհի լավագույն երաժիշտները. բնատուր ձիրքի շնորհիվ իրավիրվում էին՝ նվագելու լավագույն միջազգային նվագախմբերի հետ, աստղային հանդիսատեսի

համար: Մինչդեռ կյանքում առաջվա պես պարզ ու զուսպ էին, կարծես դեռ նվագում էին գյուղի նվագախմբում: Գուցե դա էր պատճառը, որ ամբողջ երկիրը, որը վեպում անուն չուներ, թաղվեց սգի մեջ, երբ զոհվեցին ավտովթարից: Երկրի երկու ամենապայծառ աստղերը մարեցին: Ի՛նչ դաժան էր: Ողբերգությունն էլ ավելի սրվեց, երբ հայտնի դարձավ, որ ավտովթարից մահացել է ավագ եղբոր կինը՝ չձևված երեխայի հետ:

Կորած մանուկը՝ դուստրը, պատմողն է. նա խոսում է գերեզմանից և մոր արգանդից: Միայն երիտասարդ աղջկան հատուկ նախաստեղծ անմեղությամբ՝ նախ տղամարդկանց ներկայացնում է որպես կատարյալ եղբայրներ: Պատմության երկրորդ կեսում, ինչպես հաճախ պատահում է գրականության մեջ, աստիճանաբար արմատավորվում են անբասիր եղբայրական հարաբերությունների շուրջ կասկածները: Առեղծվածը սկսում է բացահայտվել, երբ աղջիկը գլխի է ընկնում, թե ինչ թաքնված ենթատեքստեր կային, ինչ կրթեր էին եռում ընտանիքում հղիության վերաբերյալ առաջին երջանիկ արձագանքից հետո: Գիշերն ամուսնու կողքին պառկած մոր մարմնի սարսեցնող անշարժությունը: Ի տարբերություն դրա՝ տարօրինակ ջերմությունը, որ զգում էր ամեն անգամ, երբ հորեղբայրը դեմքը մոտեցնում էր մոր որովայնին ու ձեռքով շոյում, սահեցնում վրայով, որ զգա աղջկա ոտքով խփելը: Փոքրիկն էլ որքան շատ էր զգում նրան, այնքան հուզված էր քացի տալիս. չձևված երեխայի ծիծաղը: Այն դաժան գիշերն էլ ճիշտ այդպես եղավ: Հետևի նստարանին նստած՝ ամբողջ ուղևորության ընթացքում բռնել էր նրա ձեռքը, ու աղջիկը հաճույքով սեղմել էր այն: Ավագ եղբայրն ավելի ու ավելի կատաղի էր քշում, անկանոն փոխում էր արագությունը, արցունքները հոսում էին, ցավն ու վիշտը՝ լուռ ավելանում: Այդպես ընդհուպ մինչև վթարի պահը:

Նուրիա Անջելս Բարրերայի աչքերում էլ արցունքներ հայտնվեցին, երբ հիսնամյա կատալոնացի այրին կարդաց վերջին էջը: Նա վստահ էր. ամուսինն ամբողջական պարբերությունները գրել էր՝ մտքում իր պատկերը պահած: Օրինակ՝ այն հատվածները, որտեղ նկարագրում էր երաժիշտների մորն ու առօրյա կյանքով նրա տարվածությունը. ասես իր մասին լիներ: Կամ այն հատվածը, որտեղ ավագ եղբայրը գայթակղում է ապագա

կնոջն այնպես, ինչպես մի կյանք առաջ ամուսինն էր սիրահետում նրան, ամենայն մանրամասնությամբ: Եվ նրա ծայրը հնչում էր տարբեր արտահայտություններում հիշեցնելով, թե ինչից էր սիրում խոսել: Մի տեսարան՝ գերեզմանոցում կազմակերպված համերգն ի հիշատակ եղբայրների, նրան հիշեցրեց, թե ինչպես էր ամռան երեկոներին այգին լուսավորում կարմիր լապտերներով: Նրանց ամուսնության առաջին տարիներն էին: Այն գիշեր, երբ անկողնում ավարտեց ծեռագրի ընթերցումը, վերաբժևորեց ամուսնու ձախողումը որպես տղամարդ, իր տղամարդ՝ ի տարբերություն նրա գրողական հանճարի: «Այդպես էլ պիտի լիներ», - մտածեց:

Հաջորդ առավոտ Նուրիան վերադարձավ ծեղահարկ՝ վճռելով ավելի լավ հասկանալ ամուսնուն, որի կողքին քնել էր երեսուն տարի: Շուտով բախվեց մի բանի, որին այնքան էլ չէր ուզում առերեսվել: Լուսանկարներ: Տասնյակներով, բոլորի մեջ՝ նույն կինը, յուրաքանչյուր գրքում՝ առնվազն մեկ լուսանկար: Ներքին ծայրը ճիշտ հուշեց, թե ինչ կա ոլորագույն-կանաչ ծրարներում լեհական հետադարձ հասցեով, որը ստանում էր մի քանի ամիսը մեկ: Հետո նամակները գտավ: Հավանաբար լեհերեն, բայց դրանց գոյությունն իսկ ամենադաժանն էր և սրբում-տանում էր խաբկանքը, թե վերքը կդարմանվի ամուսնու մահից և առավել ևս, իրենց ամուսնության վախճանից հետո:

Նուրիան նայում էր լուսանկարներին՝ ասես ստիպելով, որ դրանք բացահայտեն գաղտնիքը. ինչո՞վ էր կինը գերել իր ամուսնուն: Անկասկած, Նուրիայից ավելի գեղեցիկ էր, բայց ոչ այնքան շլացնող: Լուսանկարներում, որոնք խաղաքարտերի պես կոկիկ շարված էին ժամանակագրական հերթականությամբ, կնոջ տարիքն ու փոփոխությունները երևում էին տարբեր ձևերով: Խորապատկերները նույնպես փոխվում էին. օրինակ՝ մի լուսանկարում նրան շրջապատում էին, ըստ Նուրիայի ենթադրության, երեխաներն ու թռուները: Բայց կնոջ դեմքի արտահայտությունը՝ ակնդետ հայացքը, որ լուսանկարչից փոխանցվում էր դիտողին, երբեք չէր փոխվում:

Մի քանի շաբաթ լուսանկարներն ուղեկցում էին նրան: Հետևում էին, երբ համբերատար, էջ առ էջ մեքենագրում էր ամուսնու ծեռագիրը՝ քաջ

գիտակցելով, թե ինչքան գաղտնիքներ դուրս կգային նամակներից, եթե հնարավոր լիներ թարգմանել: Պատկերացնում էր սիրո խոստովանությունները, հիշողությունները, ծրագրերն ու ցանկությունները, որոնք հեղեղի պես կհորդեն նամակներից: Բայց դեռ ոչ, դեռ ժամանակը չէ: Երբ մեքենագրում էր առաջին էջը՝ գրքի վերնագիրն ու հեղինակի անունը, հանկարծ աչքի առաջ եկավ ամուսնու դեմքը. պատկերացրեց՝ ինչպես էր պայծառանում ամեն անգամ, երբ Լեհաստանից ծրար էր գալիս: Ու ինչ արագ էր սլանում վերև՝ պատասխանելու: Ստաճեց, թե ի՛նչ ստեր է ասել իրեն, ու վերնագրի տակ գայրացկոտ ու հախուռն մեքենագրեց՝ ՆՈՒՐԻԱ ԱՆՏԵԼԱ ԲԱՐՐԵՐԱ: Ամբողջը խնամքով տեղավորեց ծրարի մեջ, զգույշ փակեց և ուղարկեց գործակալին, որին ինչ-որ մեկն էր առաջարկել: Նա կկարդա, կհավատա գրքի ներուժին և կիրավիրի իրեն. ամենաքիչը դա էր ակնկալում:

Հանդիպեցին գործակալի գրասենյակում Բարսեղյունի արվարձանային կոր թաղամասում:

- Հրաշալի: Հրատարակիչները ձեռքից ձեռք կխլեն: Ձեր առաջին գրական փորձն է, ճի՞շտ է:

Նրա դիմաց նստած կինը հաստատեց գործակալի ենթադրությունը. մատները նյարդայնացած խաղում էին զգեստի փեշի հետ:

- Հույս ունեմ՝ արդեն աշխատում եք հաջորդ վեպի վրա:

Els Dos Trompetistes-ը հրատարակվեց սեպտեմբերին և փայլուն հաջողություն ունեցավ՝ սպառվելով ընդամենը մի քանի ամսում: Շատախոսների դասասենյակներում գիրքն ամսվա ամենահամեղ պատառն էր, և Նուրիա Անջելա Բարբերան մի ակնթարթում դարձավ պարտադիր ընթերցվելիք հեղինակ: Նրա գործակալը, հրատարակիչը և ընթերցողները բուռն ոգևորության մեջ էին: Երանի ծնողները ողջ լինեին. ի՛նչ գոհ կլինեին, ինչքան կհպարտանային դստրիկով: Կյանքը մինչև օրս ժլատ էր եղել հիշարժան իրադարձությունների առումով. երեխա չուներ, տունը պատկանում էր ամուսնուն, հարսանեկան արարողությունը նման էր այդպես էլ չկայացած մանկական խնջույքի, որևէ նշանակալի գործ չուներ: Ոչ էլ հոբբի, որ արժանանար սերունդների ուշադրությանը: Ի՞նչ մնաց: Իհարկե, երա-

զանքները: Միայն թե դրանք ժամանակի ընթացքում նվաղում ու խամրում էին, ինչպես միշտ, միայն սուվեր թողնելով նրա հոգում:

Հրատարակիչները վերահրատարակումս ուղեկցեցին ագրեսիվ մարքեթինգային արշավով, որը հանգեցրեց ցանկալի, ժամանակով փորձված արդյունքի: Իսպաներեն թարգմանության իրավունքները խլեցին, Los Dos Trompetistas-ը հրատարակվեց հաջորդ տարի, և գրքի հաջողությունը, անշուշտ, կրկնվեց ամբողջ երկրով մեկ՝ հիացական մեկնաբանությունների արժանանալով Մադրիդում: Սկսվեց մրցանակների շղթան, և նա հայտնվեց հեղինակավոր «Տոգեպ Փլա» մրցանակի հավակնորդների ցուցակում: Խոշոր ու առաջադեմ թերթերում քննադատների հրապարակած կարծիքի համաձայն՝ Նուրիա Անջելա Բարրերայի դեբյուտային վեպն արժանի էր մրցանակի: «Հուզիչ գիրք է, խաբուսիկ պարզությամբ, որ թեթև քողարկում է մարդկային զգացմունքների բուն կիրքն ու խորությունը», - հայտարարում էր El Periodico-ն: Եվ նույն ոգով շարունակում. «Կատալոնյան գրականության արժանի համալրում»: «Անմոռանալի»: «Վարպետության գլուխգործոց»:

Բոլոր թերթերից կտրած էջերը պահում էր աչքի լույսի պես՝ ինքն իրեն հիշեցնելու, որ երազ չէ: Երբ քաղաքի ամենախոշոր թանգարանի պատշգամբում ստացավ «Տոգեֆ Փլան», իր կյանքի ամենահիշարժան երեկներից մեկին, մի պահ մտածեց ամուսնու մասին: Մի նոր միտք առկայծեց գլխում: Իսկ գուցե այս ամենը նրա մեծ ծրագրի մի մա՛սն էր: Գուցե նա ցավով գիտակցել էր, որ փչացրել է մի կնոջ կյանքը, որն այնքա՛ն անձնվեր սիրել էր իրեն, ամբողջ կյանքը նվիրել իրենց ամուսնությունը պահպանելուն: Գուցե, մինչ գրում էր գիրքը, որ խուսափի կյանքի միապաղաղությունից, ի սկզբանե մտադրվել էր այն իր մահվան առթիվ ընծայել կնոջը՝ որպես վերջին նվեր: Այո, գիտեր, իհարկե գիտեր, որ կգտնի ու կյուրացնի: Նույնիսկ, ասում էր հիմա ինքն իրեն, հավանաբար հույս էր ունեցել, որ գիրքը կնոջը կստիպի սկսել գրել: Մտադիր էր զարգացնել կնոջ գրողական տաղանդը, որի գոյության մասին նա գաղափար չուներ:

Վերադառնալով տուն, բարձրանալով ձեղնահարկ, արդեն կարծես միլիոներորդ անգամ, Նուրիան մանրամասն աչքի անցկացրեց ամեն ինչ՝

հուսալով ևս մի ձեռագիր գտնել: Կամ գոնե գրառումներ նոր պատմության համար: Դրա փոխարեն գտավ միայն լեհ կնոջ ուրիշ լուսանկարներ, այս անգամ անապատում աճող բույսերի մասին գրքի մեջ խցկած: Մինչև այդ բոլոր որոնումներն ուղեկցվում էին դառնությամբ: Հիմա, դրանից ազատվելով, տեսնում էր, որ կինը գեղեցիկ է: Չարմանալի չէ, որ սիրահարվել էր. նիհարիկ դեմքի ճենապակե մաշկը, խոշոր աչքերը, ուսերին թափվող ուղիղ շեկ մազերը և ամենազայթակղիչ շուրթերը: Կարծես սիրում էր կախել շրթունքը, որից դեմքին հեզնական ժպիտ էր հայտնվում, ներքին վստահության արտահայտություն, որը Նուրիային հասանելի չէր նույնիսկ երազներում: Առաջին անգամ խղճաց ամուսնուն՝ կյանքը սխալ կնոջ հետ անցկացնելու համար:

Ձեղնահարկում, տարբեր հատորների մեջ էլի ու էլի լուսանկարներ, էջանիշներ գտավ ու մտածեց, որ, բացի գեղեցիկ լինելուց, այս լեհուհին պետք է որ նաև դաժան եղած լինի. ինչպե՞ս է իր իշխանությունը հաստատել ուրիշի վրա: Ուրիշ էլ ինչո՞ւ պիտի տարիներ շարունակ ամեն ամիս իր լուսանկարներն ուղարկեր: Ուրիշ էլ ինչպե՞ս բացատրել, եթե ոչ, որ ամեն ինչ անում էր, որ տղամարդը երբեք չկարողանա մոռանալ իրեն ու շարժվել առաջ: Հատկապես (ինչի մասին վկայում էին վերջին շրջանի լուսանկարները, որտեղ նա շրջապատված էր սիրող երեխաներով ու թոռներով) որ լիարժեք կյանք էր ապրել:

Երբ գործակալը հայտնեց, որ Penguin հրատարակչությունն առաջարկել էր գնել անգլերեն թարգմանության իրավունքը, ականջներին չէր հավատում. ի՞նչ հրաշալի ու բացառիկ ժառանգություն էր թողել ամուսինը ձեղնահարկի այդ անջատ-անջատ թղթերում: Նույնիսկ երբ գործակալը մի քանի փորձնական անգլերեն վերնագիր թվարկեց (փոխանցելով հրատարակչության ոգևորված խմբագիրների առաջարկները), գլխում միայն մի միտք էր պտտվում. այո, ամուսինն իսկապես սիրել էր, իրեն հատուկ ձևով: Մի՞թե դա էլ, ի վերջո, հարազատին սիրելու կարողություն չէ: Գուցե նա սիրել է, եկեք ճիշտը խոսենք, մինչև ինչ-որ աստիճան, որը միգուցե և ցածր էր, բայց նրա համար՝ առավելագույն: Երևի հասկացել էր, թե որքան է ցավեցրել կնոջը՝ վերաբերվելով համարյա այնպես, ինչպես սպասուհու:

Գուցե նրա համար ավելի հեշտ էր իր մահից հետո քավել մեղքը: Երկարուծիգ ժամեր էր անցկացրել ձեռնահարկում փակված, վեպը գրելով, որ կնոջը մի փոքր սևոտկ ոսկի թողնի: Հենց դա է պատճառը, որ երբ նրան հայտնաբերեցին լոգարանում, սրտի կաթվածից մահացած, դեմքին թույլ ժպիտ էր ուրվագծվել:

Հաջորդ հանդիպմանը գործակալը հուզված հայտնեց լուրը, որ ֆրանսերեն թարգմանության իրավունքը ձեռք էր բերել ոչ այլ ոք, եթե ոչ հենց Gallimard-ը: Լուրը կարծես աննկատ մնաց. կնոջը հետաքրքրում էր միայն, որ գիրքը հրատարակվի Լեհաստանում: Եվ դա հենց այնպես, մշուշոտ ցանկություն չէր: Ուզում էր և վերջ: Իրականում նա անդրդվելի էր: Գործակալը, մի քիչ նեղված, որ հաճախորդն առանձնապես ոգևորված չէ Gallimard-ի գործարքով, պատասխանեց, որ Լեհաստանը խնդիր չի լինի:

Եվ իսկապես խնդիր չեղավ. ամիսներ անց թարգմանությունը պատրաստ էր, և Վարշավայից մի հրատարակիչ գնեց լեհերենի իրավունքը: Այս անգամ, երբ գործակալը հայտնեց լուրը, Նուրիա Անջելս Բարրերան չհիասթափվեց: Նա ավելի քան հուզված էր: Այդ երեկո, ձեռնահարկում, փորփրեց կանաչ ծրարները և շտապ գրի առավ քաղաքի անունը, որտեղ ապրում էր առեղծվածային լեհուհին:

- Նա պնդում է, որ գրքի շնորհանդեսը կայանա Լուբլինում,- ասաց գործակալը լեհ հրատարակչին:- Մի՛ հարցրո՛ ինչու Լուբլինում: Ես էլ քեզ նման ոչինչ չգիտեմ: Ուղղակի արի անենք նրա ուզածով:

Մի խոսքով, քաղաքի գլխավոր գրախանութում շնորհանդեսը հավուր պատշաճի ծրագրվեց ու գովազդվեց: Շնորհանդեսի օրը նա իրեն թույլ տվեց վաթսուն զլոտի արժողությամբ սանրվածք և հմուտ դիմահարդարում: Գովազդն արդյունավետ էր եղել. դրսում կարգին հերթ էր գոյացել, և անշուշտ, հենց որ Նուրիան սկսեց մակագրել գրքի օրինակները, հերթում նկատեց նրան: Լուսանկարների կինն էր, կասկած չկար: Փոքր-ինչ մեծացած, բայց լիովին ճանաչելի: Այդ պահին Նուրիան իրեն ճնշված երեխա զգաց, որը մի ամբողջ տարի դպրոցի բռնակալից ծաղրի ենթարկվելուց հետո վայելում է բարեհաճ կարմայի սպասված գալուստը, որը բռնակալին ստիպում է իրեն կարգին պահել: Նուրիան որոշեց, որ մի քիչ էլ կսպասեց-

նի նրան. թող կանգնի այնտեղ՝ կրծքին սեղմած, ամենայն հավանականությամբ, «Դուայ Տրեբաչեի» օրինակը: Միտումնավոր ձգձգելով ժամանող երկրպագուների հետ զրույցները՝ Նուրիան ձևացնում էր, թե անհոգ է ու կենսուրախ և նույնիսկ հանպատրաստից ինքնաբուխ ոլորագծեր ավելացրեց ստորագրությանը՝ այն եզերելով ձեռքով սկարված շեփորներով: Երկրպագուների հետ էլ շփվում էր ինչպես երբեք, զրուցում տարբեր բաներից. ինչ գրքեր են սիրում կարդալ, երեխաներ ունեն, թե ոչ, որտեղ են սովորել, ինչ գործով են զբաղվում, ինչ նպատակներ ունեն: Ինչ-որ տեղ կարդացել էր, որ կյանքում երբեմն մենք աղավախներն ենք, երբեմն՝ արծա՛նը: Հիմա նա աղավախն էր, ու ամեն կերպ կփորձեր պահպանել այդ նոր կարգավիճակը:

Հետո պատահեց անսպասելին: Վերջապես հերթը հասավ կնոջը, ու Նուրիան տեսավ. նրա ձեռքին ոչ թե գրքի օրինակ էր, այլ մեծ ու հաստ ծրար, որը դրեց գրասեղանին՝ իրենց արանքում:

- Մտածեցի՞ զուցե ցանկանաք տեսնել բնօրինակը,- ասաց նա մանրամասն հղկված անգլերենով:- Մա այն տարբերակն է, որ ձեր ամուսինն ինձ համար թարգմանել էր կատալոներեն: Մտածում էի՝ նրան երբեք դուր չի գա, ուստի ուրախ եմ, որ սխալվել եմ: Սիրտս կտոր-կտոր է լինում, որ այդպես էլ չկարողացա հրաժեշտ տալ նրան:

Ապա դանդաղ ու վճռական դուրս եկավ. այդ օրը Նուրիա Անջելս Բարրերան այլևս ստորագրությունը չզարդարեց շեփորներով:

ՎԵՐՁԵՐԳ

Շրջապատված սիրուիկներով՝ միահյուսված ոտնաթաթերով ու ջերմ ձեռքերով, հանկարծ մտածեց, որ այլևս չկա մեկը, որի կողքին կցանկանար լինել: Այդ օրն ամեն ինչ սկսվեց կատակի պես. աղջիկը նրան թեյ ու իր սիրած թխվածքաբլիթները բերեց, ինչպես միշտ էր անում, ինքն էլ նրան հարցրեց, թե այդ գիշեր սիրելին ուր տանի նրան. Վալենտինի օրն էր: Ա՛խ, հա՛, սովորականի պես՝ կինոթատրոն, ինչ-որ ռոմանտիկ ֆիլմ դիտելու. ևս պատասխանեց ժպիտով, որը դեմքին հայտնվում էր ամեն անգամ, երբ երագում էր ավելի լավ կյանքի մասին: Եվ առանց խոսքի արագ առցանց երկու տոմս գնեց, ու միասին գնացին: Բայց ֆիլմի կեսից, երբ վերջաբանն արդեն կանխատեսելի էր դառնում, հանկարծ մտածեց. եթե կյանքն ընթանար սովորական հունով, մի օր ստիպված կլիներ նայել, թե նրան ինչպես են պարաններով գերեզման իջեցնում: Եվ այդ պահին հասկացավ, թե կինոթատրոնում վրա հասած այդ պահը քանի՛ անգամ կհետապնդի իրեն՝ քերծելով դատարկ տան պատերը, որոնք կինը մի օր անխուսափելիորեն կլքի: Չէ, չէր ուզում ևս մի հմայիչ լուսանկար ավելացնել հիշողությունների խառնարանին:

Ու երբ շագանակագույն վերարկուի գրպանից մի փաթեթ կոնֆետ հանեց ու աշխույժ շնչաքա՜ թե, տե՛ս, ինչ եմ բերել, ասաց, որ անհարմար վիճակի մեջ է դնում իրեն: Հետո էլ բողոքեց, թե աղջիկը չափից շատ օժանելիք է օգտագործում, ու դրանից իր գլուխը ցավում է, ու հաստատ ամբողջ գիշեր կփռշտա: Ավելի ուշ, մեքենայի մեջ, ևս լուռ էր ու այդպես էլ չհարցրեց՝ կուզե՞ր կանգ առնել՝ հարած սերուցքով տաք շոկոլադ խմելու, որ աղջիկը շատ էր սիրում: Դրա փոխարեն մեքենայով հասցրեց տուն, մշտական գնով՝ ժամում հիսուն, առանց խոսքի: Ու գնաց քնելու՝ մտածելով, որ ազատվեց մոր մահից հետո իրեն տանջող ևս մի գեղեցիկ հիշողությունից:

ԲՈՎԱՆՈՒԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան.....	7
Արդուկի սեղանը Il-mejda tal-mogħdija	9
Այցի գնացի նրան, հայրի՛կ Mort naraha, pa.....	15
Ագռավը I.-awlun	23
Դեսպանը L-ambaxxatrici	39
Նրա բույրը Riħitu	56
Ուզում եմ ձայն տալ Սամիրային Nixtieq ngħajjat lil Samirah.....	62
Coup d'etat Kolp ta' stat.....	70
Օտարուհին Il-barranija.....	91
Ռուբիկի խորանարդով աղջիկը Il-kubu ta' Rubik.....	101
Թութակի ծիչը L-għajta tal-pappagall.....	108

Նռան տունը	
Dar ir-Rummien	114
Քո վերջին ամառը, Էմի	
L-aħħar sajf tiegħek, Amy.....	122
Նուրիա Անջելա Բարրերա	
Nuria Angels Barrera	134
Վերջերգ	143

Պիեռ Զ. ՄԵՅԼԱԿ

ԲԱՐԻ ԳԻՇԵՐ ՄԱՂԹԵԼՈՎ

Պատմվածքներ

Թարգմանություններն անգլերեն տարբերակից՝
Աստղիկ ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Հրատ. խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ս. Արիստակեսյան
Էջադրումը՝ Հ. Փիլոյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Սարգսյանի

Թուղթը՝ օֆսեթ 60x84 1/16: Ծավալը՝ 9,5 տպ. մամուլ:

Տպագրվել է «Էդիթ Պրինտ» ՍՊԸ տպագրատանը:

EDIT PRINT
43 D. Malyan str., Yerevan
Tel.: (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am



ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
Երևան, Դ. Մալյան 43
հեռ.՝ (374 10) 520 848
www.editprint.am
info@editprint.am

«ԳԵՂԱՐՈՒ» ԽԱՆՈՒՆԱԶԱՐՈՎ ԼՈՅՍ ԵՆ ՄԵՆԵԼ

- Թատերախաղեր արևմտյան գրականությունից – 2010
- Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շայունը» (բանաստեղծություններ) – 2011
- Միխայիլ Բախտին. «Դոստոևսկու պոետիկայի խնդիրները» – 2012
- «Սիրիուսի սրնգահարները» (Վ. Խլեբնիկով, Ն. Գումիլյով, Վ. Խոդասևիչ), (բանաստեղծություններ) – 2012
- Սերգեյ Դովլատով. «Միայնակների երթը» (պատմվածքներ) – 2012
- Յուրի Լոտման. «Միֆ. Անուն. Մշակույթ» – 2012
- Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ» – 2012
- Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը» (հեքիաթ-վիպակ) – 2013
- Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» – 2014
- Ռուս կոնցեպտուալ պոեզիա (Դ. Պրիգով, Վ. Նեկրասով, Լ. Ռոբինշտեյն) – 2014
- Հենրիխ Սապգիր. «Ջուգահեռ մարդը» (բանաստեղծություններ) – 2014
- Վասիլի Գրոսման. «Կյանք և ճակատագիր» (վեպ 2 գրքով) – 2014
- «Կամուրջների խռովությունը. մետաֆորիստներ» (բանաստեղծությունների անթոլոգիա) – 2015
- Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը» (պատմվածքներ) – 2015
- Անդրեյ Պլատոնով. «Չեննգուր. Գուրը. Պատմվածքներ» – 2015
- Արդի ռուսական վերլիբր (բանաստեղծությունների անթոլոգիա) – 2015
- Զինաստանի մշակույթի քրեստոմատիա – 2015
- Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» (բանաստեղծություններ) – 2015
- Սա Քայ. «Սրտի արձագանքներ» (բանաստեղծություններ) – 2015
- Եվգենի Վոդյալով. «Լավը» (վեպ) – 2015
- Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» (բանաստեղծություններ) – 2015

Ռուս այլախոհական պոեզիա (բանաստեղծությունների
անթոլոգիա)– 2015

Չինական մտքի և մշակույթի հիմնական հասկացություններ
(հատորներ 1-9) – 2016-2021

Յու Ջիան. «Անձրևից պատսպարվող թռչունը»
(բանաստեղծություններ) – 2016

Պավել Բասինսկի. «Լև Տոլստոյ. Փախուստ դրախտից»
(վավերագրական վեպ) – 2016

Զժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» (բանաստեղծություններ) – 2016

Վան Զենչևի. «Երիտասարդ վանականի սիրո պատմությունը» – 2016

Լյուդմիլա Պետրուշևսկայա. «Սեր. Երջանկություն. Ռեքվիեմ»
(պատմվածքներ)– 2016

Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» (վեպ) – 2016

«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(բանաստեղծությունների անթոլոգիա) – 2016

Ռուս մինիմալիստներ (բանաստեղծությունների անթոլոգիա) – 2016

Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, բուդդայականությունը,
դաոսիզմը,

քրիստոնեությունը և չինական մշակույթը» – 2016

Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» (վեպ) – 2016

Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» (ազգագրություն) – 2017

Դոնգ Քիանգ. «Կացարաններ» (ազգագրություն) – 2017

Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» (պատմվածքներ
և բանաստեղծություններ) – 2017

Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչև Մայակովսկի»
(բանաստեղծություններ)– 2017

Անդրեյ Վոլու. «Վերադարձ Փանջիռուդ» (վեպ) – 2017

Դոնգ Քիանգ. «Թաղում» (ազգագրություն) – 2017

Դոնգ Քիանգ. «Փառատոներ» (ազգագրություն) – 2017

- Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» (ազգագրություն) – 2017
- Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ նախագծերի»
(գրականագիտություն)– 2017
- Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ»
(գրականագիտություն) – 2017
- Ֆյոդոր Սոլոգուբ. «Չնչադևը» (վեպ) – 2018
- Ու Չուն. «Չինական մշակույթ. Փիլիսոփայություն» – 2018
- Մարտիրոս Ոբն. «Մոմերն իզուր են այրվել մեղքերիս համար»
(վիպակ) –2018
- Ս. Ուեյսին, Ճ. Սյուն.«Չինաստանի յուրահատկությունները:
Չինաստանի համաշխարհային ժառանգությունը» – 2018
- «Աղի ձայնը» (20-րդ դարի հետախույզական թվականների սերնդի
չին գրողների պատմվածքներ) – 2019
- 20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) – 2019
- Գվինեթ Լյուիս. «Քառսի հրեշտակները»
(բանաստեղծություններ) – 2020
- Պավել Բասինսկի. «Լև Տոլստոյ. Ազատ մարդը»
(վավերագրական վեպ) – 2020
- Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» (տիբեթյան պատմվածքներ) – 2020
- Չժան Յավեն. «Դարերի կանչը. Մոռումներ Հոնկոնգի մասին» – 2020
- Կոնֆուցիոս. «Զրույցներ» – 2020
- Մարիա Գրեչ Գանադո. «Երիզվածք» (բանաստեղծություններ) – 2021
- Էլիզաբեթ Քրիստին Յոկուլսոտի. «Մեր, նյարդերի քայքայում.
Ոչ մի պար Ձուկ-քարի վրա» (բանաստեղծություններ) – 2021
- Ալեքսեյ Վառլամով. «Մտագայլը» (վեպ) – 2021
- Միխայ Այվազ. «Այլ քաղաք» (վեպ) – 2021
- Իմանուել Միֆսուդ. «Յուտա Հայն» (վեպ) – 2021
- Խոսեբա Սարիոնանդիա. «Բանտեր և աքսորներ»
(բանաստեղծություններ) – 2022

Չինական ավանդական բժշկության հիմնական հասկացությունների
հանրագիտարան (հատորներ 1-2) – 2022

Նիկոլա Դուրետիչ. «Մահվան և անհետացման ժամանակագրությունը»
(պատմվածքներ) – 2022

Սլավենկա Դրակուլիչ. «Ֆրիդա կամ ցավի մասին» (վեպ) – 2022

Սիգիզմունդ Կրժիժանովսկի. «Հիշողություններ ապագայի մասին»
(երեք վիպակ) – 2022

Եվգենի Վոդյազկին. «Կղզու արդարացումը» (վեպ) – 2022

Թրևոր Զահրա. «Երեկոյան ժամերգություն» (պատմվածքներ) – 2023

Լեոնիդ Յուզեֆովիչ. Հելլենասերը (ոչ պատմական վեպ) – 2023



Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

www.vogi-nairi.am

Էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru

հեռ.: +374 97252323, +374 94259161